

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ



ԹԱԼԻՆ 2026

Փաստաթուղթը մշակվել է «Ներսուս ինթելեկտ հետազոտական» ՀԿ և «Մքայ Նեթ» ՍՊԸ փորձագետների կողմից Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության շրջակա միջավայրի, կլիմայական գործողությունների, բնության պահպանության և միջուկային անվտանգության նախարարության (BMUKN) կողմից համաֆինանսավորվող և ԳՄՀԸ (GIZ) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից համատեղ իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում դեկարբոնիզացում և կլիմայական պայմաններին դիմացկունություն» (EU4ClimateResilience) տարածաշրջանային Օրագրի շրջանակում:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1, Հեռ. 060-75-77-87
Էլ. փոստ talinihamaynzogapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 28 >> ապրիլի 2023 թվական N 52-Ա

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ
ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԱՆԱԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը (այսուհետ՝ նախաձեռնություն) միանալու մասին հայտարարությունը և առաջնորդվելով Եվրոպական միության կողմից իրականացվող նախաձեռնության դրույթներով՝

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

- 1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքին միանալու Եվրոպական միության կողմից իրականացվող նախաձեռնությանը:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքի ղեկավարին՝
 - 1)Մինչև 2023թ. մայիսի 11-ը նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրի մշակման պատասխանատու (այսուհետ՝ պատասխանատու)՝ էներգետիկ կառավարիչ,
 - 2)Հանձնարարել պատասխանատուին՝ երկու տարվա ընթացքում Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր Արևելք» տարածաշրջանային ծրագրի և այլ գործընկերների աջակցությամբ, Դաշնագրի շրջանակներում մշակել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիրը (Sustainable Energy and Climate Action Plan), ինչպես նաև համայնքի կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունները և միջոցառումները:
- 3.Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-3
1.Բաբկեն Պողոսյան		1.Կարեն Գրիգորյան
2.Արման Կարապետյան		2.Վահե Եղիազարյան
3.Սարգիս Գրիգորյան		3.Գևորգ Սահակյան

- 4.Սևակ Սիմոնյան
- 5.Գեղամ Ղազարյան
- 6.Սերգե Մկրտչյան
- 7.Մհեր Մարգարյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան
- 10.Էմին Մկրտչյան
- 11.Արմեն Ծառուկյան
- 12.Նելլի Մարգարյան
- 13.Գեղամ Սարգսյան
- 14.Նարեկ Գրիգորյան
- 15.Սարգիս Մուրադյան
- 16.Ղուկաս Հակոբյան
- 17.Ալբերտ Հարոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Տ.ՍԱՓԵՅԱՆ

թ.Թալին
28 ապրիլի 2023թ.

Բովանդակություն

Ներածություն	9
Կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր	9
Թալին համայնքի անդամակցությունը Դաշնագրին	10
Գլուխ 1. Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի մշակման հիմքերը	12
1.2. Ծրագրի մշակման իրավական և մեթոդական հիմքերը	13
1.3. Ծրագրի իրականացման հնարավոր ֆինանսավորման տարբերակները.....	14
1.4. Ծրագրի իրականացման ընթացքի մշտադիտարկումը	19
Գլուխ 2. Թալին համայնքի հակիրճ նկարագիրը	20
2.1. Աշխարհագրական դիրք	20
2.2. Բնակչություն.....	21
2.3. Տնտեսություն.....	22
2.4. Կլիմա.....	30
2.5. Կրթություն և մշակույթ.....	31
2.6. Բնակելի Ֆոնդ	31
2.7. Ենթակառուցվածք.....	32
2.8. Տեղական ինքնակառավարման մարմին	33
Գլուխ 4. Համայնքապատկան կառույցների էներգասպառումը	44
4.1. Էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառումը բյուջետային հաստատություններում	44
Գլուխ 5. Բնակելի և հասարակական հատվածի էներգասպառումը	52
5.1. Բնակչության և հասարակական օբյեկտների կողմից Էլեկտրաէներգիայի սպառումը	52
Գլուխ 6. Տրանսպորտային սեկտորի էներգասպառումը	54
6.1. Համայնքային տրանսպորտային միջոցների էներգասպառումը:	54
6.2. Մասնավոր և առևտրային տրանսպորտի էներգասպառումը	56
Գլուխ 7. Փողոցային լուսավորության համակարգը	58
Գլուխ 8. Կենցաղային թափոնների հավաքը և պահեստավորումը	62
Գլուխ 9. ՋԳ արտանետումների ելակետային կադաստրի մշակումը	63
9.1. Ջերմոցային գազերի արտանետումների հիմնական աղբյուրները.....	64
9.2. ՋԳ արտանետումների ելակետային կադաստրը.....	66
9.3. Մինչև 2030թ. ՋԳ արտանետումների կրճատման թիրախային ծավալը	69
Գլուխ 10. Կլիմայի փոփոխության մեղման գործողություններ	72
Գլուխ 11. ՋԳ արտանետումների նվազեցմանն ուղղված ներդրումային «կոշտ» միջոցառումներ	73

11.1. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ	75
11.2. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ	83
11.3. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲՆԱԿԵԼԻ ՍԵԿՏՈՐՈՒՄ	83
11.4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՍԵԿՏՈՐՈՒՄ	86
11.5. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	87
11.6 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿՈՇՏ ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	88
11.7. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ	89

Գլուխ 12. ՁԳ արտանետումների նվազեցմանն ուղղված ներդրումային «փափուկ» միջոցառումներ	90
---	-----------

Գլուխ 13. ՁԳ արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումների ամփոփում	93
---	-----------

Գլուխ 14. Թալին համայնքի խոցելիության գնահատումը կլիմայի փոփոխության նկատմամբ և հարմարվողականության միջոցառումները	101
---	------------

14.1. Կլիմայի փոփոխությունը և Դաշնագիրը	101
14.2. Հայաստանի քաղաքականությունը կլիմայի փոփոխության բնագավառում	101
14.3. Թալին համայնքի կլիմայական պայմանները	102
14.4. Կլիմայի փոփոխությունը Թալինում	108
14.4.1 Կլիմայի դիտարկվող փոփոխությունը Թալինում	108
14.4.2 Թալին համայնքի հիմնական կլիմայական վտանգները և ռիսկի գնահատումը	113
14.5. Թալին կլիմայական ռիսկերի տեղական ընկալումները	115
14.6. Խոցելիության ոլորտային վերլուծությունը	116
14.7. Բնակչության խոցելի խմբեր	120
14.8. Թալինի հարմարվողականության ծրագիրն և միջոցառումները	121

Հավելվածներ

Հավելված 1	2
Հավելված 2. Թալին համայնքում հիմնական ոլորտների հնարավոր խոցելիությունը՝ ընտրված կլիմայական վտանգներից, և խոցելի խմբերը	1
Հավելված 3. Թալին համայնքի հարմարվողականության միջոցառումները	9
Հավելված 4	18

Աղյուսակներ

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Աղյուսակ 1. Թալին համայնքի ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշները 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ.....	21
Աղյուսակ 2. Հողօգտագործման և գյուղատնտեսության ցուցանիշները 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ.....	22
Աղյուսակ 3. Թալին համայնքում գործող հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները.....	24
Աղյուսակ 4. Համայնքի կլիմայական բնութագիրը.....	30
Աղյուսակ 5. Մշակութային, կրթական և մարզական հաստատությունները 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ.....	31
Աղյուսակ 6. Համայնքի բնակելի ենթակառուցվածքի բնութագիրը.....	32
Աղյուսակ 7. Ենթակառուցվածքների համառոտ նկարագիրը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ.....	32
Աղյուսակ 8. Համայնքային բյուջեի եկամուտները. պլանավորված և փաստացի (հազ. դրամ, 2025 թ.).....	34
Աղյուսակ 9. Համայնքի վարչական բյուջեի ծախսերը (հազ. դրամ).....	34
Աղյուսակ 10. Համայնքի կապիտալ բյուջեի ծախսերը (հազ. դրամ).....	35
Աղյուսակ 11. Տեղական ինքնակառավարման աշխատակազմի և բյուջետային ցուցանիշները.....	35
Աղյուսակ 12. Թալին համայնքի 2023-2024 թթ. ընդհանուր էներգասպառումը ըստ էներգակիրների և ուղղությունների.....	39
Աղյուսակ 13. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները (ՀՀ ՀԾԿՀ-ի 29.12.2021թ. N478-Ն որոշում՝ փոփոխված ՀՀ ՀԾԿՀ 30.12.2024թ. N450-Ն որոշմամբ, սակագներն ուժի մեջ են մտել 2022թ. փետրվարի 1-ից, բացառությամբ աղյուսակի).....	40
Աղյուսակ 14. Գազայրում Արմենիա ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները (ՀՀ ՀԾԿՀ-ի 01.03.2022թ. N83-Ն որոշում՝ փոփոխվել է ՀՀ ՀԾԿՀ 30.12.2024թ. N451-Ն որոշմամբ).....	42
Աղյուսակ 15. Էներգիայի փոխակերպման գործակիցները և ցուցանիշները.....	43
Աղյուսակ 16. Համայնքային ֆինանսավորման հաստատությունների կողմից էլեկտրական էներգիայի և բնական գազի տարեկան սպառման ցուցանիշներ.....	45
Աղյուսակ 17. 2023-2024թթ. էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը.....	52
Աղյուսակ 18. Բնակչության կողմից բնական գազի սպառում.....	53
Աղյուսակ 19. Համայնքային տրանսպորտի կազմը և շահագործման ցուցանիշները.....	55
Աղյուսակ 20. Համայնքային տրանսպորտի էներգասպառման կառուցվածքը.....	56
Աղյուսակ 21. Մասնավոր և առևտրային տրանսպորտի շարժակազմի բնութագրերը.....	57
Աղյուսակ 22. Մասնավոր և առևտրային տրանսպորտի շարժակազմի բնութագրերը ըստ վառելիքի տեսակի.....	58
Աղյուսակ 23. Թալին համայնքում փողոցային լուսավորության սպառման ցուցանիշները.....	59
Աղյուսակ 24. Թալին քաղաքի համայնքի փողոցային լուսավորության համակարգի տեխնիկական ցուցանիշները.....	60
Աղյուսակ 25. Թալին համայնքի գյուղական բնակավայրերի փողոցային լուսավորության համակարգի տեխնիկական ցուցանիշները.....	61
Աղյուսակ 26. Ջերմոցային զազերի արտանետումները գնահատելու նպատակով՝ CO ₂ արտանետումների գործակիցներ.....	65
Աղյուսակ 27. Էներգակիրների սպառման ծավալները ելակետային 2023թ. -ի համար.....	66
Աղյուսակ 28. Թալին համայնքի ԱԵԿ. ՋԳ արտանետումների ծավալները ելակետային տարում՝ 2023թ.....	68
Աղյուսակ 29. Թալին համայնքում էներգակիրների սպառման ցուցանիշները էներգետիկական միավորներով (ՄՎտԺ-երով) և ՋԳ արտանետումների ծավալները.....	70
Աղյուսակ 30. ՋԳ արտանետումները 2023թ. և 2030թ.՝ ըստ թիրախային բնագավառների.....	94
Աղյուսակ 31. Մեղման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումները և ՋԳ արտանետումների տեսակարար արժեքները.....	96
Աղյուսակ 32. Արագածոտնի մարզի Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ով նախատեսվող ծախսատար միջոցառումների ամփոփիչ աղյուսակ.....	98

Աղյուսակ 33. Թալինի եղանակն ըստ ամիսների (°C).....	103
Աղյուսակ 34. Թալին համայնքի ամսական կլիմայական ցուցանիշները	106
Աղյուսակ 35. Թալինում ամսական տեղումների օրերի միջին քանակը.....	109
Աղյուսակ 36. Ծայրահեղ եղանակային իրադարձություններ հաճախականությունը Թալին համայնքում	110
Աղյուսակ 37. Կլիմայական ռիսկի գնահատականը կարճաժամկետ հատվածում.....	112
Աղյուսակ 38. Կլիմայական ռիսկի գնահատականը միջնաժամկետ հատվածում	112
Աղյուսակ 39. Կլիմայական ռիսկի գնահատականը երկարաժամկետ հատվածում.....	113
Աղյուսակ 40. Ներկայումս համայնքի համար կլիմայական վտանգները	114
Աղյուսակ 41. Համեմատական խոցելիության աղյուսակ.....	119

Գծապատկերներ

Գծապատկեր 1. Թալին համայնքի էներգետիկ ծախսերը, 2023.....	37
Գծապատկեր 2. Թալին համայնքում էներգակիրների սպառման կառուցվածքը էլակետային տարում	38
Գծապատկեր 3. Համայնքապատկան հաստատությունների էներգասպառումը 2023-2024թթ.	44
Գծապատկեր 4. Բնական գազի սպառումը համայնքային հաստատություններում	51
Գծապատկեր 5. Բնակելի և հասարակական հատվածի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը.....	53
Գծապատկեր 6. Մասնավոր և առևտրային տրանսպորտի շարժակազմի ընդհանուր բնութագիրը	58
Գծապատկեր 7. Թալին համայնքում 2023թ. էներգակիրների սպառման ցուցանիշները ըստ ոլորտների	67
Գծապատկեր 8. Հիմնական բնագավառների մասնաբաժինը ԱԵԿ-ում՝ 2023թ	94
Գծապատկեր 9. Հիմնական բնագավառների մասնաբաժինը ՋԳ կրճատումում՝ 2030թ.....	95
Գծապատկեր 10. Ելակետային և թիրախային տարիներին հիմնական բնագավառներում էներգասպառման համեմատությունը (ՄՎտժ/տարի).....	95
Գծապատկեր 11. Ելակետային և թիրախային արտանետումների համեմատությունը (տCO2/տ)	96
Գծապատկեր 12. Ամսական միջին ջերմաստիճանը և տեղումները Թալինում.....	104
Գծապատկեր 13. Միջին ամսական ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները Թալինում.....	105
Գծապատկեր 14. Քամու միջին արագությունը Թալինում.....	107
Գծապատկեր 15. Քամու ուղղությունը Թալինում.....	107
Գծապատկեր 16. Տարեկան միջին օդի ջերմաստիճանը Արագածոտնի մարզում.....	108

Օգտագործված հապավումների ցանկ

Հապավում	Բացատրություն
ԱԳԼՃԿ	Ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշակային կայան
ԱԵԿ	Ջերմոցային գազերի արտանետումների էլակետային (բազային) կադաստր
ԱԿԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՏ	Առանձնատուն
ԲԲՇ	Բազմաբնակարան շենք
ԳԳՄ	Գազաֆիկացման և գազամատակարարման մասնաձյուղ
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՄ	Եվրոպական միություն
ԷՎԱ	Էներգիայի վերականգնվող աղբյուրներ
ԿԷԶԿԳԾ	Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի գործողությունների ծրագիր
ԿՓՓՄԽ	Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբ
ԼԴԼ	Լուսադիոդային լամպեր (LED լամպեր)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԳ	Հեղուկացված նավթային գազ
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄՊՄԿ	Մանկապատանեկական ստեղծագործական կենտրոն
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն
ՊԲ	Պետական բյուջե (ներառյալ սուբվենցիոն ծրագրերը)
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՏ	Տնային տնտեսություն
ԶԳ	Զերմոցային գազեր
ՄԲԳ	Մեղմված բնական գազ
ՄՊԸ	Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՀՀ ՎԷԷՀ	Հայաստանի Հանրապետության վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամ (R2E2)
ՀԷԿ	Հիդրավլիկական էլեկտրական կայան
ՌԻԳ	Կլիմայական ռիսկերի և խոցելիության գնահատում
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՔԴ	Քաղաքապետերի դաշնագիր
ՀՊ	Համայնքապետարան
ՖՎ	Ֆոտովոլտային (փոխակերպում, մոդուլ, մարտկոց և այլն)

Օգտագործված մեծությունների չափման միավորներ

կՎտժ	Կիլովատժամ, 1 կՎտժ = 3 600 կՋ
ՄՎտժ	Մեգավատժամ, 1 ՄՎտժ = 1 000 կՎտժ
ՄՎտժ(գ)	Մեգավատժամ (բնական գազ)
ՄՎտժ(է)	Մեգավատժամ (էլեկտրաէներգիա)
ԳՎտժ	Գիգավատժամ, 1 ԳՎտժ = 1 000 ՄՎտժ = 1 000 000 կՎտժ
կկալ	Կիլոկալորիա, 1 կկալ = 1/860 կՎտժ = 4.1868 կՋ
հա	Հեկտար, 1 հա = 10 000 մ ² = 100 ար
հՊա	Հեկտապասկալ, 1 հՊա = 100 Պա = 9.81 մմ ջ.ս. = 0.721 մմ ս.ս.
մ ³	Ստանդարտ խորանարդ մետր
տ CO ₂	Տոննա ածխաթթու գազ

Ներածություն

«Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությունը համայնքահեն լայնածավալ շարժում է, որը միավորում է տեղական ինքնակառավարման մարմիններն ու տարածքային կառավարման իշխանությունները, որոնք կամավոր կերպով ստանձնում են ԵՄ-ի կողմից սահմանված կլիմայական և էներգետիկ նպատակների իրականացումը: Նախաձեռնությունը գործարկվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից 2008 թվականին՝ նպատակ ունենալով խթանել կլիմայական և էներգետիկ թիրախների իրագործումը: Դաշնագրի շրջանակներում համայնքները հանձնառություն են ստանձնում մինչև 2030 թ. CO₂ արտանետումները նվազեցնել առնվազն 40%-ով (Արևելյան գործընկերության երկրների համար՝ 30–35%), իրականացնել կլիմայի փոփոխության հանդեպ հարմարվողականության ծրագրեր և պայքարել էներգետիկ աղքատության դեմ՝ ապահովելով բոլորի համար անվտանգ, կայուն և մատչելի էներգիա:

Թալին համայնքը, միանալով Քաղաքապետերի դաշնագրին, պարտավորվում է մշակել և իրականացնել Կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր (ԿԷԿԳԾ), որը պետք է դառնա համայնքի երկարաժամկետ ռազմավարական փաստաթուղթ: ԿԷԿԳԾ-ն ուղղված է երեք հիմնական նպատակների իրագործմանը.

- ✓ էներգաարդյունավետության մակարդակի բարելավում և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման ընդլայնում,
- ✓ համայնքային տարածքի դեկարբոնիզացիա և ջերմոցային գազերի արտանետումների կրճատում,
- ✓ կլիմայական ռիսկերի հանդեպ համայնքի դիմադրողականության բարձրացում:

Այս փաստաթուղթը մշակվել է Թալին համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության շրջակա միջավայրի, կլիմայական գործողությունների, բնության պահպանության և միջուկային անվտանգության նախարարության (BMUKN) կողմից համաֆինանսավորվող «Արևելյան գործընկերության երկրներում դեկարբոնիզացիա և կլիմայի կայունություն» Ծրագրի շրջանակում և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀՀ/GIZ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) տեխնիկական աջակցությամբ:

Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ն հիմնված է ինչպես ԵՄ և Քաղաքապետերի դաշնագրի մեթոդաբանության վրա, այնպես էլ համայնքի սեփական տվյալների, ազգային ռազմավարական փաստաթղթերի և տեղական մակարդակում անցկացված խորհրդակցությունների արդյունքների վրա:

Կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

ԿԷԿԳԾ՝ Համաձայն Դաշնագրի ընթացակարգերի, ներառում է մի շարք բաղադրիչներ, որոնք կարևոր նշանակություն ունեն արդյունավետ կլիմայական քաղաքականության և գործողությունների պլանավորման համար.

- ✓ Մշակվել և համայնքապետարանին է ներկայացվել հարցաթերթիկ, որի հիման վրա տարբեր ստորաբաժանումներ ներկայացրել են անհրաժեշտ տեղեկությունները: Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի մշակման ընթացքում ապահովվել է մշտական կապ

համայնքի աշխատակազմի հետ, ինչպես նաև կազմակերպվել են ուսուցողական հանդիպումներ՝ ԿԷԿԳԾ-ի տվյալների հավաքագրման և մոնիթորինգի վերաբերյալ:

- ✓ Իրականացվել է համայնքային էներգասպառման նախնական գնահատում, որը ծառայել է որպես ելակետային բազա հետագա չափումների և կրճատումների համար:
- ✓ Ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկը կատարվել է «վերևից ներքև» (top-down assessment) մեթոդով՝ հիմնվելով էներգասպառման տվյալների վրա, ինչը հնարավորություն է տվել համեմատել համայնքի ածխածնային հետքը ելակետային տարում արձանագրված ցուցանիշների հետ:
- ✓ Կատարվել է կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ համայնքի խոցելիության նախնական վերլուծություն, որի արդյունքում նույնականացվել են հիմնական ռիսկերը և հնարավոր հարմարվողական միջոցառումները:
- ✓ Նախանշվել են ջերմոցային գազերի արտանետումների կրճատման և կայուն էներգետիկ թիրախների հասնելու ռազմավարություններ և միջոցառումներ: Դրանք հետագայում կխորացվեն և կհամալրվեն՝ ելնելով համայնքի քաղաքական կամքից, լրացուցիչ տվյալներից և շահառուների ներգրավվածությունից:
- ✓ Մշակվել է իրականացման պլան, որտեղ ներկայացված են միջոցառումների հերթականությունը, պատասխանատու կառույցները և կատարման նախնական ժամկետները:

Փաստաթուղթը նաև ներառում է գործողությունների առաջնային փաթեթ, որոնց միջոցով նախատեսվում է ապահովել ինչպես արտանետումների կրճատում, այնպես էլ համայնքի էներգետիկ ծառայությունների որակի բարձրացում: Նշված միջոցառումները մշակվել են գործընկերների և շահառուների մասնակցությամբ, իսկ դրանց իրականացման ընթացքը նախատեսվում է պարբերաբար վերանայել և հարմարեցնել՝ ելնելով նոր տվյալներից ու տեղական առաջնահերթություններից:

ԿԷԿԳԾ-ն հանդես է գալիս որպես Թալին համայնքի զարգացման ռազմավարական ուղեցույց՝ նպաստելով էներգետիկ կայունությանն ու կլիմայական դիմադրողականությանը և միաժամանակ համահունչ լինելով ՀՀ քաղաքականությանը և միջազգային նախաձեռնություններին:

Թալին համայնքի անդամակցությունը Դաշնագրին

Թալին համայնքը Եվրոպական միության կողմից նախաձեռնված և իրականացվող «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միացել է 2023թ. ապրիլի 28-ին ավագանու թիվ 52-Ա որոշմամբ (Հավելված 1) :

Միանալով Դաշնագրին՝ Թալին համայնքը կամավոր հանձնառություն է ստանձնել.

- ✓ Նշանակել Թալին համայնքի Կայուն էներգետիկ ԿԷԿԳԾ-ի մշակման պատասխանատու էներգետիկ կառավարիչ:
- ✓ Որոշման ուժի մեջ մտնելու պահից երկու տարվա ընթացքում Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» տարածաշրջանային ծրագրի և այլ գործընկերների աջակցությամբ, Դաշնագրի շրջանակներում մշակել

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ը, որում կամփոփվեն մինչև 2030թ. համայնքի թիրախային բնագավառներում ջերմոցային զագերի արտանետումների նվազեցման, ինչպես նաև համայնքի կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունները և միջոցառումները:

Վերջին տարիների ընթացում Թալին համայնքում իրականացված ծրագրերը.

- ✓ Թալին համայնքապետարանի բնապահպանական մասհանումներից կուտակված 5 մլն դրամի շրջանակներում 2025 թվականին Ներքին Սասնաշեն բնակավայրի մանկապարտեզի տանիքին տեղադրվել է 30 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան, ինչպես նաև 24 կՎտ հզորությամբ էլեկտրական կաթսա:
- ✓ 2024 թվականին ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի շրջանակներում և Թալինի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ Արտենի բնակավայրի մշակույթի տան տանիքին տեղադրվել է 10 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան, ինչպես նաև տրամադրվել է 50 LED լամպ:
- ✓ 2024 թվականին Տարածքային զարգացման հիմնադրամի և Թալինի համայնքապետարանի ֆինանսավորմամբ Թալին համայնքի Արագածավան բնակավայրում՝ խորքային պոմպերի տարածքում, տեղադրվել է 250 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան:
- ✓ Բացի վերոնշյալ միջոցառումներից, համայնքում պարբերաբար քննարկվում են կանաչ գոտիների և արհեստական անտառների ստեղծման նախաձեռնությունները, հողի խոնավության պահպանմանն ուղղված լուծումները, ինչպես նաև ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմներն ու դրանց գործնական իրականացման հնարավոր քայլերը:

Գլուխ 1. Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի մշակման հիմքերը

1.1 Գործողությունների ծրագրի նպատակները և դիտարկվող ոլորտները

Թալին համայնքում էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառման խթանման նպատակով Կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագրի (ԿԷԿԳԾ) հիմնական առաքելությունն է սահմանել տնտեսական, տեխնիկական, տեխնոլոգիական, նորարարական և ներդրումային բնույթի երկարաժամկետ միջոցառումների համակարգ: Այս միջոցառումների փուլային և համակարգված իրականացման արդյունքում համայնքը հնարավորություն կունենա ապահովելու տեղական մակարդակում էներգիայի արտադրության զգալի աճ, խթանելու էներգառեսուրսների խելամիտ և խնայողաբար օգտագործումը, բարձրացնելու էներգետիկ անվտանգությունը, ինչպես նաև բարելավելու բնակչության կենսապայմաններն ու շրջակա միջավայրի որակը՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման միջոցով:

Միաժամանակ, ծրագիրը միտված է համայնքի կլիմայական դիմադրողականության ամրապնդմանը՝ կլիմայի փոփոխության հետևանքներին հարմարվողականության միջոցառումների համակարգված ներդրման և դրանց շարունակական կիրառման միջոցով:

ԿԷԿԳԾ-ի շրջանակներում հիմնականում դիտարկվում են հետևյալ ոլորտները՝ համայնքային, հանրային և մասնավոր տրանսպորտը, արտաքին փողոցային լուսավորության համակարգերը, բնակելի և հասարակական նշանակության շենքերը, համայնքի սեփականություն հանդիսացող կառույցները, ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքի ներքո գործող կազմակերպությունները:

Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ում սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է.

1. Խթանել վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառումը և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը:
2. Իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության համալիր ծրագրեր՝ ժամանակակից «կանաչ» տեխնոլոգիաների կրառման միջոցով:
3. Նվազեցնել համայնքային ենթակառուցվածքի կառույցների և բնակելի շենքերի էներգասպառումը՝ ներմուծելով արդյունավետ կառավարման գործիքներ և «կանաչ գնումների» քաղաքականություն:
4. Ստեղծել համայնքային էներգետիկ կառավարման համակարգ, ապահովել տվյալների մշտադիտարկում և վերահսկողություն՝ նպատակային ցուցանիշների պահպանման համար:
5. Գնահատել Թալին համայնքին բնորոշ կլիմայական վտանգները և խոցելիությունները, պարբերաբար վերանայել հարմարվողականության միջոցառումները և համագործակցել գիտական ու մասնագիտական կառույցների հետ:
6. Խթանել բնակչության իրազեկումը էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի և կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ:

7. Զարգացնել ծրագրերի կառավարման կարողությունները, ներգրավել միջազգային և տեղական ներդրումներ, խթանել դոնոր կառույցների և շահառուների հետ արդյունավետ համագործակցություն:

1.2. Ծրագրի մշակման իրավական և մեթոդական հիմքերը

Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի մշակման համար հիմք են հանդիսանում նորմատիվ, ռազմավարական, տեղեկատվական և մեթոդական բնույթի մի շարք ազգային և միջազգային փաստաթղթեր: Այս փաստաթղթերի համադրությունը ձևավորում է էներգետիկայի և կլիմայի քաղաքական շրջանակը, իսկ դրանց ուսումնասիրությունը ընդգրկում է միջազգային հանձնառություններ, ազգային ռազմավարություններ և տեղական ու տարածաշրջանային ծրագրեր, որոնք կանխորոշում են ԿԷԿԳԾ-ի կառուցվածքը, առաջնահերթությունները և իրագործման մեխանիզմները:

1. **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (07.03.2001թ.)**, որը սահմանում է էներգետիկ ոլորտի կառավարման և կարգավորման ընդհանուր հիմքերը:
2. **Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (09.11.2004թ.)**, որով ամրագրվում է տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները՝ իրականացնել էներգախնայողության միջոցառումներ և խթանել ՎԷ տեխնոլոգիաների կիրառում:
3. **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (21.06.2014թ.)**, որը պահանջում է նոր շենքերի և ենթակառուցվածքների նախագծման ժամանակ հաշվի առնել էներգաարդյունավետության և կլիմայական կայունության պահանջները:
4. **ՀՀ էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագիր մինչև 2040թ.** (2021թ.), որը նպատակ ունի մինչև 2030թ. էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության մեջ ապահովել առնվազն 15% ՎԷ-ի մասնաբաժին (առանց խոշոր ՀԷԿ-երի) և 26% մինչև 2040թ.:
5. **ՀՀ ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050թ.)** (2023թ), որը սահմանում է մեկ շնչին արտանետումների կրճատման նպատակ՝ մինչև 2.07 տ CO₂/տարեկան:
6. **ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագիր (2022–2030թթ.)**, որը սահմանում է շենքերի, տրանսպորտի, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում էներգախնայողության և ՎԷ խթանման միջոցառումներ:
7. **«Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգ»** (ՀՀ կառավարության 54-Ն որոշում, 11.01.2024թ.), որը կարգավորում է արտանետումների հաշվառման և հաշվետվությունների պատրաստման ընթացակարգերը:
8. **Թալին համայնքի 2023–2027թթ. հնգամյա զարգացման ծրագիր (2022):**
9. **ՀՀ–ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (2017թ.)**, որը սահմանում է էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի և շենքերի էներգետիկ ցուցանիշների վերաբերյալ ԵՄ հիմնական դիրեկտիվների ներդրման պարտավորությունները:

10. ՀՀ ազգային մակարդակով սահմանված գործողություններ (NDC, 2021–2030թթ.), որոնցով Հայաստանը պարտավորվում է մինչև 2030թ. կրճատել արտանետումները 40%-ով (հիմք ընդունելով 1990թ. մակարդակը):
11. Փարիզյան համաձայնագիր (2015թ.) և ՀՀ կողմից ընդունված պարտավորությունները ջերմոցային գազերի արտանետումների կրճատման և հարմարվողականության ոլորտում:
12. ՄԱԿ Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա և դրա պահանջները՝ ազգային հաշվետվությունների ու արտանետումների գույքագրման վերաբերյալ:
13. ՄԱԿ Կայուն զարգացման նպատակները (SDGs, 2030), մասնավորապես՝ ԿԶՆ 7 (մատչելի և մաքուր էներգիա) և ԿԶՆ 13 (կլիմայի գործողություններ):
14. Ուղեցույց՝ «Ինչպես մշակել կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր Արևելյան գործընկերության երկրներում»:
15. «Հաշվետվությունների ներկայացման ուղեցույց», ՔԴ գրասենյակ (2020թ.):

Այս ամբողջական իրավական և մեթոդական հիմքերը երաշխավորում են, որ **Թալին համայնքի 2023–2027թթ. հնգամյա զարգացման ծրագիր** համայնքի ԿԷԿԳԾ-ն համահունչ է ՀՀ և ԵՄ քաղաքականությանը, ապահովում է միջազգային պարտավորությունների կատարումը և միաժամանակ ուղղված է համայնքային մակարդակում գործնական ու իրագործելի գործողությունների մշակմանը:

1.3. Ծրագրի իրականացման հնարավոր ֆինանսավորման տարբերակները

ԿԷԿԳԾ-ում ներառված միջոցառումների արդյունավետ, հետևողական և համակարգված իրականացման համար առաջնահերթ նշանակություն ունի, որ տեղական ինքնակառավարման մարմինը համայնքի տարեկան բյուջեում նախատեսի համապատասխան ֆինանսական հատկացումներ: Այդ հատկացումները պետք է ձևավորվեն ծրագրերի սահմանված առաջնահերթությունների, ակնկալվող արդյունքների և իրականացման ժամանակացույցների հիման վրա՝ ապահովելով միջոցառումների իրագործելիությունն ու շարունակականությունը:

Հարկ է նշել, որ ծրագրի իրականացումն ընդհանուր առմամբ պահանջում է զգալի ներդրումային միջոցներ, որոնք համայնքային բյուջեի հաշվին ամբողջությամբ ապահովել հնարավոր չէ: Այս պատճառով Թալինի համայնքապետարանը կիրականացնի քայլեր լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման ուղղությամբ ուսումնասիրելով ինչպես պետական մակարդակով հասանելի ծրագրերը և սուբվենցիոն հնարավորությունները, այնպես էլ միջազգային ֆինանսական կառույցների և դոնոր կազմակերպությունների տրամադրած վարկային ու դրամաշնորհային գործիքները: Այս գործընթացում էական դեր կարող են ունենալ նաև մասնավոր հատվածի ներդրումները: Համայնքային շրջանառու հիմնադրամի ստեղծումը կարող է դիտարկվել որպես կայուն ֆինանսավորման գործիք՝ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի զարգացման նախաձեռնությունների իրականացման համար:

Ֆինանսավորման արդյունավետության բարձրացման համար կարևոր է նաև ֆինանսական հոսքերի նպատակային բաշխումը: Այն պետք է զարգանա ուղղակի ծախսերի ֆինանսավորումից դեպի խնայողությունների խրախուսման մեխանիզմներ

Ստորև ներկայացվում են ԿԷԿԳԾ-ի միջոցառումների ֆինանսավորման հիմնական տարբերակները, որոնք համայնքը կարող է կիրառել իրագործման ընթացքում:

➤ **Ֆինանսավորում համայնքային բյուջեից**

Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի իրագործման հիմնական ֆինանսական աղբյուրներից է համայնքային բյուջեն: Այս առումով կարևոր է նշել, որ Թալին համայնքի 2023–2027թթ. հնգամյա զարգացման ծրագրում¹ արդեն իսկ նախատեսված են ֆինանսական հատկացումներ էներգետիկ ենթակառուցվածքների և փողոցային լուսավորության արդիականացման ուղղությամբ. մասնավորապես՝ մոտ 49 մլն ՀՀ դրամ հատկացվել է փողոցային լուսավորության համակարգերի արդիականացման համար, 240 մլն ՀՀ դրամ՝ արևային կայանների տեղադրման համար: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել ԿԷԿԳԾ-ի գործողությունների համահունչ իրականացումը, ինչպես նաև ստեղծում է նախապայմաններ համաֆինանսավորման միջոցով լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար՝ պետական սուբվենցիոն ծրագրերից, միջազգային ֆինանսական կառույցներից և դոնոր կազմակերպություններից, որոնք հաճախ համայնքի մասնակցությունը դիտարկում են որպես պարտադիր պայման:

➤ **Պետական սուբվենցիաներ**

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերը, որն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից, ձևավորում է համայնք–պետություն գործընկերության արդյունավետ ձևաչափ: Ծրագրի տրամաբանությունն այն է, որ համայնքների ներկայացրած կապիտալ ներդրումային նախագծերը, կառավարության դրական եզրակացություն ստանալու դեպքում, ստանում են պետական բյուջեից համաֆինանսավորում: Համաֆինանսավորման մասնաբաժինը սահմանվում է ծրագրի բնույթից, ոլորտային առանձնահատկություններից և սոցիալ–տնտեսական ազդեցությունից կախված և կարող է կազմել ընդհանուր արժեքի 10%-ից մինչև 80%: Եթե նախագծում ներգրավված է նաև երրորդ կողմի համաֆինանսավորում առնվազն 20% չափով, ապա պետական համաֆինանսավորման մասնաբաժինը կարող է ավելանալ հավելյալ 5%-ով:

Սուբվենցիոն ծրագրերը գործում են 2018թ.-ից և ընդգրկում են 19 ոլորտներ, այդ թվում՝ էներգաարդյունավետության բարձրացում, փողոցային լուսավորության կառուցում և վերանորոգում, արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում, մանկապարտեզների և հանրային շենքերի կառուցում կամ վերակառուցում, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային գույքի արդիականացում:

Բացի այդ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում համայնքներին հնարավորություն է տրվում օգտվել միջազգային և դոնոր կառույցների կողմից տրամադրվող տեխնիկական օժանդակությունից: Օրինակ՝ ՄԱԶԾ-ԿԿՀ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի միջոցով 2020–2023թթ. ընթացքում համաֆինանսավորում է տրամադրվել ավելի քան 140 շենքի ջերմաարդիականացման համար:

¹ <https://talin.am/Pages/DocFlow/Def.aspx?a=v&g=1e5c50f7-fe44-456b-a62e-14ba16bec547>

2022թ.-ից ուժի մեջ մտած կարգավորումների համաձայն՝ սուբվենցիոն ծրագրերում ներգրավված տնային տնտեսությունները պարտավոր են ապահովել առնվազն 10% ներդրում, սակայն էներգաարդյունավետության բաղադրիչ ունեցող ծրագրերում այդ պահանջը կարող է նվազեցվել մինչև 5%: Բացի դրանից, 2022թ.-ի թիվ N 520-Լ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Բնակարանների եվ անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի» շրջանակում նախատեսվում է փոխհատուցել բնակարանների և տների էներգաարդյունավետ վերանորոգման նպատակով վերցված վարկերի տոկոսադրույքները:

➤ **Բնակչության ֆինանսական միջոցներ**

Թալին համայնքում, ինչպես նաև փոքր և միջին չափի այլ համայնքներում խոշոր էներգասպառող ոլորտներ (օրինակ՝ արդյունաբերություն կամ կենտրոնացված ջերմամատակարարման համակարգեր) փաստացի բացակայում են: Այս պայմաններում հիմնական էներգասպառող և ՋԳ արտանետումների ձևավորող ոլորտը հանդիսանում է «Բնակելի շենքեր»-ը, որը նաև ունի էներգախնայողության և արտանետումների կրճատման ամենամեծ ներուժը: Համաձայն Արտանետումների էլակետային կադաստրի (ԱԵԿ) հաշվարկների՝ Թալինում էներգակիրների հիմնական սպառողը տրանսպորտի և բնակելի սեկտորն է, ինչը ցույց է տալիս, որ առանց բնակչության ակտիվ մասնակցության ԿԷԿԾ-ի շրջանակներում շոշափելի արդյունքների հասնել հնարավոր չէ:

Ուստի համայնքապետարանը պետք է հետևողական և նպատակային աշխատանք իրականացնի բնակչության հետ՝ խրախուսելով նրանց ակտիվ մասնակցությունն ու համաֆինանսավորումը «Բնակելի շենքեր» ոլորտում նախատեսված միջոցառումների իրագործման գործընթացում, ինչպես նաև տրանսպորտի ոլորտում կայուն և էներգաարդյունավետ լուծումների ներդրման ուղղությամբ:

Սա հնարավորություն կտա միաժամանակ նվազեցնել բնակելի և տրանսպորտի հատվածում էներգիայի սպառումը, խթանել ավելի խնայող և շրջակա միջավայրի համար բարենպաստ վարքագիծը, ինչպես նաև ապահովել ջերմոցային գազերի արտանետումների էական կրճատում համայնքի մակարդակում:

Նախաձեռնող քաղաքացիների համար հասանելի են առևտրային բանկերի կողմից տրամադրվող «կանաչ» և «փափուկ» վարկեր, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ներդրված պետական աջակցության ծրագրեր, այդ թվում՝ բնակարանների և անհատական տների էներգաարդյունավետ վերանորոգման նպատակով տրամադրվող վարկեր: Բնակչության մասնակի համաֆինանսավորումն էլ բավական է, որպեսզի վարկային ծրագրերի միջոցով հնարավոր դառնա շենքերի ջերմամեկուսացումը, ջերմային կորուստների կրճատումը, արդյունավետ ջեռուցման համակարգերի ներդրումը և ՎԷ տեխնոլոգիաների կիրառումը:

➤ **Բիզնեսը կամ մասնավոր հատվածը որպես ֆինանսավորման աղբյուր**

Կայուն էներգետիկ զարգացման խթանումը հնարավոր է նաև մասնավոր հատվածի ակտիվ ներգրավմամբ: Այս մասնակցությունը կարող է արտահայտվել տարբեր ձևերով, օրինակ՝ էներգաարդյունավետ նյութերի արտադրության խրախուսում,

ձեռնարկատիրության զարգացում, նոր տեխնոլոգիաների ներմուծում և կիրառություն: Մասնավոր հատվածի ներգրավումը կարող է իրականացվել ինչպես գովազդային աջակցությամբ և հանրային գնումներում էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ներառմամբ, այնպես էլ նպատակային պատվերների նախատեսմամբ: Բացի այդ, կիրառելի են համաֆինանսավորման սխեմաներ, համայնք-մասնավոր գործընկերության ձևաչափեր, ինչպես նաև խրախուսական մեխանիզմներ: Վերջիններս կարող են ներառել միջազգային վարկային միջոցների տրամադրում, պետության կողմից վարկերի տոկոսադրույքների փոխհատուցում կամ սուբսիդավորում՝ վարկավորման առավել մատչելի և «փափուկ» պայմաններ ապահովելու նպատակով:

➤ **Ֆինանսական հաստատություններ, հիմնադրամներ և ծրագրեր**

ԿԷԿԳԾ-ի իրագործման կարևոր ֆինանսավորման աղբյուրներից են ոչ միայն պետական և համայնքային միջոցները, այլև այն ֆինանսական կառույցները, հիմնադրամները և ծրագրերը, որոնք ներառում են դրամաշնորհային բաղադրիչներ և ուղղված են կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականության ապահովմանը: Նրանց ներգրավումը հնարավորություն է տալիս համայնքներին իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման, վերականգնվող էներգետիկայի զարգացման, ինչպես նաև կլիմայական կայունության ամրապնդման նախագծեր:

Այս կառույցների առավելությունն այն է, որ նրանք գործում են որպես ինքնուրույն ֆինանսական դերակատարներ՝ ապահովելով ոչ միայն ուղղակի դրամաշնորհային կամ վարկային ռեսուրսներ, այլև տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն: Նրանց միջոցով հնարավոր է ֆինանսավորել այնպիսի համայնքներ, որոնք սեփական բյուջետային ռեսուրսներով սահմանափակ հնարավորություններ ունեն կամ չեն կարող օգտվել դասական վարկային մեխանիզմներից: Բացի այդ, նման ծրագրերը հաճախ աջակցում են նաև ներդրումային փաթեթների ձևավորմանը և էներգետիկ ծառայության ընկերությունների (ESCO) մոդելների կիրառմանը: Այստեղ կարելի է նշել Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (ՀՎԷԷՀ)², հիմնական առաքելությունն է խթանել կայուն էներգետիկայի առաջատար փորձի կիրառումը՝ նպաստելով երկրի էներգետիկ անվտանգության ամրապնդմանը, էներգետիկ անկախության ապահովմանը և տնտեսական աճին: ՀՎԷԷՀ-ն ունի հարուստ փորձ Հայաստանի համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի ֆինանսավորմանն ու իրագործմանն ոլորտում:

Ֆինանսական կառույցների ու նախաձեռնությունների շարքում կարելի է թվարկել.

- ✓ Կանաչ զարգացման հիմնադրամը (Green for Growth Fund, GGF),
- ✓ Կանաչ կլիմայական հիմնադրամը (Green Climate Fund, GCF),
- ✓ Արևելյան Եվրոպայի գործընկերության էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի հիմնադրամը (E5P),
- ✓ Համայնքային ծրագրերի աջակցության կառույցը (Municipal Project Support Facility),

² <https://www.r2e2.am/>

- ✓ Շրջակա միջավայրի հյուսիսային ֆինանսական կորպորացիան (Nordic Environment Finance Corporation, NEFCO),
- ✓ Կլիմայի գործընկերության գլոբալ հիմնադրամը (Global Climate Partnership Fund),
- ✓ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը (UNDP Armenia),
- ✓ «Քաղաքապետերի դաշնագիր՝ ցուցադրական նախագծեր» ծրագիրը (CoM-DeP),
- ✓ ինչպես նաև տեղական ֆինանսավորման նախաձեռնությունները:

Այս կառույցների ներգրավումը հնարավորություն կտա ապահովել ինչպես ֆինանսական միջոցների համալրում, այնպես էլ տեխնիկական աջակցություն և կարողությունների զարգացում՝ նպաստելով Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի միջոցառումների արդյունավետ իրագործմանը:

➤ **Ֆինանսավորման այլ մեխանիզմներ և աղբյուրներ**

ԿԷԿԳԾ-ի իրականացման համար հնարավոր է նաև կիրառել ոչ ավանդական ֆինանսավորման մեխանիզմներ և աղբյուրներ, օրինակ՝ համայնքային, պետական կամ դոնորային միջոցները: Դրանցից մեկը **շրջանառու ֆոնդն է՝** ֆինանսական գործիք, որի նպատակն է ապահովել ներդրումային ծրագրերի շարունակական ֆինանսավորումը: Սկզբնական փուլում այն կարող է համալրվել տարբեր աղբյուրներից՝ վարկերից, դրամաշնորհներից կամ նվիրատվություններից, իսկ հետագայում դառնալ ինքնաֆինանսավորվող՝ առաջին ծրագրերի արդյունքում ստացված խնայողությունների կամ տեղական էներգիայի արտադրությունից³ ստացված եկամուտների հաշվին:

Այլ հնարավոր մեխանիզմ է **լիզինգը**, որը հաճախ ավելի մատչելի է, քան դասական վարկային պարտավորությունները, քանի որ վարձակալության վճարները սովորաբար ցածր են, քան վարկի մարման և սպասարկման ծախսերը: Օրինակ՝ լիզինգի միջոցով հնարավոր է ապահովել արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրում:

Բացի դրանից, համայնքները կարող են օգտվել նաև **առևտրային վարկերից**, որոնք տրամադրվում են ֆինանսական հաստատությունների կողմից՝ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրագործման նպատակով՝ ուղղակիորեն կամ էներգետիկ ծառայության ընկերությունների (ESCO) միջոցով: Հնարավոր է կիրառել նաև **թիրախային վարկային գծեր**, այսինքն՝ «**փափուկ**» պետական վարկեր, որոնք փոխանցվում են ֆինանսական հաստատություններին՝ համայնքներին ավելի մատչելի վարկեր տրամադրելու համար: Վարկային ռիսկերը կարող են մեղմացվել երաշխիքների և ռիսկերի բաշխման մեխանիզմների միջոցով, երբ դոնոր կազմակերպությունը կամ կառավարությունը ապահովագրում է հնարավոր կորուստների մի մասը:

Այլընտրանքային աղբյուրների շարքում կարելի է առանձնացնել նաև **միջազգային տեխնիկական օժանդակության հիմնադրամները**, տեղական բնապահպանական

³ Համաձայն ՀՕԿՀ թիվ 374-Ն առ 01.11.2013թ որոշման Արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրվում է համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին՝ մինչև 1 ՄՎտ տեղակայվող (տեղակայված) հզորությամբ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության համար

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

հիմնադրամները, նպատակային դրամահավաք նախաձեռնությունները, ինչպես նաև տարբեր տեսակի պետական սուբսիդիաներն ու հատուկ աջակցական միջոցառումները: Այս բոլոր գործիքները հնարավորություն են տալիս համայնքներին ստեղծել բազմաբնույթ ֆինանսավորման հիմք, ապահովել ծրագրերի կայուն իրագործում և նվազեցնել միայն համայնքային բյուջեից կախվածությունը:

1.4. Ծրագրի իրականացման ընթացքի մշտադիտարկումը

Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի արդյունավետ իրականացման կարևոր նախապայմաններից մեկն է հստակ մշտադիտարկման համակարգի ստեղծումը: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն վերահսկել միջոցառումների ընթացքը և հետևել սահմանված նպատակների կատարմանը, այլև անհրաժեշտության դեպքում իրականացնել ուղղիչ գործողություններ: Մշտադիտարկման գործառնությունը ապահովում է ծրագրի որակական և քանակական արդյունքների գնահատում, ինչը նպաստում է թափանցիկության բարձրացմանը և կառավարման արդյունավետության ամրապնդմանը:

Մշտադիտարկման համակարգման պատասխանատվությունը վերապահվում է համայնքապետարանին. այն կարող է իրականացվել կամ այդ նպատակով ձևավորված կառուցվածքային ստորաբաժանման, կամ հատուկ լիազորված մասնագետի՝ էներգետիկ կառավարչի միջոցով: Էներգետիկ կառավարչի առկայությունը համարվում է «Քաղաքապետերի դաշնագրի» մասնակցության կարևոր նախապայման, քանի որ նա ապահովում է ԿԷԿԳԾ-ի մշակումն ու իրականացման վերահսկողությունը:

Էներգետիկ կառավարչի կամ կառավարման ստորաբաժանման հիմնական գործառնություններն են.

- ✓ ԿԷԿԳԾ-ի մշակման և թիրախների սահմանման գործընթացում մասնակցություն:
- ✓ Էներգետիկ սպառման տվյալների պարբերական հավաքագրում և վերլուծություն՝ բոլոր թիրախային ոլորտներում:
- ✓ Էներգետիկ աուդիտների և ուսումնասիրությունների կազմակերպում:
- ✓ Համայնքային կառույցներում էներգետիկ կառավարման գործիքների ներդրում:
- ✓ Տարբեր բաժինների և ենթակայության կազմակերպությունների աշխատանքի համակարգում:
- ✓ Ֆինանսական ու տեխնիկական աջակցության կազմակերպությունների հետ համագործակցություն:
- ✓ ԿԷԿԳԾ-ի կատարման ընթացքի մշտադիտարկում և հաշվետվությունների պատրաստում:

Մինչ էներգետիկ կառավարման ստորաբաժանման ստեղծումը կամ համապատասխան մասնագետի ներգրավումը, ծրագրի մոնիթորինգը կարող է իրականացնել համայնքապետարանի աշխատակազմի կողմից նշանակված աշխատանքային խումբը:

Մշտադիտարկման գործընթացը ներառում է.

- ✓ Տվյալների հավաքագրման մեթոդաբանության մշակում և կիրառություն:
- ✓ Էներգասպառման և ՋԳ արտանետումների ցուցանիշների մշտական հավաքագրում ու գրանցում:

- ✓ Ներքին և արտաքին տվյալների աղբյուրների սահմանում (համայնքապետարանի ֆինանսական բաժին, կոմունալ ծառայություններ, «Հայկական էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և այլն):
- ✓ Հավաքագրված տվյալների ստուգման և վավերացման մեխանիզմների ներդրում:
- ✓ Տվյալների հավաքագրման պարբերականության որոշում՝ տարեկան կամ ավելի հաճախ:
- ✓ Ինդիկատորների և համեմատական շեմերի սահմանում, օրինակ՝ շենքերի էներգասպառման առավելագույն թույլատրելի մակարդակ:
- ✓ Հաշվետվությունների ձևաչափի մշակումը և հաստատում համայնքապետարանի կողմից:
Հաշվետվությունները կատարաստվեն և կներկայացվեն «MyCovenant» առցանց հարթակի միջոցով՝ ըստ սահմանված պարբերականության.
- ✓ **Պարզեցված հաշվետվություն**՝ որակական նկարագրություն իրականացված միջոցառումների մասին՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ:
- ✓ **Լիարժեք հաշվետվություն**՝ որակական և քանակական տվյալներ, ԱԵԿ-ի արդիականացում և արտանետումների կրճատման գնահատում՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ:
Թալինի համայնքապետարանը նախատեսում է կիրառել նաև ավելի հաճախակի մոնիթորինգ՝ տարեկան կամ կիսամյակային կտրվածքով, որպեսզի ապահովվի ծրագրի ընթացքի ավելի մանրամասն գնահատում: Այս մոտեցումը թույլ կտա առավել օբյեկտիվ վերլուծել ինչպես էներգախնայողության փաստացի արդյունքները, այնպես էլ ֆինանսական և բնապահպանական արդյունավետությունը:

Գլուխ 2. Թալին համայնքի հակիրճ նկարագիրը

2. 1. Աշխարհագրական դիրք

Թալին⁴ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հյուսիսարևմտյան մասում: Թալինի համայնքային կենտրոնը գտնվում է Երևանից 68 կմ և մարզկենտրոնից 48 կմ հեռավորության վրա: Համայնքը արևմուտքից սահմանակից է Ախուրյան գետին, որը այն բաժանում է Թուրքիայից, հյուսիսից՝ Շիրակի մարզին, արևելքից՝ Աշտարակ համայնքին, իսկ հարավից՝ Արմավիրի մարզին: Այստեղով է անցնում Հյուսիս-Հարավ միջպետական մայրուղին:

Համայնքի տարածքը սկսվում է մոտավորապես ծովի մակարդակից 1200 մետր բարձրությունից և բարձրանում է մինչև Արագած լեռնազանգվածի գրեթե գագաթը՝ հասնելով շուրջ 3500 մետրի: Այն ընդգրկում է Արագածի հրաբխային զանգվածի լավային հոսքերով ձևավորված արևմտյան լեռնալանջերը՝ մասնավորապես Թալինի և Կարմրաշենի բարձրավանդակները, ինչպես նաև Արտենի (Արտին) լեռը: Արտենի լեռն ունի երկու գագաթ՝ Մեծ Արտենի (2047 մ) և Փոքր Արտենի, որը հայտնի է նաև որպես Արեգունի (1753 մ):

Համայնքի տարածքում առկա հանքային պաշարները հիմնականում կապված են Արագածի հրաբխային բնույթի հետ: Համայնքի գրեթե ամբողջ տարածքում առկա են

⁴ <https://talin.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

տարբեր գույների և կառուցվածքների տուֆի պաշարներ՝ մոխրագույն, մանուշակագույն-վարդագույն, ինչպես նաև կարմրաշականակագույն երանգներով: Կա նաև հրաբխային խարամի զգալի քանակ և պաշարներ: Որոշ հատվածներում հանդիպում են ասբեստի, պեռլիտի և օբսիդիանի (մոնթ) պաշարներ:

Համայնքի լեռնային հատվածը հարուստ է համեմատաբար բարձրորակ սառը ջրի աղբյուրներով, որոնք հիմնականում ապահովում են բնակավայրերի ջրամատակարարումը: Համայնքի հարթավայրային գոտու կլիման կիսաանապատային և խիստ չորային է:

Թալին համայնքը ունի շատ հարմարավետ տնտեսական-աշխարհագրական դիրք: Համայնքի տարածքով անցնում են Գյումրի-Արմավիր-Երևան երկաթուղին, Երևան-Արմավիր-Գյումրի և Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի ավտոմայրուղի-ները: 2022 թվականի նոյեմբերի դրությամբ Թալին քաղաքը դարձել է խոշորացված համայնք՝ ընդգրկելով 33 բնակավայր, այդ թվում՝ 32 գյուղական բնակավայր և մեկ քաղաք:

2.2. Բնակչություն

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքի ընդհանուր գրանցված բնակչությունը կազմում է 38.611 մարդ: Ժողովրդագրական դինամիկան ցույց է տալիս բնական աճի աննշան մակարդակ. գրանցվել է 234 ծնունդ և 200 մահ, որի արդյունքում բնական աճը կազմել է ընդամենը 34 մարդ: Այս նվազագույն աճը վկայում է համեմատաբար կայուն, սակայն գրեթե կանգնած ժողովրդագրական միտման մասին, ինչը կարող է պայմանավորված լինել ծնելիության ցածր մակարդակով և ապագայում նպատակային ժողովրդագրական քաղաքականության անհրաժեշտությամբ:

Ամուսնությունների և ընտանեկան հարաբերությունների ցուցանիշները ցույց են տալիս, որ նույն ժամանակահատվածում գրանցվել է 109 ամուսնություն և ընդամենը 13 ամուսնալուծություն, ինչը վկայում է համեմատաբար կայուն սոցիալական կառուցվածքի և ամուսնությունների ու ամուսնալուծությունների բարձր հարաբերակցության մասին: Տնային տնտեսությունների թիվը կազմում է 5.757 որոնցից 819-ը ստանում են ընտանեկան նպաստ: Սա նշանակում է, որ տնային տնտեսությունների մոտավորապես 14,2%-ը կախված է պետական սոցիալական աջակցությունից, ինչը կարող է վկայել բնակչության զգալի հատվածի սոցիալ-տնտեսական խոցելիության կամ ցածր եկամուտների մասին:

Աղյուսակ 1. Թալին համայնքի ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշները 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ⁵

№	Ցուցիչ	Արժեք
1	Գրանցված բնակչություն	38 611
2	Գրանցված ծնունդների թիվ	234
3	Մահերի թիվ	200
4	Ամուսնությունների թիվ	109
5	Ամուսնալուծությունների թիվ	13
6	Տնային տնտեսությունների թիվ	5 757

⁵ Այս և հաջորդ քանակական տվյալները վերցված են Թալինի համայնքապետարանի պաշտոնական կայքից՝ <https://talin.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbebab4291>

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

7	Ընտանեկան նպաստ ստացողների թիվ	819
8	Թոշակառուների թիվ	6 158
9	Հաշմանդամություն ունեցող անձանց թիվ	2 174

Բնակչության կառուցվածքի կարևոր առանձնահատկություններից է տարեց բնակչության զգալի մասնաբաժինը: Թոշակառուների թիվը կազմում է 6.158 մարդ, կամ ընդհանուր բնակչության 15,9%-ն է: Սա վկայում է բնակչության ծերացման միտման մասին, որը կարող է երկարաժամկետ ազդեցություն ունենալ սոցիալական ծառայությունների, առողջապահական համակարգի և աշխատուժի վրա:

Բացի այդ, համայնքում հաշվառված է 2.174 հաշմանդամություն ունեցող անձ, ինչը կազմում է բնակչության շուրջ 5,6%-ը: Այս ցուցանիշը ընդգծում է ներառական քաղաքականությունների և հատուկ կարիքներ ունեցող անձանց աջակցող ծառայությունների զարգացման կարևորությունը:

2.3. Տնտեսություն

Համայնքի տարածքում գործում են երեք արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից մեկը, որը զբաղվում էր ադամանդագործական քարերի մշակմամբ և ուներ բավականին մեծ արտադրական հզորություն, ներկայումս չի գործում: Մյուս երկու ձեռնարկությունները գործում են, որոնցից մեկը զբաղվում է կաթնամթերքի արտադրությամբ, իսկ մյուսը՝ հակակարկտային կայանքների արտադրությամբ:

Համայնքի տարածքում մատուցվող հիմնական ծառայություններն են ջրամատակարարումը, ջրահեռացումը, էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը, կապը և փոստային ծառայությունները, որոնք ապահովվում են տվյալ ոլորտներում Հանրապետությունում գործող ընկերությունների Թալինի մասնաճյուղերի կամ տեղամասերի միջոցով: Թալինի համայնքային ծառայությունն իրականացնում է աղբահանությունը, իսկ համայնքապետարանը՝ տրանսպորտային սպասարկումը: Բացի այդ, ճանապարհների պահպանման և շինարարության աշխատանքները իրականացվում են «Թալինի ԱՏՃ» ՊՈԱԿ-ի կողմից:

Համայնքում արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրատեսակներն են հացահատիկը (ցորեն և գարի), կաթը և միսը: Արտադրության ծավալները փոքր են և հիմնականում նախատեսված են ինքնապահովման համար: Բնակավայրերի մեծ մասը չունի ոռոգման ջրի հասանելիություն, ինչի պատճառով հացահատիկի բերքատվությունը հաճախ շատ ցածր և անկայուն է: Կերի բարձր արժեքը հանգեցնում է գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի բարձրացմանը:

Նշված տարածքները ներկայումս ունեն զարգացման ցածր մակարդակ՝ պայմանավորված արդյունաբերական կապիտալիզացիայի ցածր աստիճանով, վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ և ոռոգման ջրի անբավարարությամբ: Գյուղական բնակավայրերում համայնքային հողերի մոտավորապես 10%-ն է ոռոգվում:

Աղյուսակ 2. Հողօգտագործման և գյուղատնտեսության ցուցանիշները 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ

#	Ցուցիչ	Արժեք
---	--------	-------

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

1	Ընդհանուր հողային տարածք (հա)	94,867.64
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	74,853.75
3	Բնակավայրերի ընդհանուր տարածք (հա)	4,604.89
4	Խոշոր եղջերավոր անասունների թիվ (կովեր, ցուլեր)	13,085
5	Մանր եղջերավոր անասունների թիվ (ոչխարներ և այծեր)	29,198
6	Խոզերի թիվ	4,773
7	Թռչունների թիվ	37,358
8	Զիերի թիվ	41
9	Մեղվափեթակների (ընտանիքների) թիվ	3,702
10	Գյուղատնտեսական տեխնիկա	
10.1	Տրակտորների թիվ	–
10.2	Կոմբայնների թիվ	–
11	Գյուղացիական տնտեսությունների թիվ	8,273

2025 թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի ընդհանուր հողային տարածքը կազմում է 94.867.64 հա, որի զգալի մասը՝ մոտավորապես 79%-ը կամ 74.853.75 հա-ն, դասվում է գյուղատնտեսական նշանակության հողերի շարքին: Բնակելի (բնակավայրերի) տարածքը կազմում է 4.604.89 հա, ինչը վկայում է գերակշռող գյուղատնտեսական լանդշաֆտի և տարածքային ցրված բնակեցման կառուցվածքի մասին:

Անասնապահությունը կարևոր դեր է խաղում համայնքի տեղական տնտեսության մեջ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 13.085 գլուխ (ներառյալ կովերն ու ցուլերը), իսկ մանր եղջերավոր անասունների՝ ոչխարների և այծերի թիվը հասնում է 29.198 գլխի: Թռչնաբուծությունը նույնպես լայն տարածում ունի՝ ընդհանուր 37.358 թռչնի առկայությամբ: Խոզաբուծությունը ներկայացված է ավելի համեստ ծավալներով՝ 4.773 խոզ, իսկ ձիաբուծությունն ու մեղվաբուծությունը զարգացած են սահմանափակ չափով՝ համապատասխանաբար 41 ձի և 3.702 մեղվափեթակ, ինչը վկայում է գյուղատնտեսական գործունեության շրջանակում նիշային ոլորտների առկայության մասին:

Հետաքրքրական է, որ չնայած գյուղատնտեսական գործունեության զգալի ծավալներին՝ համայնքում գրանցված չեն տրակտորներ և կոմբայններ, ինչը կարող է վկայել հաշվառման տվյալների հնացած լինելու, մասնավոր սեփականության մեջ գտնվող տեխնիկայի հաշվառումից դուրս մնալու կամ գյուղատնտեսության մեխանիզացիայի լուրջ բացի մասին: Ժամանակակից գյուղտեխնիկայի բացակայությունը էական խնդիրներ է առաջացնում արտադրողականության, աշխատանքի արդյունավետության և կայուն զարգացման տեսանկյունից՝ հատկապես մշակվող հողերի մեծ ծավալների պայմաններում:

Տարածքում գործում է 8.273 գյուղացիական տնտեսություն, ինչից կարելի է ենթադրել, որ գյուղատնտեսական համակարգը հիմնականում կազմված է փոքրածավալ, ընտանեկան տնտեսություններից: Այս տնտեսությունները կազմում են համայնքի գյուղատնտեսական արտադրության հիմքը, սակայն միաժամանակ բախվում են կապիտալի, տեխնոլոգիաների և շուկաների հասանելիության սահմանափակումների:

Աղյուսակ 3. Թալին համայնքում գործող հիմանական արդյունաբերական ձեռնարկությունները

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Կազմակերպության գո ծունեության տեսակը
1	<<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>>ՍՊԸ	Մթերային խանութ
2	<< Ն.Ս ՄԱՐԿԵՏ >> (ՍՊԸ)	Մթերային խանութ
3	<<ԱԼԵ-ԼԵԱ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿԱԶ ԱՊՐԻԿՅԱՆ	Մթերային խանութ
4	<<ՌՍՇ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՌԱԴԻԿ ՀԱԿՈՔՅԱՆ	Մթերային խանութ
5	<<ԱՐԵՎՄԱՆԵ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՅԱՆ	Մթերային խանութ
6	<<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>>ՍՊԸ	Մթերային խանութ
7	<<ԱՐԵՎՄԱՆԵ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՅԱՆ	Մթերային խանութ
8	<<ՖԻՆԹՍՍ>> ՍՊԸ	Հաշվապահական գրասենյակ
9	<<ՌՍՇ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՌԱԴԻԿ ՀԱԿՈՔՅԱՆ	Մթերային խանութ
10	<<ԼԵՆՏԵՔՍ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ԳՈՄՅՅԱՆ	Հագուստի խանութ
Թալին խոշորացված համայնքի բնակելի ֆոնդը ձևավորված է անհատական տների և բազմաբնակարան շենքերի տեսքով: Համայնքի կազմում ընդգրկված են 33 բնակավայր՝ 32 գյուղական և 1 քաղաքային: 2025 թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա է 7,052 բնակելի տուն և 1269 բազմաբնակարան շենք:

Բնակելի ֆոնդի զգալի մասն այսօր մաշված է ինչպես կառուցվածքային, այնպես էլ ինժեներական համակարգերի առումով:

Ջեռուցումը հիմնականում իրականացվում է անհատական համակարգերով՝ բնական գազի միջոցով:


5.1. Բնակչության և հասարակական օբյեկտների կողմից էլեկտրաէներգիայի սպառումը

Թալին համայնքի առանձնատների 2023-2025թթ. էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը ներկայացված է Աղյուսակ 17-ում: Հարկ է նշել, որ տվյալների հստակ և տարանջատված հաշվառման բացակայության պատճառով հասարակական նշանակության օբյեկտների և բնակելի շենքերի կողմից էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշները ներկայացված են մեկ ընդհանրացված արժեքով:

Աղյուսակ 17. 2023-2024թթ. էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը

Բնակելի շենքերի տեսակը	Չափի միավորը	Էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշները		Ծանոթություն
		2023թ.	2024թ.	
Բազմաբնակարան շենքեր	ՄՎտժ/տարի	1,924.341	1,950.669	
ԲԲՇ-ի տեսակարար սպառումը	կՎտժ/տարի	1,567,00	1,588,00	Բնակարանի հաշվով
Առանձնատներ	ՄՎտժ/տարի	14,243.026	14,401.806	
Առանձնատան տեսակարար սպառումը	կՎտժ/տարի	2,002	2,024	Առանձնատան հաշվով
Ընդամենը	ՄՎտժ/ տարի	16,167.367	16,352.475	

Էլեկտրաէներգիայի սպառման վերաբերյալ բոլոր տվյալները տրամադվել է «ՀԷՑ» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաձյուղի կողմից: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր առմամբ պահպանվել է հարաբերականորեն կայուն և գրեթե անփոփոխ: 2024 թվականին արձանագրվել է մոտ 1.1-1.3% աճ՝ 2023 թվականի համեմատ, ինչը կարելի է գնահատել որպես չափավոր տատանումներ՝ առանց սպառման կառուցվածքային էական փոփոխությունների: Այս պատկերը կարելի է տեսնել նաև Գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 4. Բնակելի և հասարակական հատվածի կողմից էլեկտրաէներգիայի սպառումը:

5.2. Բնակչության կողմից բնական գազի սպառումը

Թալին համայնքում գազամատակարարման ենթակառուցվածքները հիմնականում ձևավորված են, սակայն առանձին բնակավայրեր դեռևս ընդգրկված չեն գազաֆիկացման համակարգում: Մասնավորապես, գազամատակարարում առկա չէ Ագարակավան, Գետափ, Դիան, Լուսակն, Ծաղկասար, Կաքավաձոր, Ներքին Բազմաբերդ, Պարտիզակ և Վերին Բազմաբերդ բնակավայրերում:

Ի տարբերություն էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշների՝ բնական գազի սպառման ծավալներում արձանագրվում է աճի միտում: Մասնավորապես, 2024 թվականին բնական գազի սպառումը 2023 թվականի համեմատ՝ առանձնատների, բնակելի շենքերի և հասարակական նշանակության օբյեկտների շրջանակում, աճել է մոտավորապես 9–10%-ով: Գազի սպառման համապատասխան ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18 Բնակչության կողմից բնական գազի սպառում

Շենքերի տեսակը	Տարեկան սպառումը, հազ.մ3/տարի		Տարեկան սպառումը, ՄՎտժ/տարի	
	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.
ԲԲՇ-ներ	800.698	896.493	7,542.575	8,444.964
ԲԲՇ-ի			159.2	157.3

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

տեսակարար սպառումը	16.9	16.7		
Առանձնատներ	3,949.772	4,486.206	37,206.852	42,260.061
Առանձնատան տեսակարար սպառումը	83.1	83.3	83.1	83.3
Ընդամենը	4,750.470	5,382.699	44,749.427	50,705.024

Գլուխ 6. Տրանսպորտային սեկտորի էներգասպառումը

Թալին համայնքում տրանսպորտային համակարգը հիմնականում բաղկացած է համայնքային և մասնավոր տրանսպորտային միջոցներից, մինչդեռ հանրային ուղևորափոխադրումների ծառայությունները փաստացի իրականացվում են մասնավոր սուբյեկտների կողմից: Նման կազմակերպչական մոդելը բնորոշ է Հայաստանի փոքր և միջին համայնքների մեծ մասին և արտացոլում է դրանց տրանսպորտային համակարգերի ընդհանուր կառուցվածքային առանձնահատկությունները:

Տրանսպորտի ոլորտում կիրառվող հիմնական էներգակիրներն են՝ սեղմված բնական գազը, հեղուկացված նավթային գազը, բենզինը և դիզելային վառելիքը:

Տրանսպորտային միջոցների կողմից օգտագործվող շարժիչային վառելիքների սպառման ծավալները էներգետիկական միավորների վերափոխման համար կիրառվել են Եվրոպական հանձնաժողովի մասնագիտական կառույցների կողմից մշակված ուղեցույցները, որոնցում սահմանված են տարբեր վառելիքի տեսակների համար նախատեսված փոխակերպման գործակիցներ: ¹⁰

6.1. Համայնքային տրանսպորտային միջոցների էներգասպառումը:

Թալին համայնքի ենթակայության ներքո գտնվող տրանսպորտային միջոցները 2023–2024 թթ. ժամանակահատվածում քանակական փոփոխությունների չեն ենթարկվել, և դրանց շահագործման ռեժիմները մնացել են համեմատաբար կայուն: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Աղյուսակ 19-ում ներկայացված են տվյալները մեկ տարվա կտրվածքով՝ ըստ համայնքային տրանսպորտային միջոցների էներգակիրների սպառման ծավալների:

Թալին համայնքապետարանի ավտոպարկում շահագործվում են դիզելային վառելիքով, սեղմված բնական գազով և բենզինով աշխատող տրանսպորտային միջոցներ:

¹⁰ <https://publications.jrc.ec.europa.eu/repository/handle/JRC142148> ; *How to develop a Sustainable Energy and Climate Action Plan (SECAP) Covenant of Mayors Guidebook / 2025;*

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Աղյուսակ 19. Համայնքային տրանսպորտի կազմը և շահագործման ցուցանիշները¹¹

Ավտոմեքենաների և մեխանիզմների տեսակը	Մակնիշը	Քանակությունը, հատ	Միջին տարեկան վազքը, կմ	Շարժիչային վառելիքի ծախսը		Շարժիչային վառելիքի տեսակը
				լ կմ մ ³ /100 կմ	լիտր/տարի, մ3/տարի	
Մարդատար մեքենաներ	Toyota BZ4X Long Ranje Pro	2	27 500			Էլեկտրական
	VAZ 21214		5 500	10,8	594	Սեղմված բնական գազ
Ավտոբուս	RENAULT R 332 A1	2	40 000	25,0	10 000	Դիզելային վառելիք
Բազմաֆունկցիոնալ էքսկավատոր բարձիչ	SOLD BL385	1	1 750	9	15 750	Դիզելային վառելիք
Ինքնաթափ	Գազ Սազ 3507 /Արտենի/	3	25 000	55,7	13 925	Սեղմված բնական գազ
	GAZ SAZ-3507 /Դաշտադեմ/		12 000	55,7	6 684	Սեղմված բնական գազ
	HONGYAN 6X4 CQ3346HV35					
Աղբատար մեքենաներ	ՄԱԶ-437121-542-011 KO-449-14	2	20 000	23	4600	Դիզելային վառելիք
	ՄԱԶ-438121-540-001 KO-456-10		22500	23	5 175	Դիզելային վառելիք
Ջրատար մեքենաներ	ԶԻԼ -130 KO-002	1	6000	18	1 080	Բենզին
Տրակտորներ	Բելոռուս 82.1	8	432	8	3 456	Դիզելային վառելիք
	„SAME-603,,					
	YTO X 804					
	MT3-82 . 1 բելառուս					
	MT3 -82.1ՅՕ -1A					
	ՄՏՁ 82,1					
	Տրակտոր բելառուս 1523 կարմիր		810	8	6 480	Դիզելային վառելիք
Ընդամենը		3			21 203	Սեղմված բնական գազ
		13			45 461	Դիզելային վառելիք
		1			1 080	Բենզին

¹¹ Աղբյուրը՝ Թալինի Համայնքապետարան:

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Աղյուսակում ներկայացված տվյալների հիման վրա, շարժիչային վառելիքների ֆիզիկական ծավալները փոխակերպվել են էներգետիկական միավորների կիրառելով վերը նշված փոխակերպման գործակիցները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս տարբեր վառելիքների սպառումը արտահայտել համադրելի միավորներով և ներառել դրանք մեկ ընդհանուր հաշվեկշռի մեջ: Ստացված արդյունքների հիման վրա մշակվել է Թալին համայնքային տրանսպորտային միջոցների և շինարարական մեխանիզմների էներգասպառման ամփոփիչ ցուցանիշների Աղյուսակ 20-ը, որը հնարավորություն է տալիս ավելի հստակ գնահատել էներգիայի ընդհանուր ծախսերը և դրանց դերը համայնքի էներգետիկ համակարգում:

Աղյուսակ 20. Համայնքային տրանսպորտի էներգասպառման կառուցվածքը

Շարժիչային վառելիքի տեսակը	Մեքենաների քանակը	Էներգակիրների ծախսը		Սպառման կառուցվածքը, %
		Լիտր/տարի կամ	ՄՎտժ/տարի	
Բենզին	1	1,080	9.936	1,5
Դիզելային վառելիք	13	21,203	212.030	32,5
Սեղմված բնական գազ	3	45,461	428.243	66
Ընդամենը	17	67,744	650.208	100

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ Թալին համայնքային տրանսպորտի էներգասպառման կառուցվածքում էական դեր ունի սեղմված բնական գազը (ՄԲԳ), որը բենզինի և դիզելային վառելիքի համեմատ բնութագրվում է հարաբերականորեն ավելի ցածր արտանետումներով: Մինևույն ժամանակ, նույնիսկ ՄԲԳ-ի լայն կիրառման պայմաններում տրանսպորտի ոլորտը շարունակում է մնալ ջերմոցային գազերի արտանետումների զգալի աղբյուր, ինչը պայմանավորում է համակարգված և երկարաժամկետ քաղաքականության անհրաժեշտությունը՝ ուղղված արտանետումների հետագա կրճատմանը և համայնքային տրանսպորտում ավելի մաքուր, էներգաարդյունավետ և կայուն լուծումների փուլային ներդրմանը:

6.2. Մասնավոր և առևտրային տրանսպորտի էներգասպառումը

Թալին համայնքի մասնավոր և առևտրային տրանսպորտային միջոցների էներգասպառման գնահատումը կատարվել է համայնքապետարանի տրամադրած սահմանափակ տվյալների հիման վրա, որոնք վերաբերում են միայն 2025թ-ին: Տվյալների ամբողջականության պակասը լրացվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից մարզի համար հրապարակված միջին ցուցանիշների կիրառմամբ, որոնք համադրվել են համայնքի բնակչության թվաքանակի հետ: Թալինի մասնավոր և առևտրային տրանսպորտի շարժակազմի կառուցվածքն ու դրանց տարեկան շահագործման հիմնական պարամետրերը ներկայացված են Աղյուսակ 21-ում, որտեղ բաշխումը ըստ ավտոմեքենաների տեսակների արտացոլում է մոտավոր գնահատականներ:

Աղյուսակ 21. Մասնավոր և առևտրային տրանսպորտի շարժակազմի բնութագրերը

Ավտոմեքենաների տեսակը	Վառելիքի տեսակը	Միջին տարեկան վազքը, կմ	Վառելիքի ծախսը		Մեքենաների քանակը, հատ	Էներգակիրների ծախս
			լ կամ մ3 100 կմ	լ/տարի, մ3/տարի	2025թ.	ՄՎտմ/տարի
Մարդատար մեքենաներ	բենզին	9 000	12,3	1,682.640	1 500	15,480.288
	դիզելավառելիք	9 000	6,5	696.150	1 190	6,961.500
	ՄԲԳ	12 000	6	9,909.360	13 763	93,346.171
	ՀՆԳ	11 000	8,5	1,496.000	1600	10,920.800
Ընդամենը մարդատար մեքենաներ					18 053	126,708.759
Բեռնատար մեքենաներ	բենզին					
	դիզելավառելիք	6 000	14	1,384.320	1 648	13,843.200
	ՄԲԳ	3 000	12	477.360	1 326	4,496.731
	ՀՆԳ					
Ընդամենը բեռնատար մեքենաներ					2 974	18,339.931

Աղյուսակ 21-ի տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել Թալին համայնքի մասնավոր և առևտրային տրանսպորտային շարժակազմի վառելիքային կառուցվածքը, ինչպես նաև դրանից բխող էներգասպառման հիմնական միտումները: Տվյալները վկայում են, որ 2025թ.-ին մարդատար տրանսպորտային միջոցների գերակշիռ մասը շահագործվել է սեղմված բնական գազով և բենզինով, որոնց ընդհանուր մասնաբաժինը կազմել է շուրջ **86%**: Մասնավորապես, ՄԲԳ-ի մասնաբաժինը հասել է **74%**, իսկ բենզինինը՝ **12%**: ՀՆԳ-ով աշխատող մարդատար ավտոմեքենաների քանակը հարաբերականորեն փոքր է:


Բեռնատար տրանսպորտային միջոցների վառելիքային կառուցվածքում գերակշռում է դիզելային վառելիքը՝ կազմելով մոտավորապես **75%** մասնաբաժին, մինչդեռ մնացած շուրջ **25%**-ը բաժին է ընկնում ՄԲԳ աշխատող տրանսպորտային միջոցներին:

Տվյալների համակողմանի վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 22-ում և ընդհանուրը արտացոլվում է Գծապատկեր 6-ում: Այս տվյալները հնարավորություն են տալիս ձևավորել համայնքի տրանսպորտային շարժակազմի էներգասպառման ամբողջական պատկերը, բացահայտել գերիշխող վառելիքային կառուցվածքը և գնահատել էներգաարդյունավետության բարելավման հեռանկարները:

Աղյուսակ 22. Մասնավոր և առևտրային տրանսպորտի շարժակազմի բնութագրերը ըստ վառելիքի տեսակի

Վառելիքի տեսակը	Մարդատար մեքենաներ		Բեռնատար մեքենաներ		Ընդհանուր ենթասեկտորը	
	ՄՎտժ	%	ՄՎտժ	%	ՄՎտժ	%
Բենզին	15,480.288	12%			15,480.288	11%
Դիզելավառելիք	6,961.500	5%	13,843.200	75%	20,804.700	14%
ՄԲԳ	93,346.171	74%	4,496.731	25%	97,842.902	67%
ՀՆԳ	10,920.800	9%			10,920.800	8%
Ընդամենը	126,708.759	100%	18,339.931	100%	145,048.690	100%

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Թալինի տրանսպորտային հատվածը գտնվում է էներգաանցման գործընթացում: Գազային վառելիքի՝ մասնավորապես ՄԲԳ բարձր մասնաբաժինը վկայում է տեղական վարորդական հատվածի հարմարվողականության և վերափոխման ներուժի մասին: Սա ոչ միայն տնտեսապես շահավետ լուծում է, այլև էկոլոգիական տեսանկյունից նախընտրելի ընտրություն՝ ցածր ածխածնային արտանետումների համատեքստում:



Այս դինամիկան կարևոր էլակետ է Թալին համայնքի համար՝ զարգացնելու և նպատակաուղղելու կայուն շարժունակության ռազմավարությունը և քաղաքականությունը:

Գծապատկեր 5. Մասնավոր և առևտրային տրանսպորտի շարժակազմի ընդհանուր բնութագիրը

Գլուխ 7. Փողոցային լուսավորության համակարգը

Թալինի համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալների վերլուծությունը ներառում է միայն արտաքին փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշները: Դրանք չեն ընդգրկում գովազդային, տեղեկատվական և հանրային տարածքներում տեղադրված այլ լուսային տարրերի կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծավալները: Միաժամանակ, հարկ է նշել, որ վերլուծությունը ներառում է միայն այն բնակավայրերի տվյալները, որտեղ փողոցային լուսավորության ծախսերը հաշվառվում են առանձին և տարանջատված են համայնքապետական այլ կազմակերպությունների ծախսերից: Այս հանգամանքը ենթադրում է, որ ներկայացված տվյալները չեն արտացոլում լուսավորության ոլորտի

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

ամբողջական էներգետիկ բյուջեն և կարող են որոշակիորեն թերագնահատել նրա իրական մասնաբաժինը համայնքի ընդհանուր էներգասպառման կառուցվածքում:

Վերջին տարիներին Թալին համայնքում արձանագրվում է փողոցային լուսավորության համակարգի աստիճանական զարգացում՝ թե՛ լուսավորվող տարածքների ընդլայնման, թե՛ լուսատուների տեխնիկական արդիականացման ուղղությամբ: Համայնքի փողոցային լուսավորության էլեկտրաէներգիայի սպառման համապատասխան ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 23-ում:

Աղյուսակ 23. Թալին համայնքում փողոցային լուսավորության սպառման ցուցանիշները

No	Հաստատության անվանումը	Էլեկտրական էներգիա, կՎտժ/տարի	
		2023թ.	2024թ.
1	Թալին բնակավայրի փողոցային լուսավորություն	310	1,634
2	Աշնակ բնակավայրի փողոցային լուսավորություն	2,415	1,811
3	Արտենի բնակավայրի փողոցային լուսավորություն	14,008	5,855
4	Գառնահովիտ բնակավայրի փողոցային լուսավորություն	6,188	5,419
5	Գետափ բնակավայրի փողոցային լուսավորություն	9,563	6,868
6	Դաշտադեմ բնակավայրի փողոցային լուսավորություն	47,131	46,087
7	Զաինջա բնակավայրի փողոցային լուսավորություն	13,490	11,849
8	Զովասար բնակավայրի փողոցային լուսավորություն	3,705	3,258
9	Թաթուլ բնակավայրի փողոցային լուսավորություն	7,062	4,138
10	Թալին քաղաքի փողոցային լուսավորություն	25,072	33,840
11	Լուսակն բնակավայրի փողոցային լուսավորություն	4,890	4,152
12	Կաքավաձորի խաչի լուսավորություն	1,834	5,254
13	Հացաշեն բնակավայրի փողոցային լուսավորություն	2,142	1,952
14	Մաստարա բնակավայրի փողոցային լուսավորություն	39,836	32,923
15	Ներքին Բազմբերդ բնակավայրի փողոցային լուսավորություն	30,232	21,289
16	Նոր Արթիկ բնակավայրի փողոցային լուսավորություն	3,720	3,913
17	Շղարշիկ բնակավայրի փողոցային լուսավորություն	4,674	3,730
18	Պարտիզակ բնակավայրի	4,044	4,270

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

	փողոցային լուսավորություն		
19	Ցամաքասար բնակավայրի փողոցային լուսավորություն	4,999	4,074
Ընդամենը		234,094	205,120

2022–2024 թվականների ընթացքում Թալին համայնքում արձանագրվել է որոշակի առաջընթաց փողոցային լուսավորության համակարգի զարգացման ուղղությամբ՝ ինչպես լուսավորվող տարածքների ծավալի ընդլայնման, այնպես էլ լուսատուների տեխնիկական որակի բարելավման տեսանկյունից: Մասնավորապես, 2023 թվականին Թալին քաղաքում տեղադրված լուսատուների քանակը կազմել է 2100 հատ, իսկ 2024 թվականին՝ 2125 հատ: Միննույն ժամանակ, գյուղական բնակավայրերում փողոցային լուսավորության համակարգի տեխնիկական ցուցանիշները բնութագրվում են հետևյալ տվյալներով. 2023 թվականին լուսատուների քանակը կազմել է 3592 հատ, մինչդեռ 2024 թվականին՝ 2827 հատ: Տեղադրված լուսադիոդային լուսատուները ունեն 60 Վտ անվանական հզորություն:

Համայնքն ամառային ժամանակաշրջանում ապահովում է լուսավորություն միջինում 10 ժամ օրական (215 օր), իսկ ձմռանը՝ միջինում 7–8 ժամ (150 օր): Սա վկայում է LED տեխնոլոգիաների ներդրման շարունակական գործընթացի մասին՝ ուղղված էներգասարդյունավետության բարձրացմանը: Լուսավորվող փողոցների ընդհանուր երկարությունը Թալին քաղաքում կազմել է շուրջ 60 կմ 2023-ին, 61 կմ 2024-ին, իսկ գյուղական համայնքներում համապատասխանաբար 97 կմ և 106 կմ: Թալին քաղաքի փողոցային լուսավորության համակարգի ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 24-ում, իսկ գյուղական համայնքների ցուցանիշները՝ Աղյուսակ 25-ում:

Չնայած արձանագրված առաջընթացին, Թալին լուսավորության համակարգը դեռևս որոշակի մարտահրավերների առաջ է կանգնած: Մասնավորապես, որոշ հատվածներում լուսավորությունն արդիականացվել է մասամբ:

Աղյուսակ 24. Թալին քաղաքի համայնքի փողոցային լուսավորության համակարգի տեխնիկական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշի մեծությունը		Ծանոթություն
		2023թ.	2024թ.	
Հենասյուների քանակը	հատ	1 500	1 520	
Լուսատուների քանակը	հատ	2 100	2 125	
Լուսադիոդային լամպեր	հատ	0	3 165	
	Վտ	60	60	
	հատ	2100	2125	
	Վտ			
Ընդհանուր դրվածքային հզորությունը	կՎտ	126	127	հաշվարկային մեծություն

Էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը	ՄՎտժ/տ	264	266	
Էլեկտրաէներգիայի սպառման ինդեքսը	%	100	100.7	հաշվարկային մեծություն
Տարեկան աշխատաժամերի թիվը	ժամ/տարի	2 098	2 098	հաշվարկային մեծություն
Լուսավորվող փողոցների ընդհանուր երկարությունը	կմ	60	61	
Գործողության միջին ամառային ժամաքանակը	ժամ/օր	506	506	
Գործողության միջին ձմեռային ժամաքանակը	ժամ/օր	782	782	

Աղյուսակ 25. Թալին համայնքի գյուղական բնակավայրերի փողոցային լուսավորության համակարգի տեխնիկական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշի մեծությունը		Ծանոթություն
		2023 . թ.	2024 . թ.	
Հենասյուների քանակը	հատ	3582	3815	
Լուսատուների քանակը	հատ	3592	3827	
Լուսադիոդային լամպեր	հատ	2201	3044	
	Վտ	60	50	
	հատ			
Ընդհանուր դրվածքային հզորությունը	կՎտ	35	114,5	հաշվարկային մեծություն
Էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը	ՄՎտժ/տ	130	158	
Էլեկտրաէներգիայի սպառման ինդեքսը	%	100	121.5	հաշվարկային մեծություն
Տարեկան աշխատաժամերի թիվը	ժամ/տարի	47232	47232	հաշվարկային մեծություն
Լուսավորվող փողոցների ընդհանուր երկարությունը	կմ	97	106	
Գործողության միջին ամառային ժամաքանակը	ժամ/օր	10/215	10/215	
Գործողության միջին ձմեռային ժամաքանակը	ժամ/օր	8/150	8/150	

Այնուամենայնիվ, արդարացի է նշել, որ լուսադիոդային (LED) տեխնոլոգիաների ներդրումը և լուսավորված տարածքների ընդլայնումը վկայում են համայնքի

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

հետևողական և ռազմավարական մոտեցման մասին՝ ուղղված էներգատարողունակետության բարձրացմանը և համայնքի ընդհանուր ածխածնային հետքի նվազեցմանը:

Գլուխ 8. Կենցաղային թափոնների հավաքը և պահեստավորումը

Ըստ համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2023–2024 թվականների ընթացքում աղբավայր տեղափոխվող կենցաղային թափոնների միջին տարեկան քանակը կազմել է 2732,8 տոննա, աղբավայրերի զբաղեցրած տարածքի մակերեսը՝ 8.85 հա: Նշված ցուցանիշը բնութագրում է Թալին համայնքում ձևավորվող թափոնների ծավալը և հանդիսանում է կարևոր հիմք թափոնների կառավարման համակարգի արդյունավետության գնահատման, ինչպես նաև ԿԷԿԳ-ի շրջանակում թափոններից առաջացող ջերմոցային գազերի արտանետումների, մասնավորապես մեթանի, հաշվարկների իրականացման համար:

Թալին համայնքում կենցաղային թափոնների հավաքման և տեղափոխման աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են «Թալինի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կողմից: Այդ նպատակով համայնքի վարչական տարածքում՝ փողոցներում, բակերում, բնակելի շենքերին հարակից տարածքներում և հանրային օգտագործման վայրերում, տեղադրված են համապատասխան տարողությամբ աղբամաններ, որոնք ապահովում են կենցաղային թափոնների կանոնավոր հավաքումը, ժամանակավոր պահեստավորումը և հետագա տեղափոխումը դեպի աղբավայր: Աղբահանության համակարգի գործող կազմակերպումն էականորեն նպաստում է համայնքի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը, հանրային տարածքների մաքրության ապահովմանը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցմանը, մինչդեռ դրա շարունակական բարելավումը դիտարկվում է որպես կարևոր նախապայման թափոնների կառավարման արդյունավետության բարձրացման և համայնքի էկոլոգիական կայունության ապահովման համար:

№	Տեղադիրք (վարչական տարածք)	Աղբավայրի մակերես, հա	Տարեկան թափոնների քանակ, տոննա
1	Պարտիզակ բնակավայր	0.40	320
2	Կաթնաղբյուր բնակավայր	0.22	712.8
3	Մաստարա բնակավայր	0.45	370
4	Թալին քաղաք	3.00	610
5	Արագածավան բնակավայր	4.78	720
	Ընդամենը	8.85	2732.8

Թափոնների հիմնական հոսքերը ձևավորվում են տնային տնտեսություններից, վարչական շենքերից, առևտրային կետերից և կրթական հաստատություններից:

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Հատկապես ամառային ամիսներին նկատվում է թափոնների ծավալի որոշակի աճ՝ պայմանավորված գյուղատնտեսական գործունեության ակտիվացմամբ:

Թալին համայնքում ներկայումս **թափոնների տարանջատված հավաք և վերամշակում չի իրականացվում**, իսկ գործող աղբավայրերը չեն համապատասխանում ժամանակակից բնապահպանական չափանիշներին: Թափոնների մեծ մասը կուտակվում է բաց տարածքներում՝ առանց նախնական տեսակավորման կամ վերամշակման: Սա հանգեցնում է հողի, ջրի և օդի աղտոտման վտանգների, ինչպես նաև ջերմոցային գազերի՝ հատկապես մեթանի արտանետումների առաջացման:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել թափոնների կառավարման բարելավման ծրագիր, որը պետք է ներառի.

- ✓ աղբահանության ժամանակացույցի և հաճախականության օպտիմալացում,
- ✓ աղբատար տեխնիկայի և տարանների նորացում կամ ավելացում,
- ✓ աղբավայրի բարեկարգում և վերահսկման համակարգի ներդրում,
- ✓ տարանջատված աղբահավաքի փորձնական մեկնարկ՝ սկսելով համայնքային կառույցներից և դպրոցներից,
- ✓ բնակչության իրազեկման և կրթական ծրագրերի իրականացում՝ թափոնների նվազեցման և վերամշակման մշակույթ ձևավորելու համար:

Կլիմայի փոփոխության համատեքստում կենցաղային թափոնների ոլորտը դիտարկվում է որպես մեթանի արտանետումների պոտենցիալ աղբյուր, ուստի ԿԷԿԳԾ-ի շրջանակում պետք է գնահատվի այս ենթաոլորտի ազդեցությունը համայնքի ընդհանուր արտանետումների հաշվեկշռի վրա: Հետագայում, հնարավորության դեպքում, նպատակահարմար է իրականացնել թափոններից ստացվող կենսագազի հավաք և օգտագործման պիլոտային ծրագիր՝ փոքր տարողությամբ տեղական էներգիայի արտադրության նպատակով:

Գլուխ 9. ԶԳ արտանետումների ելակետային կադաստրի մշակումը

Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի մշակման նպատակով, որպես ելակետային տարի ընդունվել է 2023 թվականը, քանի որ տվյալ ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունն առավել ամբողջական, հուսալի և համահունչ է «Քաղաքապետերի դաշնագրի» մեթոդաբանական պահանջներին: 2023–2024 թթ. ընթացքում իրականացվել են էներգետիկ հաշվեկշռի և արտանետումների ելակետային կադաստրի տվյալների հավաքագրում և մշակում: Ընտրված ժամանակահատվածը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվորեն ներկայացնել համայնքի էներգասպառման և ջերմոցային գազերի արտանետումների ներկա կառուցվածքը, ինչպես նաև դրանց վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնները:

Ելակետային տարվա ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- ✓ Թալին համայնքի կողմից տրամադրված էներգասպառման և արտանետումների վերաբերյալ տվյալների ամբողջականությամբ և հավաստիությամբ:

- ✓ Համապատասխանությամբ ԵՄ «Քաղաքապետերի դաշնագրի» ուղեցույցներին, որոնք սահմանում են, որ ելակետային տարին պետք է լինի տվյալների առումով առավել ներկայացուցչական և վստահելի ժամանակաշրջանը:

Այսպիսով, 2023 թվականը սահմանվում է որպես Թալին համայնքի էներգասպառման և ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկների ելակետային տարի, որի նկատմամբ կկատարվի հետագա համեմատությունը՝ գնահատելու համար 2030 թվականի դրությամբ արտանետումների նվազեցման առնվազն 30% թիրախի իրականացման առաջընթացը:


9.1. Ջերմոցային գազերի արտանետումների հիմնական աղբյուրները


Համաձայն «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» մեթոդաբանական ուղեցույցների՝ ԱԵԿ-ը պետք է ընդգրկի Դաշնագրի կողմից սահմանված չորս առաջնային ոլորտներից առնվազն երեքը, իսկ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման գործողությունները անհրաժեշտ է մշակել ընտրված ոլորտներից առնվազն երկուսի շրջանակում:


Այս սկզբունքը նպատակ ունի ապահովելու համայնքի էներգետիկ և կլիմայական համակարգերի ամբողջական վերլուծությունը և համաչափ մոտեցումը, ինչը հնարավորություն է տալիս որոշել արդյունավետ միջամտությունների ուղղություններ, բարձրացնել ծրագրային գործողությունների համակարգվածությունն ու ազդեցությունը, և նպաստել համայնքի կայուն զարգացման և կլիմայական նպատակների իրագործմանը:

Այս պահանջը կարևոր է, քանի որ այն ապահովում է համայնքի էներգետիկ և կլիմայական համակարգի ամբողջական գնահատում՝ ընդգրկելով ինչպես հիմնական էներգասպառման աղբյուրները, այնպես էլ արտանետումների հիմնական ուղղությունները:

Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս համապարփակորեն վերլուծել համայնքի էներգասպառման կառուցվածքը, նույնականացնել արտանետումների հիմնական աղբյուրները և ձևավորել առավել արդյունավետ քաղաքականություն՝ կայուն էներգետիկ զարգացման, արտանետումների կրճատման և կլիմայի փոփոխության մեղմման նպատակով:

Դաշնագրի շրջանակում գնահատման և պլանավորման հիմնական չորս ոլորտներն են՝
 **Շենքեր (հասարակական, բնակելի և առևտրային)** – ներառում են էներգիայի սպառման բոլոր համակարգերը՝ ջեռուցում, սառեցում, օդափոխություն, լուսավորություն և կենցաղային էլեկտրասպառում:

 **Տրանսպորտ** – ներառում է համայնքային, հանրային, մասնավոր և առևտրային տրանսպորտային միջոցների կողմից օգտագործվող էներգակիրների սպառումը:

 **Արտաքին (փողոցային) լուսավորություն** – ներառում է համայնքային ենթակառուցվածքների էներգասպառումը, այդ թվում՝ փողոցային լուսավորությունը, լուսացույցեր և այլ արտաքին համակարգեր:

Թափոնների կառավարման համակարգ – ներառում է կենցաղային, արտադրական և այլ տեսակի թափոնների հավաքում, տեղափոխում, վերամշակում և ջերմային/օրգանական քայքայման ընթացքում առաջացող արտանետումներ:

Այս ոլորտներն ընդգրկում են համայնքային գործունեության հիմնական էներգասպառող ենթակառուցվածքները և արտանետումների հիմնական աղբյուրները՝ ապահովելով ԿԷԿԳԾ-ի ամբողջական և համակարգված կառուցվածքը:

Արտանետումների էլակետային կադաստրը քանակապես գնահատում է համայնքի տարածքում էներգիայի սպառման արդյունքում առաջացող CO₂ կամ CO₂ համարժեք ջերմոցային գազերի արտանետումները՝ ընտրված էլակետային տարվա կտրվածքով: Այն հնարավորություն է տալիս բացահայտել հիմնական մարդածին արտանետումների աղբյուրները և դրանց համեմատությամբ ձևավորել նպատակային մեղմման միջոցառումներ:

ԶԳ արտանետումները ոլորտ առ ոլորտ հաշվարկվել են հետևյալ ընդհանուր բանաձևով.

$$\text{Ածխածնի երկօքսիդի արտանետումներ (տ CO}_2\text{)} = \text{Էներգասպառում (ՄՎտժ)} \times \text{CO}_2/\text{ածխածնային գործակից (տ CO}_2\text{/ՄՎտժ)}$$

Հաշվարկների ընթացքում կիրառվել են երկու տեսակի գործակիցներ.

- ✓ տարբեր էներգակիրների սպառման ծավալները էներգետիկ միավորների վերածելու համար՝ ներկայացված Աղյուսակ 15-ում;
- ✓ ջերմոցային գազերի արտանետումները գնահատելու նպատակով՝ CO₂ արտանետումների գործակիցներ՝ ներկայացված Աղյուսակ 26-ում:

Աղյուսակ 26. Ջերմոցային գազերի արտանետումները գնահատելու նպատակով՝ CO₂ արտանետումների գործակիցներ¹²

Էներգակիր	Արտանետումների գործակից
Էլեկտրական էներգիա	0.241 տ CO ₂ /ՄՎտժ
Բնական գազ	0.202 տ CO ₂ /ՄՎտժ
Ավտոմոբիլային բենզին	0.249 տ CO ₂ /ՄՎտժ
Դիզելային վառելիք	0.267 տ CO ₂ /ՄՎտժ
Հեղուկացված նավթային գազեր	0.227 տ CO ₂ /ՄՎտժ
Վառելիքային (ոչ կայուն) ¹³	0.403 տ CO ₂ /ՄՎտժ
Վառելիքային (կայուն) ¹⁴	0 տ CO ₂ /ՄՎտժ
Վառելիքային (փաստացի)	0.121 տ CO ₂ /ՄՎտժ

¹² Covenant of Mayors for Climate and Energy: Greenhouse gas emission factors for local emission inventories, Covenant of Mayors collection - 2024 datasets (Bastos, J., Monforti-Ferrario, F. and Melica, G.)

¹³ Անտառի ոչ կայուն կառավարման (երբ անտառահատման ծավալները գերազանցում են անտառի բնականոն աճի ծավալները) արդյունքում առաջացած վառելիքային, որը հանդիսանում է չվերականգնվող ռեսուրս և, որի այրման հետևանքով առաջանում են ածխաթթու գազի արտանետումներ:

¹⁴ Փայտանյութի բնական աճի հաշվին առաջացած վառելիքային, որը որակավորվում է որպես անտառի կայուն կառավարման (երբ միջին հաշվով անտառների աճը հավասար է կամ գերազանցում է անտառահատման ծավալները) արդյունքում գոյացած վերականգնվող ռեսուրս. հաշվարկներում այդ խմբին դասվող փայտանյութի այրումից գոյացող արտանետումները համարվում են զրոյական՝ համաձայն Դաշնագրի մեթոդական ուղեցույցների պահանջների:

Թափոն համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

	Սույն ԿԷԿԳԾ-ում վառելափայտի արտանետումների գործակցը հաշվարկվել է անտառի կայուն և ոչ կայուն կառավարման մոտեցումների համար սահմանված արտանետումների գործակիցների համադրմամբ, ինչի արդյունքում ընդունվել է 0.121 տ CO ₂ /ՄՎտժ գործակիցը:
Անասնապահական կենսազանգված (աթար)	0 տ CO ₂ /ՄՎտժ

Գոյություն ունեցող ջերմոցային գազերից՝ մեթանից (CH₄), ազոտի երկոքսիդից (N₂O) ու ածխաթթու գազից (CO₂), սույն ծրագրում հաշվառվում է միայն վերջինը:

9.2. ՋԳ արտանետումների ելակետային կադաստրը

Ելակետային տարվա համար Թալին համայնքի էներգակիրների սպառման բացարձակ ցուցանիշները ներկայացված են ըստ ոլորտների: Տվյալները ներառում են համայնքային կառույցների, բնակելի սեկտորի, տրանսպորտի և փողոցային լուսավորության էներգասպառումը՝ արտացոլելով համայնքի ընդհանուր էներգետիկ պատկերը: Այսպիսով, Աղյուսակ 27-ում ներկայացված տվյալները ծառայում են որպես հիմք համայնքի էներգետիկ կառուցվածքի գնահատման և հետագա մեղմման քայլերի նախատեսման համար:

Աղյուսակ 27. Էներգակիրների սպառման ծավալները ելակետային 2023թ. -ի համար

Էներգակրի անվանումը	Բնակելի սեկտոր (ՄՎտժ/տարի)	Համայնքապատկան կառույցներ (ՄՎտժ/տարի)	Տրանսպորտ (ՄՎտժ/տարի)	Լուսավորություն (ՄՎտժ/տարի)	Ընդհանուր սպառում (ՄՎտժ/տարի)
Էլեկտրաէներգիա	16,167.367	2,369.740	-	234.094	18,771.201
Բնական գազ	44,749.427	850.428	-	-	45,599.855
ՄԲԳ	-	-	98,271.145	-	98,271.145
ՀՆԳ	-	-	11,571.008	-	11,571.008
Բենզին	-	-	15,490.224	-	15,490.224
Դիզվառելիք	-	-	21,016.730	-	21,016.730
Ընդամենը	60,916.794	3,220.168	146,349.107	237.094	210,720.163
Ընդամենը %	28.9	1.53	69.4	0.10	100

Աղյուսակ 27-ում ներկայացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս Թալին համայնքի էներգասպառման կառուցվածքում էական մասնաբաժին ունի տրանսպորտի ոլորտը, որը ելակետային տարում կազմում է համայնքի ընդհանուր էներգասպառման շուրջ 69.4%: Տվյալ ոլորտում ակնհայտ է գազային վառելիքների գերակշռությունը, որտեղ սեղմված բնական գազը՝ 67.1% մասնաբաժնով, շարունակում է հանդիսանալ ամենատարածված էներգակիրն՝ պայմանավորված դրա մատչելիությամբ և լայն կիրառմամբ: Միննույն ժամանակ, տրանսպորտի ոլորտում նշանակալի դեր են


Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

պահպանում նաև դիզելային վառելիքը՝ 14.3% մասնաբաժնով (հատկապես բեռնատար տրանսպորտի շահագործման շրջանակում), ինչպես նաև բենզինային վառելիքը՝ 10.5% և ՀՆԳ՝ 7.9% մասնաբաժնով, որոնք միասին լրացնում են համայնքի տրանսպորտային վառելիքների կառուցվածքը:

Տրանսպորտի սեկտորին հաջորդում է բնակելի ոլորտը, որը զբաղեցնում է համայնքի ընդհանուր էներգասպառման 28.9% մասնաբաժինը, որտեղ էներգիայի սպառման հիմնական աղբյուրներն են բնական գազը (73.5%) և էլեկտրաէներգիան (26.5%): Ստացված տվյալները տվյալները վկայում են, որ Թալին բնակչության էներգետիկ պահանջների մեծ մասը բավարարվում է բնական գազի և էլեկտրաէներգիայի հաշվին, մինչդեռ կենսազանգվածի (վառելավայտ, աթար) կիրառման մասին տվյալներ չկան:

Համայնքային կառույցների էներգասպառումը կազմում է մոտ 1.5%, իսկ փողոցային լուսավորության համակարգերինը՝ ընդամենը 0.10%, ինչը բնորոշ է փոքր և միջին բնակավայրերին, որտեղ հանրային ենթակառուցվածքների էներգախնդիրը համեմատաբար սահմանափակ է:

ԱԵԿ-ում ընդգրկված ոլորտների էներգասպառման կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 7-ում:



Գծապատկեր 6. Թալին համայնքում 2023թ. էներգակիրների սպառման ցուցանիշները ըստ ոլորտների

Ինչպես նշվել է, ելակետային տարվա ջերմոցային գազերի արտանետումները հաշվարկվում են Աղյուսակ 27-ում ներկայացված էներգակիրների բացարձակ սպառման տվյալները բազմապատկելով համապատասխան CO₂ արտանետման գործակիցներով, որոնք ներկայացված են Աղյուսակ 26-ում :

Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս Թալին համայնքում վառելափայտը որպես էներգակիր չի կիրառվում, դրա հնարավոր հետագա օգտագործման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. Վառելափայտի օգտագործումից առաջացող ածխաթթու գազի (CO₂) արտանետումների գնահատման դեպքում կիրառվում է հատուկ մոտեցում: Համաձայն Քաղաքապետերի դաշնագրի մեթոդական ուղեցույցների և IPCC 2006 հաշվարկային սկզբունքների, եթե վառելափայտը ստացվում է անտառների կայուն կառավարման պայմաններում, երբ անտառների տարեկան աճը հավասար է կամ գերազանցում է հատման ծավալները, այն դիտարկվում է որպես վերականգնվող էներգակիր ռեսուրս:

Այս դեպքում վառելափայտի այրման արդյունքում արտանետվող CO₂-ը համարվում է ածխածնային չեզոք, քանի որ դրա քանակը համապատասխանում է բույսերի աճի ընթացքում մթնոլորտից ներծծված ածխածնի ծավալին: Արդյունքում, նման վառելափայտի այրումից առաջացած CO₂ արտանետումները գնահատվում են որպես զրոյական (0 տ CO₂/ՄՎտժ)՝ արտացոլելով ածխածնի բնական շրջանառության հավասարակշռությունը:

Միննույն ժամանակ, եթե վառելափայտը ստացվում է անտառների ոչ կայուն շահագործման արդյունքում, երբ հատման ծավալները գերազանցում են անտառների վերականգնման կարողությունը, այն դիտարկվում է որպես չվերականգնվող ռեսուրս, որի այրման դեպքում կիրառվում է 0.403 տ CO₂/ՄՎտժ արտանետման գործակիցը:

ԱԵԿ-ում ներառված էներգակիրների օգտագործումից առաջացած CO₂ արտանետումների հաշվարկված արդյունքները ներկայացված են Աղյուսակ 28-ում:

Աղյուսակ 28. Թալին համայնքի ԱԵԿ. ՋԳ արտանետումների ծավալները ելակետային տարում՝ 2023թ.

Էներգակրի անվանումը	Ածխաթթու գազի արտանետումները, տ CO2/տարի				Մեթանի արտանետումներ	Ընդամենը արտանետումներ, tCO ₂ h/տարի
	Բնակելի սեկտոր	Համայնքապատկան կառույցներ	Տրանսպորտ	Լուսավորություն	tCH ₄ /year (tCO ₂ year)	
Էլեկտրաէներգիա	3,896.335	627.524		94.924		4,618.783
Բնական գազ	9,039.384	171.786				9,211.170
ՄԲԳ			19,850.771			19,850.771
ՀԲԳ			2,479.022			2,479.022
Բենզին			3,857.066			3,857.066
Դիզել			5,611.467			5,611.467
Աղբավայր					61.9tCH ₄ /year (1733.2 tCO ₂ year)	1,733.200
Ընդամենը, tCO₂h	12,935.719	799.310	31,798.326	94.924	1,733.200	47,361.479
Ընդամենը, %	27.3	1.69	67.1	0.2	3.61	100

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Աղյուսակ 28-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Թալին համայնքի ջերմոցային գազերի արտանետումների կառուցվածքում առաջատար դիրք են զբաղեցնում տրանսպորտի և բնակչության սեկտորները, որոնք ձևավորում են արտանետումների ընդհանուր ծավալի հիմնական մասը:

Ելակետային տարում Թալին համայնքի բնակչության, տնտեսության և տրանսպորտային համակարգի գործունեության արդյունքում մթնոլորտ է արտանետվել ընդհանուրում շուրջ **47,361.48** տոննա CO₂ համարժեք (tCO₂) ջերմոցային գազեր:

Այս ցուցանիշը հանդիսանում է ելակետային արժեք՝ Քաղաքապետերի դաշնագրի շրջանակներում համայնքի թիրախային պարտավորությունների և մինչև 2030թ. արտանետումների կրճատման նպատակային սցենարների գնահատման համար:

9.3. Մինչև 2030թ. ՋԳ արտանետումների կրճատման թիրախային ծավալը

Համաձայն Քաղաքապետերի դաշնագրի ընթացակարգերի, Արևելյան գործընկերության երկրների համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են ինքնուրույն սահմանել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման իրենց թիրախային մոտեցումը՝ հիմնվելով Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկվող երկու տարբեր սցենարներից որևէ մեկի վրա:

1. **Ելակետային տարվա սցենար**, որի դեպքում մինչև 2030թ. արտանետումների կրճատման թիրախային ծավալը որոշվում է ելակետային տարում հաշվարկված արտանետումների արժեքի հիման վրա:
2. **Սովորական զարգացման սցենար**, որի դեպքում մինչև 2030թ. արտանետումների կրճատման թիրախը սահմանվում է՝ հաշվի առնելով բնակչության աճը, տնտեսական գործունեության ընդլայնումը, տրանսպորտի և ենթակառուցվածքների զարգացումը, ինչպես նաև դրանց հետևանքով արտանետումների կանխատեսվող բնական աճը:

Առաջին սցենարի դեպքում մինչև 2030թ. ՋԳ արտանետումների կրճատման ծավալները որոշվում են որպես ելակետային տարում ՋԳ արտանետումների ծավալի 35% (համայնքի հիմնական պարտավորությունը Քաղաքապետերի Դաշնագրի շրջանակում), հետևաբար այն կկազմի.

$$47361.48 \times 0.35 = 16576,5 \text{ տոննա CO}_2 / \text{տարի}$$

Երկրորդ՝ Սովորական զարգացման սցենարի դեպքում մինչև 2030թ. ջերմոցային գազերի արտանետումների կրճատման թիրախային ծավալը հաշվարկվում է՝ հիմնվելով ոչ թե ելակետային տարվա, այլ համայնքի մինչև 2030թ. կանխատեսվող արտանետումների մակարդակի վրա: Այս մոտեցումը նախատեսում է, որ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը, բնակչության թվի ավելացումը, տրանսպորտային համակարգերի և էներգետիկ ենթակառուցվածքների ընդլայնումը մինչև 2030թ. անխուսափելիորեն կհանգեցնեն արտանետումների որոշակի բնական աճի:


Այդ աճը պատշաճ կերպով գնահատելու համար կիրառվում է տնտեսական զարգացման գործակից 1-ից մեծ ցուցանիշ, որը արտացոլում է համայնքի տնտեսական և

ժողովրդագրական դինամիկան: Հայաստանի համար Joint Research Centre-ի¹⁵ կողմից 2023թ. -ի համար առաջարկվող միջին աճի գործակիցը կազմում է 1.11, ինչը բնութագրում է չափավոր, սակայն կայուն զարգացման սցենար:

Այսպիսով այս սցենարի դեպքում Թալին համայնքի մինչև 2030թ. ՋԳ արտանետումների կրճատման ծավալը կկազմի.

$$47361.48 \times 1.11 \times 0.35 = 18399.9 \text{ տոննա CO}_2 \text{ /տարի}$$

արդյունքում՝ 1823,43 տոննա CO₂ ավել, քան ելակետային սցենարի դեպքում:



Սույն փաստաթղթի մշակման ընթացքում հավաքագրված տվյալների (Աղյուսակ 29) վերլուծությունը ցույց է տալիս, որ 2023-2024թթ. ընթացքում Թալին համայնքում էներգակիրների սպառման ծավալների զգալի դրական փոփոխությունների միտում է արձանագրվել:

Աղյուսակ 29. Թալին համայնքում էներգակիրների սպառման ցուցանիշները էներգետիկական միավորներով (ՄՎտժ-երով) և ՋԳ արտանետումների ծավալները:

Էներգակիրների տեսակը	Էներգակիրների սպառումը, ՄՎտժ/տարի		ՋԳ արտանետումների ծավալը, տոննա CO ₂ /տարի	
	2023 թ	2024 թ	2023 թ	2024 թ
Էլեկտրական էներգիա	18,771 . 201	18,281 . 384	4,430.003	4,314.406
Բնական գազ	45,599 . 855	51,720 . 377	9,211.170	10,447.516
ՄԲԳ	98,271 . 145	98,271 . 145	19,850.771	19,850.771
ՀՆԳ	11,571 . 008	11,571 . 008	2,626.618	2,626.618
Վառելիքայտ	0	0	0	0
Աթար	0	0	0	0


¹⁵ Ուսումնասիրությունների միավորված կենտրոնի (JRC) կողմից մշակված ուղեցույցում տարբեր երկրների համար առաջարկվում են «տնտեսական զարգացման» համապատասխան գործակիցներ: Հայաստանի համար՝ 2023թ. որպես ելակետային ընտրելու դեպքում, սահմանվում է 1.11 գործակիցը: Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Բենզին	15,490.224	15,490.224	3,857.065	3,857.065
Դիզելային վառելիք	21,016.730	21,016.730	5,611.466	5,611.466
Ընդամենը	58,561.328	70,914.877	45,587.096	46,707.845

Աղյուսակ 29-ում ներկայացված ջերմոցային գազերի արտանետումների ծավալները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով Եվրոպական հանձնաժողովի Միացյալ հետազոտական կենտրոնի (JRC) կողմից սահմանված տարբեր էներգակիրների համար նախատեսված արտանետումների գործակիցները, ինչպես նաև դրանց տեղայնացված Հայաստանի համար հարմարեցված նորմատիվ արժեքները, որոնք ներկայացված են Աղյուսակ 15-ում: Այս հաշվարկային մոտեցումը ապահովում է արտանետումների տվյալների համադրելիությունը Եվրոպական չափորոշիչների հետ՝ միաժամանակ արտացոլելով ազգային առանձնահատկությունները և տեղական էներգակիրների սպառման կառուցվածքը:

Ինչպես արդեն նշվել էր, Սովորական զարգացման սցենարի կիրառման դեպքում մինչև 2030թ. Թալին համայնքի ջերմոցային գազերի արտանետումների կրճատման պարտավորությունները ավելանում են շուրջ 1823,43 տոննայով համեմատած Էլակետային սցենարի արդյունքների հետ: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ նման լրացուցիչ կրճատման ապահովումը համայնքի համար կարող է լինել իրատեսականորեն դժվար իրագործելի, քանի որ այն ենթադրում է զգալի ֆինանսական, տեխնիկական և կառավարչական ռեսուրսներ՝ ենթակառուցվածքների բարելավման, տրանսպորտային համակարգի արդիականացման և էներգաարդյունավետության լայնածավալ ներդրումների տեսքով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է, որ Թալին համայնքի ջերմոցային գազերի արտանետումների կրճատման մինչև 2030թ. թիրախային ծավալները հաշվարկվեն Էլակետային 2023թ. կադաստրային տվյալների հիման վրա՝ կիրառելով Ելակետային սցենարի մոտեցումը:



Այսպիսով, ընտրված տարբերակի դեպքում Թալին համայնքում ջերմոցային գազերի (CO₂) արտանետումների կրճատման թիրախային ծավալը մինչև 2030 թվականը կազմում է.

$$47361.48 \times 0.35 = 16576,5 \text{ տոննա CO}_2/\text{տարի}$$

Այս հաշվարկից բխում է, որ Թալին համայնքը մինչև 2030 թվականը պետք է ապահովի տարեկան առնվազն 16576,5 տոննա CO₂ համարժեք արտանետումների նվազեցում, ինչը թույլ կտա հասնել բազային տարվա համեմատ 35% կրճատման ցուցանիշին՝ համահունչ Քաղաքապետերի դաշնագրի պահանջներին և Հայաստանի կողմից ստանձնած կլիմայական պարտավորություններին:

Այս թիրախը կձառայի որպես հիմնական ուղենիշ՝ համայնքի էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի զարգացման և արտանետումների մեղմման միջոցառումների պլանավորման գործընթացում:

Գլուխ 10. Կլիմայի փոփոխության մեղմման գործողություններ

Թալին համայնքը, միանալով Քաղաքապետերի դաշնագրին, ստանձնել է համայնքային ջերմոցային գազերի արտանետումները նվազագույնը 35%-ով կրճատելու հանձնառություն մինչև 2030 թվականը: Այս պարտավորության կատարումն ապահովելու նպատակով վշակվել է սույն ԿԷԿԾ-ն, որը ներառում է միջոցառումների համապարփակ փաթեթ՝ բաղկացած ներդրումային՝ ծախսատար «կոշտ» միջոցառումներից և կազմակերպչական՝ ծախսեր չպահանջող «փափուկ» միջոցառումներից: Նախատեսված գործողությունները մանրամասն ներկայացված են հաջորդիվ սույն գլխում՝ համապատասխանաբար արտանետումների կրճատմանն ուղղված «կոշտ» և «փափուկ» քայլերով: 2030 թվականի դրությամբ նախատեսված միջոցառումների համալիր իրականացումը հնարավորություն կընձեռի Թալին համայնքին տարեկան կրճատել առնվազն 17,095.619 տոննա CO₂ արտանետում, ինչը շուրջ 519 տոննայով գերազանցում է Դաշնագրով սահմանված նվազեցման թիրախային ցուցանիշը: Մինևս ժամանակ, առաջարկվող միջոցառումները համահունչ են Հայաստանի էներգետիկ և կլիմայական ռազմավարական փաստաթղթերին և ոլորտային օրենքների պահանջներին, ինչպես նաև ազգային և տեղական մակարդակներում ընդունված որոշումներին ու զարգացման ծրագրերին: Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ոլորտում առաջարկվող միջոցառումները նույնպես համահունչ են «Էներգետիկայի մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ Օրենքների դրույթներին և ՀԾԿՀ կողմից սահմանված էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման (մասնավորապես ցանցային ՖՎ կայանների և ինքնավար էներգաարտադրողների) կարգավորումներին:

Հատկանշական է, որ ծրագիրը հաշվի է առնում հանրապետությունում վերջին տարիներին տեղի ունեցող «կանաչ» տեխնոլոգիաների զարգացման միտումները, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային համակարգերի լայն տարածումը և էլեկտրամոբիլների ներմուծման տարեկան աճը համապատասխան հարկային արտոնությունների

պայմաններում: Այս բարենպաստ քաղաքական-կարգավորիչ միջավայրում համայնքն առավել արդյունավետ կերպով կարող է իրագործել էՆԽ և ՎԷ ծրագրերը՝ կրճատելով արտանետումները և դիմակայելով կլիմայական փոփոխություններին:

Կլիմայի փոփոխության մեղմման ուղղությամբ ԿԷԿԳԾ-ով նախատեսվող էներգաարդյունավետության, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի խթանման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ընդհանուր ներդրումային ծավալը գնահատվում է շուրջ **3,6 մլդ. դրամ**: Նշված գումարի մոտ **891 միլիոն դրամը (մոտ 24,7% տոկոսը)** նախատեսվում է ուղղել ՎԷ աղբյուրների կիրառմամբ նախագծերին՝ ընդգծելով արևային և այլ վերականգնվող տեխնոլոգիաների առանցքային դերը համայնքի էներգետիկ անցման ռազմավարության շրջանակում:

Սույն ԿԷԿԳԾ-ի 11-րդ գլխում սահմանվել է ներդրումային «կոշտ» միջոցառումների փաթեթ, որոնք ուղղված են համայնքում զգալի էներգախնայողություն և CO₂ արտանետումների շոշափելի կրճատում ապահովելուն: Այս միջոցառումները ընդգրկում են հիմնարար ոլորտները՝ համայնքային (բյուջետային) կառույցներ ու ենթակառուցվածքներ, արտաքին (փողոցային) լուսավորություն, բնակելի սեկտոր և տրանսպորտ: Չնայած միջոցառումները պահանջում են ներդրումներ, ակնկալվող արդյունքներն անհամեմատ զգալի են՝ ի տարբերություն «փափուկ» քայլերի ստացվող էներգախնայողությունը և արտանետումների կրճատումը տեսանելի կլինեն ծրագրի իրականացման արդյունքում:

ԿԷԿԳԾ-ի 12-րդ գլխում ներկայացված «փափուկ» միջոցառումները կազմակերպչական, կրթադաստիարակչական և քաղաքականության խորացման բնույթի գործողություններ են, որոնք ուղղակի մեծ ֆինանսական ծախսեր չեն պահանջում, սակայն էականորեն նպաստում են ծրագրի իրականացմանը և կայունությանը: Այդ միջոցառումները համայնքապետարանի կողմից կարող են իրականացվել համեմատաբար հեշտորեն՝ համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ, և հիմնականում միտված են բարձրացնելու հասարակության և մասնագետների իրազեկվածությունը, զարգացնելու ինստիտուցիոնալ կարողությունները և ստեղծելու նպաստավոր պայմաններ «կոշտ» ներդրումային քայլերի արդյունավետ իրականացման համար: Հետևաբար, ըստ ծրագրի, «փափուկ» գործողությունների համար քանակական ցուցանիշներով CO₂ կրճատումների գնահատականներ չեն տրամադրվել. դրանք դիտարկվում են որպես աջակցող միջոցառումներ, որոնք ուղիղ արտանետումների նվազեցման հաշվարկ չունեն, բայց ապահովում են անհրաժեշտ միջավայրը և խթանում են ԿԷԿԳԾ-ի նպատակների իրականացմանը:

Գլուխ 11. ԶԳ արտանետումների նվազեցմանն ուղղված ներդրումային «կոշտ» միջոցառումներ

Կլիմայի գլոբալ փոփոխության բացասական ազդեցությունների մեղմման և Դաշնագրի շրջանակում ջերմոցային գազերի արտանետումները առնվազն 35 տոկոսով նվազեցնելու Թալին համայնքի ստանձնած հանձնառությունների իրականացման

նպատակով սույն բաժնում ներկայացվում են ներդրումներ պահանջող միջոցառումները: Վերջիններս ապահովում են ավելի շոշափելի, կայուն և երկարաժամկետ արդյունքներ արտանետումների կրճատման տեսանկյունից:

Այս բնույթի միջոցառումներն առաջարկվում են ԿԷԿԳԾ-ի ԱԵԿ-ում ներառված հիմնական ոլորտների համար, այն է՝ համայնքային շենքեր, արտաքին լուսավորություն, բնակելի շենքեր և հասարակական ու հանրային տրանսպորտ:

Ներկայացված գործողությունները համահունչ են ՀՀ էներգետիկ և կլիմայական ռազմավարությունները/տեսլականները սահմանող, ԿԷԿԳԾ-ում հիշատակված, փաստաթղթերի դրույթներին, ինչպես նաև ազգային և տեղական մակարդակներում ընդունված որոշումներին և զարգացման ծրագրերին:

Համայնքապատկան և բնակելի շենքերում ու շինություններում նախատեսված միջոցառումները համապատասխան են ՀՀ կառավարության 25 դեկտեմբերի 2014 թ. թիվ 1504-Ն «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» որոշման դրույթներին, որոնց համաձայն՝ շենքերում ջերմային և էլեկտրական էներգիայի սպառման ծավալների կրճատման, շահագործման ծախսերի նվազեցման և նորմատիվային հարմարավետության պայմանների ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները:

- պատերի արտաքին մակերևույթների պաշտպանությունն ապահովող երեսապատման, սվաղի, ջրակայուն և ջերմակայուն խառնուրդներով ներկերի կիրառում,
- պատող կոնստրուկցիաների հնարավոր նվազագույն մակերեսներ ապահովող ծավալահատակագծային լուծումների կիրառում,
- պատող կոնստրուկցիաների՝ արտաքին պատերի, նախամուտքերի, տանիքների, նկուղների ջերմամեկուսացում,
- էներգաարդյունավետ պատուհանների և մուտքի դռների կիրառում,
- բացվածքների, արտաքին պատերի և ծածկերի տարրերի կցորդումների քփացում,
- սերտիֆիկացված ջերմամեկուսիչ շինարարական նյութերի օգտագործում,
- էներգախնայող ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման, տաք ջրամատակարարման և լուսավորության համակարգերի ու սարքավորումների կիրառում,
- ծախսաարդյունավետությունը հիմնավորելու դեպքում՝ այլընտրանքային էներգետիկ համակարգերի՝ արեգակնային ջրատաքացման և ֆոտովոլտային սարքավորումների ու ջերմային պոմպերի կիրառում:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ոլորտում առաջարկվող միջոցառումները համահունչ են «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի դրույթներին, մասնավորապես՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների և ինքնավար էներգաարտադրողների խմբերի կողմից սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման պայմանների սահմանման մասով:

ՀՀ օրենսդրությամբ և ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերով սահմանված կարգավորումների համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք էլեկտրաէներգիայի սեփական կարիքները բավարարելու համար կարող են տեղադրել մինչև 150 կՎտ հզորությամբ արևային ինքնավար կայաններ և արտադրել էլեկտրաէներգիա, իսկ ավելցուկը վաճառել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում:

Վերջին տարիներին վերոնշյալ տեխնոլոգիայի ներդրման և կիրառման ծավալները ՀՀ-ում բնութագրվում են կայուն և արագ աճի միտումներով, ինչը վկայում է վերականգնվող էներգետիկ ռեսուրսների զարգացման համար ձևավորված նպաստավոր կարգավորող միջավայրի մասին:

Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից սահմանված հարկային և մաքսային արտոնությունների շրջանակում, 2022 թվականից սկսած, Հանրապետությունում տարեկան ներմուծվում է շուրջ 12,000 -15,000 էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոց, որոնք ազատված են ավելացված արժեքի հարկից և մաքսատուրքից, նպաստելով տրանսպորտային ոլորտում արտանետումների կրճատմանը և էլեկտրական շարժիչով տրանսպորտի կիրառման խթանմանը:

Հանրապետությունում առկա վերոնշյալ միտումները և զարգացման տեմպերը գերակա են նաև Թալին համայնքի ԿԵԿԳԾ-ի մշակման համար: Հաշվի են առնվել նաև «ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի 2023-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի» անմիջական նպատակները:

11.1. ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում վերականգնվող ռեսուրսների կիրառմամբ էներգիայի արտադրության խթանման քաղաքականության շրջանակներում բարենպաստ օրենսդրական և կարգավորիչ դաշտ է ստեղծվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից սեփական կարիքների բավարարման նպատակով ինքնավար արևային տեղակայանքներ կառուցելու համար:

Ինքնավար համակարգերը գործում են բաշխիչ ցանցի հետ ինտեգրված, այսինքն միացած են ցանցին երկկողմանի առևտրային էլեկտրական հաշվիչի միջոցով, ինչը թույլ է տալիս տեղակայանքների կողմից արտադրված էներգիայի ավելցուկն առաքել բաշխիչ ցանցին: «Կանաչ» էներգիայի տեղական արտադրությունը թույլ կտա զգալիորեն նվազեցնել (կամ նույնիսկ զրոյացնել) «Համայնքային կառույցներ» (Գլուխ 4) սեկտորում ՋԳ արտանետումները: Միջոցառման իրականացման պատասխանատուն համայնքապետարանն է, իսկ որպես ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ համայնքային բյուջեն, պետական բյուջեից (ՊԲ) տրամադրվող ֆինանսական աջակցությունը (օրինակ՝ սուբվենցիոն ծրագրի կամ հիմնադրամների շրջանակներում), ՀՎԷԷՀ-ն, ինչպես նաև ԵՄ-ի կողմից տրամադրվող միջոցները:

Համայնքապետական ենթակայության շենքերի էներգաարդյունավետ արդիականացման և վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմանն ուղղված աշխատանքների ծավալները գնահատվել են համայնքապետարանի աշխատակիցների կողմից տրամադրված տեխնիկական տեղեկատվության հիման վրա, իսկ կատարված

հաշվարկներն ու ֆինանսական գնահատականները կրում են նախնական (մոտավոր) բնույթ:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1.1 Թալին համայնքի թվով 24 բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի և նրանց հետ միասին էլեկտրական էներգիա սպառող համայնքապատկան այլ կազմակերպությունների համար ՖՎ համակարգերի տեղադրում

Հաշվի առնելով Թալին համայնքի բնակլիմայական պայմանները¹⁶ արեգակնային ճառագայթման բարձր ինտենսիվությամբ, ՎԷ պաշարների կիրառումը կարևոր է համայնքի էլեկտրամատակարարման հուսալիության և արտանետումների նվազեցման տեսանկյունից: Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է տեղադրել էլեկտրամատակարարման նպատակով 187,5 կՎտ դրվածքային հզորությամբ և մոտ 303 ՄՎտժ տարեկան արտադրությամբ ՖՎ համակարգեր: Միջոցառումների իրականացումը կպահանջի մոտ 37 500,000 դրամ:

Էներգակիրների խնայողության և ՋԳ արտանետումների նվազեցման արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում:

Միջոցառում 1.1.1 Թալին համայնքի թվով 24 բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի և նրանց հետ միասին էլեկտրական էներգիա սպառող համայնքապատկան այլ կազմակերպությունների համար ՖՎ համակարգերի տեղադրում						
Բնակավայրը և համայնքապատկան սուբյեկտի անվանումը	Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Դրվածքային հզորություն, կՎտ	Էներգա կիրներ ի խնայողություն/արտադրություն և ՄՎտժ/տարի	CO₂-ի կրճատում/տարի	Ներդրման տարի
Արտենի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի և փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,400.0	7,0	11.332	2.722	2026-2030
Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի և փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,400.0	7,0	11.332	2.722	2026-2030

¹⁶ Համաձայն Global Solar Atlas կայքի տվյալների արգակնային ճառագայթման ինտենսիվությամբ կազմում է մոտ 1 966 kWh/m² իսկ 1 կՎտ դրվածքային պիկային էլ. հզորությունից ակնկալվում է մոտ 1,558 կՎտժ էլ. էներգիայի արտադրություն:

<https://globalsolaratlas.info/detail?c=38.702659,42.341309,7&s=40.383707,43.873599&m=site&pv=small,180,35,1>

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

կառուցում						
Դաշտադեմի վարչական ղեկավարի նստավայր+<<Դաշտադեմի մանկապարտեզ>> ՀՈԱԿ+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	6,400.0	32,0	51.805	12.445	2026-2030
Դավթաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի և փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8.95	1.944	2026-2030
Դիան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի և փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	600.0	3,0	4.856	1.166	2026-2030
Եղնիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+ Մանկապարտեզի+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,600.0	8,0	12.951	3.111	2026-2030
Զարինջա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+ Մշակույթի տուն+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,000.0	10,0	16.185	3.888	2026-2030
Զովասար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի + փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,000.0	10,0	16.185	3.888	2026-2030
Թաթուլ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+ Մշակույթի տուն+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,200.0	6,0	9.703	2.333	2026-2030
Իրինդի Մշակույթի տուն+վարչական ղեկավարի նստավայր+գրադարան+բուժկետ+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8.095	1.944	2026-2030
Լուսակն բնակավայրի վարչական	ՀՊ,	800.0	4,0	6.475	1.555	2026-2030

ղեկավարի նստավայրի և փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ					
Կաթնաղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի և փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,600.0	8,0	12.951	3.111	2026-2030
Կարմրաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+հանդիսությունների սրահի + փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,200.0	6,0	9.703	2.333	2026-2030
Կաքավաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի և փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8.095	1.944	2026-2030
Ներքին Բազմաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի + փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	3,600.0	18,0	29.140	7.000	2026-2030
Ներքին Սասնաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+Մշակույթի տան+բուժկետ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,400.0	7,0	11.332	2.722	2026-2030
Շղարշիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+Մշակույթի տան+բուժկետ+Մանկապարտեզ+գրադարան+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,200.0	6,0	9.703	2.333	2026-2030
Ոսկեթափ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի + փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8.095	1.944	2026-2030
Պարտիզակ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+ բուժկետ +	ՀՊ, ՀՎԷԷՀ,	800.0	4,0	6.475	1.555	2026-2030

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՊԲ, ԵՄ					
Մոսեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+Մշակույթի տուն+Մանկապարտեզ+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8.095	1.944	2026-2030
Վերին Բազբաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+Մշակույթի տուն+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,200.0	11,0	17.807	4.278	2026-2030
Վերին Մասնաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+Մշակույթի տուն+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8.095	1.944	2026-2030
Ցամաքասար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի+Մշակույթի տուն+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8.095	1.944	2026-2030
Գառնահովիտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,100.0	5,5	8.903	2.139	2026-2030



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1.2 Թալին համայնքի թվով 11 համայնքապատկան մշակութային և մարզական կառույցների համար ՖՎ համակարգերի տեղադրում

Միջոցառման շրջանակներում առաջարկվում է թվով 11 համայնքապատկան կառույցների էլեկտրամատակարարման նպատակով 233,4 կՎտ դրվածքային հզորությամբ և մոտ 377,8 ՄՎտժ տարեկան արտադրությամբ ՖՎ համակարգերի տեղադրում: Միջոցառումների իրականացումը կպահանջի մոտ 46 680,000 դրամ:

Միջոցառում 1.1.2 Թալին համայնքի թվով 11 համայնքապատկան մշակութային և մարզական կառույցների համար ՖՎ համակարգերի տեղադրում						
Բնակավայրը և համայնքապատկան	Իրականաց նող	Արժեք, հազ դրամ	Դրված քային	Էներգակ իրների	CO₂-ի կրճա	Ներդրմա ն տարի

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

սուբյեկտի անվանումը			հզորություն, կՎտ	խնայողություն/արտադրություն կՎտժ/տարի	տում/տարի	
Ազարակավանի Մշակույթի տուն +Մանկապարտեզ+ փողոցային լուսավորության համակարգը սնուցող ՖՎ էլեկտրական կայանի կառուցում	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,000.0	10,0	16,185	3.888	2026-2030
Թալինի մանկական գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,200.0	11,0	17,807	4.278	2026-2030
Թալինի Մշակույթի տուն ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	7,600.0	38,0	61,518	14.779	2026-2030
Թալինի Մարզական կենտրոն ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,800.0	14,0	22,664	5.445	2026-2030
Իրինդի հանդիսությունների սրահ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,000.0	5,0	8,095	1.944	2026-2030
Արտենի բնակավայրի Մշակույթի Տուն	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,000.0	10,0	16,185	3.888	2024
Ոսկեթաս բնակավայրի Մշակույթի Տուն	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,000.0	9,9	16,027	3.850	2026-2030
Զովասար բնակավայրի Մշակույթի Տուն	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,000.0	9,9	16,027	3.850	2026-2030
Կարմրաշեն բնակավայրի Մշակույթի Տուն	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	2,000.0	9,9	16,027	3.850	2026-2030
Ներքին Բազմաբերդ բնակավայրի Մշակույթի Տուն	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	9,900.0	49,5	80,135	19.251	2026-2030
Արագածավան բնակավայրի Մշակույթի Տուն	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	11,880.0	59,4	96,162	23.102	2026-2030



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1.3 Արտենի, Գետափի և Արագածավան բնակավայրերի խորքային և հորերի էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարելու համար ՖՎ համակարգի տեղադրում

Արտենի և Գետափ բնակավայրերի խորքային հորերի էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարելու նպատակով, առաջարկվում է կառուցել ՖՎ կայաններ, համապատասխանաբար 95,0 և 6,0 կՎտ դրվածքային հզորություններով, որոնց արժեքը կկազմի շուրջ 20 200 000 դրամ:

Արագածավան բնակավայրի խորքային հորի համար արդեն իսկ 2024 թվականին տեղադրվել ՖՎ համակարգ 250,0 կՎտ դրվածքային հզորությամբ:

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Միջոցառում 1.1.3 Արտենի, Գետափի և Արագածավան բնակավայրերի խորքային հորերի էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարելու համար ՖՎ համակարգի տեղադրում

Բնակավայր	Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի	CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
Արտենի	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	19,000.0	153.795	36.2956	2026-2030
Գետափ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,200.0	9.708	2.291	2026-2030
Արագածավան	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	50,000.0	404.7	95.51	2024




ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1.4 Թալին համայնքի թվով 5 մանկապարտեզների համար ՖՎ համակարգերի տեղադրում

Միջոցառման շրջանակներում առաջարկվում է թվով 5 մանկապարտեզների էլեկտրական էներգիայի պահանջարկը բավարարելու համար 265,8 կՎտ դրվածքային հզորությամբ և մոտ 430,3 ՄՎտժ տարեկան արտադրությամբ ՖՎ համակարգերի տեղադրում: Միջոցառումների իրականացումը կպահանջի մոտ 53 160,000 դրամ:

Միջոցառում 1.1.4 Թալին համայնքի թվով 5 մանկապարտեզների համար ՖՎ համակարգերի տեղադրում

Մանկապարտեզ	Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Դրվածքային հզորություն, կՎտ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն կՎտժ/տարի	CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
Թալինի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	23,760.0	118,8	192,325	46.204	2026-2030
Թալինի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	1,400.0	7,0	11,332	2.722	2026-2030
Ներքին Սասնաձենի Մանկապարտեզ ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	6,000.0	30,0	48,567	11.667	2025
«Արագածավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	11,000.0	55,0	89,039	21.390	2026-2030
«Մաստարայի մանկապարտեզ» ՀՈԱԿ	ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	11,000.0	55,0	89,039	21.390	2026-2030



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1.5 Արագածավան, Կաթնաղբյուր, Ներքին Բազմաբերդ, Ոսկեթաս և Մուսեր բնակավայրերի մշակույթի տների էներգաարդյունավետության բարձրացում

Նշված միջոցառման շրջանակներում Արագածավան, Կաթնաղբյուր, Ներքին Բազմաբերդ, Ոսկեթաս և Մուսեր բնակավայրերի մշակույթի տների շենքերում, որոնց սպառումները ելակետային տարում գումարային կազմել են՝ 34.864 ՄՎտժ էլեկտրաէներգիա, առաջարկվում է իրականացնել էներգաարդյունավետության միջոցառումներ.

- տանիքաձածկերի ջերմամեկուսացում ըստ անհրաժեշտության, փքեցված պեռլիտի ավազով և խճով (200 մմ հաստությամբ),
- դռների և պատուհանների փոխարինում նոր էներգաարդյունավետ պատուհաններով և դռներով ըստ անհրաժեշտության (մետաղապլաստե 4 խցիկանի շրջանակով, երկշերտ ապակեպատվածքով),
- արտաքին պատերի մասնակի կամ ամբողջական ջերմամեկուսացում, փրփրապոլիստիրոլային կամ հանքային բամբակի սալերով (50 - 100 մմ հաստությամբ),
- նկուղի ծածկի ջերմամեկուսացում՝ նկուղային հարկի առկայության դեպքում, փրփրապոլիստիրոլային կամ հանքային բամբակի սալերով (50 մմ հաստությամբ),
- արհեստական լուսավորության համակարգի տեղադրում ԼԴ լուսատուներով, ջերմամատակարարման սխեմայի բարելավում:

Ընդունելով, որ սպառված էլեկտրաէներգիայի 10%, գազի շուրջ 80% օգտագործվել է ջեռուցման նպատակով, և կանխատեսելով, որ առաջարկվող միջոցառումների իրականացումը թույլ կտա նվազեցնել շենքերի ջերմային կորուստները, ինչպես նաև կբարելավի և հետևաբար, ջեռուցման ջերմապահանջարկը մոտավորապես 40 %-ով, միջոցառումների կիրառումից հետո ջեռուցման նպատակով ծախսվող էներգիայի ընդհանուր խնայողությունը կկազմի գումարային 3.48 ՄՎտժ/տարի:

Միջոցառում 1.1.5 Արագածավան, Կաթնաղբյուր, Ներքին Բազմաբերդ, Ոսկեթաս և Մուսեր բնակավայրերի մշակույթի տների էներգաարդյունավետության բարձրացում					
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի		CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
ՀԲ, ՊԲ	50,000.0	ԷԷ	Σ		
		3.48	3.48	0.823	2026-2030

Առաջարկվող միջոցառումների իրականացման ընթացքում նպատակահարմար է նախատեսել նաև տվյալ շենքերի հիմնանորոգման և ամրացման (սեյսմակայունության բարձրացման) համար անհրաժեշտ լրացուցիչ կապիտալ ծախսերը՝ ապահովելով աշխատանքների ծավալների հստակեցում էներգետիկ և տեխնիկական աուդիտների իրականացման շրջանակներում:

11.2. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ ունենալով բարձրացնել Թալին խոշորացված համայնքի տնտեսական, բնապահպանական և սոցիալական կայունությունը, համայնքը մտադիր է համագործակցել միջազգային դոնոր կազմակերպությունների հետ էներգախնայող և ցածր արտանետումներով զարգացման մոդելի մշակման, էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների հաշվին էներգիայի տեղական արտադրությանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով:

Թալին համայնքը նախատեսում է կառուցել 0.5 ՄՎտ հզորությամբ համայնքային առևտրային ՖՎ էլեկտրակայան, որի կողմից արտադրված էլեկտրաէներգիան կվաճառվի բաշխիչ ցանցին, իսկ ստացված հասույթը կկուտակվի համայնքային խնայողական ֆոնդում: Համաձայն պահանջների, էլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով համայնքապետարանը պետք է ստեղծի համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.1 Համայնքային առևտրային ՖՎ էլեկտրակայանի կառուցում

Սույն միջոցառման շրջանակներում 2026-2030թթ. ընթացքում Թալինում նախատեսվում է կառուցել և շահագործել 0.5 ՄՎտ հզորությամբ համայնքային առևտրային ՖՎ էլեկտրակայան, որի տարեկան արտադրությունը կհասնի մոտ 809 ՄՎտժ-ի:

Միջոցառումների իրականացումը կպահանջի մոտ 100 մլն. ՀՀ դրամ: Իրականացման պատասխանատուն համայնքապետարանն է, իսկ որպես ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ համայնքային բյուջեն, պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը (օրինակ՝ սուբվենցիոն ծրագրի կամ հիմնադրամների շրջանակներում), միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը:

Վերականգնվող էներգիայի արտադրության և ՋԳ արտանետումների նվազեցման հաշվարկի արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում:

Միջոցառում 2.1.1 Համայնքային առևտրային ՖՎ էլեկտրակայանի կառուցում				
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի	CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	100,000.0	809.000	190.924	2026-2030

11.3. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲՆԱԿԵԼԻ ՄԵԿՏՈՐՈՒՄ

Բնակելի սեկտորը հանդիսանում է էներգակիրների խոշոր սպառող, որտեղ օգտագործվում է էլեկտրաէներգիա, բնական գազ, վառելիքայտ, ՀՆԳ և աթար: Համաձայն Դաշնագրի մեթոդաբանության, այս ոլորտը հիմնական չորս ոլորտներից մեկն է, որի էներգասպառումը և դրա հետ կապված ՋԳ արտանետումները կարող են

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

ներառվել ԱԵԿ-ի հաշվարկում, ինչպես նաև, արտանետումների նվազեցման «մեղմման» միջոցառումների ցանկում:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.1.1 Սեփականատերերի կողմից առանձնատներում ՖՎ համակարգերի տեղադրում

Այս գործողության շրջանակներում նախատեսվում է 2026-2030թթ. ընթացքում առանձնատների մի մասի տանիքներում կամ պահանջներին համապատասխանող տնամերձ կամ այլ տարածքներում անհատական ինքնավար ՖՎ համակարգերի տեղադրում՝ յուրաքանչյուրը 2.5 կՎտ պիկային հզորությամբ, որը Թալինի բնակլիմայական պայմաններում բավարարում է ՀՀ միջին վիճակագրական առանձնատան տարեկան էներգիայի պահանջարկը:

Տնային տնտեսությունների սեփականատերերի կողմից այս միջոցառման իրականացման խթանիչ գործոններից կլինի գրեթե բոլոր համայնքային ենթակայության շենքերի տանիքներին ՖՎ համակարգերի տեղադրման ցուցադրական նախագծերի իրականացումը:

Ենթադրվում է, որ մինչև 2030թ. Համայնքի առանձնատների սեփականատերերի առնվազն 30%-ը կունենան ֆինանսական հնարավորություններ մասնակցելու այս միջոցառմանը և իրենց առանձնատների համար տեղադրեն, միջին հաշվով 2.5 կՎտ պիկային հզորությամբ ինքնավար ՖՎ համակարգեր՝ ընտանիքների էլեկտրաէներգիայի պահանջարկի ամբողջական կամ մասնակի բավարարման համար: Այդ համակարգերի յուրաքանչյուրի տեղադրման համար կպահանջվի մինչև 20 մ² տարածք: Իսկ տեղադրված ՖՎ համակարգերի գումարային տարեկան արտադրանքը կկազմի մոտ 4 320.5 ՄՎտժ/տարի, իսկ ՋԳ արտանետումների նվազեցումը՝ 629.83 տCO₂/տարի:

Ծրագրի իրականացման արժեքն է մոտ 533 760 000 դրամ: Իրականացման պատասխանատուն առանձնատների սեփականատերերն են, իսկ որպես ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ տնային տնտեսությունների բյուջեներն, պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը և/կամ դոնոր կազմակերպությունների և միջազգային ծրագրերի կողմից տրամադրվող միջոցները:

Վերականգնվող էներգիայի արտադրության և ՋԳ արտանետումների նվազեցման հաշվարկի արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում:

Միջոցառում 3.1.1 Սեփականատերերի կողմից առանձնատներում ՖՎ համակարգերի տեղադրում				
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի	CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
SS	533,760.0	4,320.5	629.83	2026-2030



ՏԻՄ-երը չունեն մեխանիզմներ՝ անմիջական ազդելու բնակելի սեկտորում Էներգախնայողության միջոցառումների իրականացման վերաբերյալ բնակիչների և սեփականատերերի որոշումների կայացման գործընթացի վրա: Այնուամենայնիվ, այս միջոցառման շրջանակներում ակնկալվում է, որ Էներգակիրների գների աստիճանական աճի, Էներգախնայող տեխնոլոգիաների հասանելիության, տարբեր ֆինանսավորման մեխանիզմների (ներառյալ՝ սուբսիդիաների և փափուկ նպատակային վարկերի) առկայության և հանրային իրազեկվածության բարձրացման համատեքստում, բնակելի հատվածում Էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների թիվը աստիճանաբար կմեծանա:

Ակնկալվում է, որ առաջարկվող գործողության շրջանակներում Էներգասպառման և դրա հետ կապված ծախսերի նվազեցման, ինչպես նաև հարմարավետության բարձրացման նպատակով, Թալին համայնքի առանձնատների սեփականատերերի մի մասը կիրականացնի հետևյալ գործողությունները.

- տանիքածածկերի փոխարինում և տանիքների (ձեղնահարկերի) ջերմամեկուսացում, փքեցված պեռլիտի ավազով և խճով (200 մմ հաստությամբ),
- դռների և պատուհանների փոխարինում նոր Էներգաարդյունավետ պատուհաններով և դռներով մետաղապլաստե 4 խցիկանի շրջանակով, երկշերտ ապակեպատվածքով,
- արտաքին պատերի մասնակի կամ ամբողջական ջերմամեկուսացում, փրփրապոլիստիրոլային կամ հանքային բամբակի սալերով (50 - 100 մմ հաստությամբ),
- նկուղի ծածկի ջերմամեկուսացում՝ նկուղային հարկի առկայության դեպքում, փրփրապոլիստիրոլային կամ հանքային բամբակի սալերով (50 մմ հաստությամբ),
- արհեստական լուսավորության համակարգի տեղադրում ԼԴ լուսատուներով, ջեռուցման համակարգի փոխարինում, բնական գազի կոնդենսացիոն կաթսայով, ջերմամատակարարման սխեմայի բարելավում:

Ելակետային տարում Թալին համայնքի բնակելի սեկտորում սպառվել է 16,167.3 ՄՎտժ էլեկտրաէներգիա, 44,749.4 ՄՎտժ-ին համարժեք գազ: Ընդունելով, որ սպառված էլեկտրաէներգիայի 10-15%, գազի շուրջ 80% օգտագործվել է ջեռուցման նպատակով, և կանխատեսելով, որ առաջարկվող միջոցառումների իրականացումը թույլ կտա նվազեցնել շենքերի ջերմային կորուստները, և հետևաբար, ջեռուցման ջերմապահանջարկը մոտավորապես 40 %-ով, միջոցառումների կիրառումից հետո ջեռուցման նպատակով ծախսվող էներգիայի ընդհանուր խնայողությունը կկազմի 21,804.720 ՄՎտժ/տարի:

Միջոցառում 3.1.2 Թալին համայնքի առանձնատների Էներգաարդյունավետության բարձրացում				
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն	CO ₂ -ի կրճատում	Ներդրման տարի

Մասնավոր	1000,000.0	ՄՎտժ/տարի			տ/տարի	2026-2030
		ԷԷ	ԲԳ	Σ		
		1,996.4	19,808.32	21,804.720	8,394.478	

11.4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄԵՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՍԵԿՏՈՐՈՒՄ

2023 թվականի համար հաշվարկված Թալին համայնքի ԱԵԿ-ի տվյալների համաձայն, ավտոմոբիլային տրանսպորտը հանդիսանում է էներգակիրների սպառման ամենախոշոր ոլորտը, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների խոշոր աղբյուրը համայնքի տարածքում:

Թալին համայնքում շահագործվում են ՀՀ-ում լայնորեն կիրառվող շարժիչային վառելիքի բոլոր հիմնական տեսակներով աշխատող տրանսպորտային միջոցներ, մասնավորապես՝ ՍԲԳ, ՀՆԳ, բենզինով և դիզելային վառելիքով աշխատող ավտոմեքենաներ:

Այս ոլորտում առաջարկվող հիմնական միջոցառումը հանդիսանում է գործող հանածո վառելիքով աշխատող մարդատար ավտոմեքենաների աստիճանական փոխարինումը էլեկտրական տրանսպորտային միջոցներով: Բենզինով աշխատող ավտոմեքենաների փոխակերպումը ՍԲԳ-ի տվյալ ծրագրի շրջանակում չի դիտարկվել որպես առանձին միջոցառում:

 **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4.1.1 Համայնքային մարդատար և բեռնատար մեքենաների փոխարինում էլեկտրական մեքենաներով**

Հաշվի առնելով շուկայում էլեկտրական շարժիչներով մեքենաների գների նվազեցման և ավելի հասանելի դառնալու գործոնը, սույն միջոցառման շրջանակներում նախատեսվում է, որ 2026թ.-ից մինչև 2030թ համայնքային մեքենաների կփոխարինվեն էլեկտրական մեքենաներով և կկառուցվեն լիցքավորման կայաններ:

Էլեկտրամոբիլների օգտագործումը խրախուսելու նպատակով համայնքապետարանի կողմից՝ համապատասխան շահառուների և գործընկերների հետ համատեղ, պետք է ձեռնարկվեն որոշակի խթանիչ գործողություններ, այն է՝

- Էլեկտրական մեքենաների համայնքային լիցքավորման կայանների կառուցում (ֆինանսական հնարավորությունների դեպքում), կամ լիցքավորման մասնավոր կայանների համար հարմար արտոնյալ պայմաններով տարածքների տրամադրում:
- Էլեկտրական մեքենաների համար քաղաքի կենտրոնական հատվածներում արտոնյալ (անվճար) կայանատեղերի կազմակերպում:
- Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանքների կառուցումը դարձնել նախապայման կառուցապատման շինարարական թույլտվությունների տրամադրման համար և այլն:

Միջոցառման հաշվարկի արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում:

Միջոցառում 4.1.1 Համայնքային մարդատար և բեռնատար մեքենաների փոխարինում էլեկտրական մեքենաներով								
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի					CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
		Բենզին	Դիզել	ՍԲԳ	ՀՆԳ	Σ		
ՀՊ	650,000	64.4	300.0	800.7	-	1,165.1	257.8	2026-2030



Միջոցառում 4.1.2 Մասնավոր և առևտրային մարդատար տրանսպորտի 20% մեքենաների փոխարինում էլեկտրական մարդատար մեքենաներով

Հաշվի առնելով էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների շուկայական գների նվազման և դրանց հասանելիության աստիճանական աճի միտումները՝ սույն միջոցառման շրջանակում նախատեսվում է, որ 2026–2030 թվականների ընթացքում մասնավոր և առևտրային մարդատար ավտոպարկի մոտ 20 տոկոսը կփոխարինվի էլեկտրական տրանսպորտային միջոցներով:

Միջոցառման իրականացման արդյունքում ստացված հաշվարկների արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Միջոցառում 4.1.2 Մասնավոր և առևտրային մարդատար տրանսպորտի 40% մեքենաների փոխարինում էլեկտրական մարդատար մեքենաներով								
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի					CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
		Բենզին	Դիզել	ՍԲԳ	ՀՆԳ	Σ		
Մասնավոր	1000,000	15,480.28	20,804.70	97,842.70	10,920.80	145,048.69	6,330.539	2026-2030

11.5. Միջոցառումներ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ



Միջոցառում 5.1.1 Համայնքի թվով 5 բնակավայրերի փողոցային լուսավորության համար ՖՎ համակարգերի տեղադրում

Ելակետային տարում բնակավայրերում փողոցային լուսավորության համակարգերի տարեկան էներգասպառման առկա տվյալների հիման վրա սույն միջոցառումը նախատեսում է, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նպատակով, փողոցային լուսավորության համակարգերի էլեկտրամատակարարման ապահովում փոքր հզորության ինքնավար ՖՎ էլեկտրակայանների միջոցով:

Տնտովոլտային համակարգերը նախատեսվում է տեղակայել համայնքի հինգ բնակավայրերում, իսկ դրանց դրվածքային հզորությունները և տարեկան էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Բնակավայր	ՖՎ կայանի հզորությունը, կՎտ	Էլեկտրական էներգիայի տարեկան արտադրություն, կՎտժ/տարի
Արագածավան	9,0	14,570.000
Գառնահովիտ	3,0	4,856.000
Թալին	21,0	34,000.000
Կաքավաձորի խաչի լուսավորության	3,0	4,856.000
Մաստարա	20,0	32,378.000

Սույն միջոցառման իրականացման պատասխանատու մարմինը հանդիսանում է համայնքապետարանը, իսկ ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ կարող են հանդիսանալ համայնքային բյուջեն, պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը (մասնավորապես՝ սուբվենցիոն ծրագրերի և տարբեր հիմնադրամներ), ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և դոնոր կառույցների կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը:

Վերականգնվող էներգիայի արտադրության և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման հաշվարկների արդյունքները ներկայացված են ստորև

Միջոցառում 5.1.1 Համայնքի թվով 5 բնակավայրերի փողոցային լուսավորության համար ՖՎ համակարգերի տեղադրում				
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի	CO ₂ -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
ՀՊ, ՀՎԷԷՀ, ՊԲ, ԵՄ	18,320.0	90.660	21.396	2026-2030

բերված աղյուսակում:

11.6 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿՈՇՏ ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6.1.1 ԿԿԹ տեսակավորման համակարգի ներդրում

Կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) տեսակավորումը գործընթաց է, որի ընթացքում թափոնները բաժանվում են առանձին բաղադրիչների՝ ըստ դրանց տեսակի և հետագա մշակման հնարավորության: Տեսակավորումը կարող է իրականացվել ինչպես ձեռքով, այնպես էլ ավտոմատ եղանակով՝ տեսակավորող հոսքագծերի կիրառմամբ:

Սույն միջոցառման շրջանակում նախատեսվում է տեղադրել տարբեր գույների աղբամաններ՝ տարբեր տեսակի թափոնների համար: Տեսակավորման արդյունքում առանձնացվող այն թափոնները, որոնք ենթակա են վերամշակման, կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված վերամշակող ընկերություններին:

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա կրճատել աղբավայրում տեղադրվող թափոնների ծավալները, ինչի արդյունքում կնվազեն նաև դրանց քայքայման ընթացքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումները: Տարբեր երկրների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ թափոնների տեսակավորման համակարգի ներդրման արդյունքում հնարավոր է ապահովել ԿԿԹ աղբավայրային տեղադրման ծավալների մոտ 50 տոկոս կրճատում:

Սույն միջոցառման իրականացման պատասխանատու մարմինը հանդիսանում է համայնքապետարանը: Ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ կարող են հանդիսանալ համայնքային բյուջեն, պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը (մասնավորապես՝ սուբվենցիոն ծրագրեր), ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և դոնոր կառույցների կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը:

Միջոցառում 6.1.3 ԿԿԹ տեսակավորման համակարգի ներդրում				
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	Աղբի կրճատում, տ/տարի	CO ₂ համար. -ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
Համայնքապետարանի կոմունալ ծառայություն	16,000.0	1366.4	866.6	2026-2030

11.7. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7.1.1 Միջոցառումներ անտառային տարածքների ավելացման ուղղությամբ

Համաձայն IPCC 2006 Ուղեցույցի՝ «Անտառային հողեր» կատեգորիայի շրջանակում դիտարկվում են հետևյալ երկու ենթակատեգորիաները.

- Անտառային հողեր՝ մնացած անտառային հողեր (3B1a), որոնց դեպքում սվյալ հողատարածքները հաշվետու տարվան նախորդող ավելի քան 20 տարիների ընթացքում չեն ենթարկվել հողօգտագործման փոփոխությունների,
- Հողեր՝ վերափոխված անտառային հողերի (3B1b), որոնք գտնվում են անցումային փուլում և հաշվետու տարվան նախորդող 20 տարիների ընթացքում հողօգտագործման փոփոխության արդյունքում վերափոխվել են անտառային հողերի:

Առաջարկվում է առաջիկա հինգ տարիների ընթացքում իրականացնել անտառային հողերի ընդլայնման միջոցառումներ, ընդ որում սվյալ կատեգորիայի մեջ ներառել նաև բնակավայրերի կանաչապատվող տարածքները: Թեև այս մոտեցումը որոշակիորեն տարբերվում է վերոնշյալ ձևակերպումներից, այն իր էությամբ արտահայտում է վերջնական էկոլոգիական արդյունքը՝ ածխաթթու գազի կլանումը (CO₂ sequestration):

Օգտագործելով ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990–2019 թթ. հաշվետվության 4.64¹⁷ աղյուսակում ներկայացված հարաբերակցությունները՝ ստացվում է միջինացված 0.493 տ CO₂/հա կլանման գործակից:

Նախատեսելով լրացուցիչ 10 հա տարածքների կանաչապատում, հնարավոր կլինի ապահովել անխաթառ գազի արտանետումների կրճատում հետևյալ հաշվարկով.

$$10 \text{ հա} \times 0.493 \text{ տ CO}_2/\text{հա} = 4.93 \text{ տ CO}_2:$$

Սույն միջոցառման իրականացման պատասխանատու մարմինը հանդիսանում է համայնքապետարանը, իսկ ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ կարող են հանդիսանալ համայնքային բյուջեն, ինչպես նաև տարբեր դրամաշնորհային ծրագրերը և արտաքին ֆինանսավորման մեխանիզմները:

Միջոցառում 7.1.1 Անտառապատում				
Իրականացնող	Արժեք, հազ դրամ	CO ₂ կլանում, տ/տարի	CO ₂ համար.-ի կրճատում տ/տարի	Ներդրման տարի
Համայնքապետարանի ծառայություններ, հասարակական կազմակերպություններ	21,000.0	4.9	4.9	2026-2030

Գլուխ 12. ՋԳ արտանետումների նվազեցմանն ուղղված ներդրումային «փափուկ» միջոցառումներ

Քանի որ ոչ ծախսատար, այսպես կոչված «փափուկ» միջոցառումների դեպքում ջերմոցային գազերի արտանետումների քանակական գնահատումը մեծապես կախված է բազմաթիվ արտաքին և վարքագծային գործոններից և չի կարող ապահովել բավարար ճշգրտություն, սույն փաստաթղթում նման միջոցառումները ներկայացված են առանց ջերմոցային գազերի արտանետումների քանակական հաշվարկի: Դրանք դիտարկվում են որպես ԿԵԿԳԾ իրականացմանն աջակցող, ուղղորդող և խթանող գործողություններ:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6.1.1 մասնակցություն միջազգային կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումներին կլիմայի եվ էներգետիկայի վերաբերյալ

Մի շարք միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ), Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), և այլ գործընկեր կառույցների կողմից պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, աշխատաժողովներ և քարոզարշավներ՝ ուղղված կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության, էներգասարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկ աղբյուրների

¹⁷ <https://drive.google.com/file/d/1T74FSFR2Hl8a0gHK8kRxx5H0NbkMri5z/view>

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

կիրառման խթանման հարցերին: Նման միջոցառումներին համայնքապետարանի աշխատակիցների մասնակցությունը կարևոր նշանակություն ունի՝ մասնագիտական կարողությունների զարգացման, փորձի փոխանակման և համայնքային քաղաքականությունների կատարելագործման տեսանկյունից:

Որպես օրինակ կարող է նշվել համայնքի մասնակցությունը «Երկրի ժամ» համաշխարհային նախաձեռնությանը, որը կազմակերպվում է Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) կողմից: Այն իրականացվում է ամեն տարի (սովորաբար՝ մարտ ամսվա վերջին շաբաթ օրը) և կոչ է անում անհատներին, համայնքներին և կազմակերպություններին մեկ ժամով՝ ժամը 20:30-ից մինչև 21:30-ը, անջատել ոչ առաջնային էլեկտրական լուսավորությունն ու էներգասպառող սարքերը՝ որպես բնապահպանական պատասխանատվության և մոլորակի հանդեպ հոգածության խորհրդանշական քայլ:

Մեկ այլ օրինակ է Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպվող «ԵՄ Կայուն էներգիայի շաբաթը» (ԵՄԿԷՇ), որը հանդիսանում է Եվրոպայում կայուն և վերականգնվող էներգիայի խթանմանը նվիրված ամենամեծ ամենամյա միջոցառումը: ԵՄԿԷՇ-ի շրջանակում աշխարհի շուրջ 60 երկրներում, Քաղաքապետերի դաշնագրին անդամակցած ավելի քան 10 000 համայնքներում, կազմակերպվում են «էներգիայի օրեր», որոնց նպատակն է համայնքների բնակչության և շահառուների իրազեկումը էներգախնայողության, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև կանաչ զարգացման և կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության վերաբերյալ:

Նման միջոցառումների ընթացքում սովորաբար կազմակերպվում են աշխատաժողովներ, ցուցահանդեսներ, բաց դռների օրեր, կրթական և մշակութային նախաձեռնություններ, մրցույթներ և այլ հանրային միջոցառումներ, որոնց հիմնական նպատակը բնակչության և շահառուների իրազեկման բարձրացումն է և էլեկտրաէներգիայի, բնական գազի և այլ էներգակիրների խելամիտ սպառման ու խնայողության խթանումը:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6.1.2 համայնքի կայուն էներգետիկ զարգացման գործընթացներին երիտասարդների ներգրավում


Ինչպես նշված է սույն փաստաթղթում, ծրագրի նպատակների արդյունավետ իրականացումը մեծապես պայմանավորված է բնակչության ներգրավվածության մակարդակով:

Սույն միջոցառման շրջանակում նախատեսվում է երիտասարդության, մասնավորապես՝ դպրոցականների շրջանում, տարածել էներգախնայողության և էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկատվական և ուսուցողական նյութեր: Ակնկալվում է, որ այս գործընթացում ներգրավված դպրոցականների կողմից կանաչ և կայուն զարգացման գաղափարների ակտիվ տարածման արդյունքում համայնքի բնակչության որոշակի հատվածը, մասնավորապես՝ դպրոցականների ընտանիքները, իրենց բնակարաններում և առանձնատներում կձեռնարկեն և կիրականացնեն էներգախնայող միջոցառումներ:

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Նշված միջոցառումները կարող են ներառել, մասնավորապես, ֆոտովոլտային պանելների տեղադրում, էլեկտրական տրանսպորտային միջոցների և էներգախնայող կենցաղային տեխնիկայի ձեռքբերում, ինչպես նաև էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների իրականացում:

Միջոցառման արդյունավետ իրականացման ապահովման նպատակով ակնկալվում է համայնքապետարանի էներգետիկ կառավարման ոլորտի պատասխանատու աշխատակիցների և ամբողջ անձնակազմի ամենօրյա, հետևողական և համակարգված աշխատանքը:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6.1.3 Համայնքապետարանում էներգետիկ կառավարման համակարգի զարգացում

Թալին համայնքում նախատեսվում է ներդնել **Համայնքային էներգետիկ կառավարման համակարգ (ՀԷԿՀ)**, որի միջոցով կիրականացվի համայնքի տարածքում էներգետիկ հոսքերի պարամետրերի՝ տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական, համակարգված և շարունակական վերահսկում ու կառավարում՝ սկսած էներգիայի ձեռքբերման և արտադրության գործընթացներից մինչև դրա փոխակերպումն ու վերջնական սպառումը:

Համակարգի շրջանակում կիրականացվի համայնքային ենթակայության շենքերի գույքագրում, կձևավորվի դրանց ջերմատեխնիկական և էներգետիկ ցուցանիշների տվյալների շտեմարան, ինչպես նաև շենքերի դասակարգում՝ նախապես սահմանված չափորոշիչների հիման վրա:

ՀԷԿՀ ներդրման հիմնական նպատակը համայնքի էներգետիկ կառավարման կայունության ապահովումն է՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով գործող համակարգերի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և ապահովելով զգալի տնտեսական օգուտներ համայնքային բյուջեի առավել խելամիտ և արդյունավետ կառավարման համար:

Համակարգի ներդրման և հետագա կատարելագործման նպատակով համայնքապետարանում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

- ձևավորել էներգետիկ կառավարման բաժնի կամ պատասխանատու անձի աշխատանքային խնդիրների և թիրախների հստակ ցանկ, ինչպես նաև պլանավորել դրանց հասնելու գործնական քայլերը,
- մշակել, պարբերաբար վերլուծել և կատարելագործել ՀԷԿՀ աշխատանքային ծրագրերը,
- սահմանել էներգախնայողության տեսանկյունից արդիականացման ենթակա շենքերի ընտրության չափորոշիչներն ու մեխանիզմները,
- կազմակերպել համայնքային ենթակայության հասարակական շենքերի էներգետիկ աուդիտ և մոնիթորինգ՝ հիմնական էներգետիկ ցուցանիշների բացահայտման և վերահսկման նպատակով,
- ապահովել շենքերի ջերմատեխնիկական և էներգաարդյունավետության հիմնական ցուցանիշների հաշվարկն ու վերլուծությունը, ներառյալ բազային

Էներգասպառումը, էներգիայի տեսակարար ծախսը, հարմարավետության մակարդակը և այլ ցուցանիշներ,

- իրականացնել արդիականացման ենթակա շենքերի համար անհրաժեշտ ներդրումների, էներգախնայողության ներուժի, ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, ինչպես նաև այլ էներգետիկ և ֆինանսատնտեսագիտական ցուցանիշների գնահատում,
- ապահովել ՀԷԿՀ բոլոր օղակների պատասխանատու աշխատակիցների մասնակցությունը կարողությունների զարգացման և վերապատրաստման ծրագրերին, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացներին,
- ապահովել համայնքում իրականացվող տարբեր միջազգային, էներգաարդյունավետության և կլիմայի մեղմման ծրագրերի արդյունքում ձեռք բերված էներգախնայողության և ՋԳ արտանետումների կրճատման տվյալների արժանահավատությունն ու մատչելիությունը,
- ըստ անհրաժեշտության կազմակերպել և իրականացնել ներքին քննարկումներ, սեմինարներ, աշխատաժողովներ, ուսումնական այցեր՝ ՀԷԿՀ գործունեության մեջ ներգրավված բոլոր օղակների, այդ թվում՝ համակարգող հանձնաժողովի անդամների, էներգետիկ կառավարչի և համայնքային ենթակայության հասարակական շենքերի պատասխանատուների մասնակցությամբ,
- ձեռնարկել գործուն քայլեր ակնկալվող էներգախնայողություններից ստացվող ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման համար Շրջանառու հիմնադրամի ստեղծման և գործարկման ուղղությամբ:

Ակնկալվում է, որ Համայնքային էներգետիկ կառավարման համակարգի ներդրման արդյունքում համայնքապատկան կառույցներում հնարավոր կլինի ապահովել ջերմոցային գազերի արտանետումների մոտ 5–15 տոկոս կրճատում:

Գլուխ 13. ՋԳ արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումների ամփոփում

Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ի շրջանակում մինչև 2030 թվականը համայնքային իշխանությունների կողմից ՋԳ արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումների փաթեթը ներառում է ինչպես ոչ ծախսատար (այսպես կոչված «փափուկ») միջոցառումներ, այնպես էլ ներդրում պահանջող («կոշտ») միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ, նախատեսված միջոցառումների համալիր իրականացումը, որը պահանջում է մոտավոր գնահատմամբ 3,596.5 մլրդ. ՀՀ դրամ ներդրումներ, հնարավորություն է տալիս ապահովել Դաշնագրի շրջանակում Թալին համայնքի կողմից ստանձնած քանակական հանձնառությունների կատարումը, այն է՝ ելակետային տարում հաշվարկված ԱԵԿ-ի ծավալի առնվազն 35 տոկոսով կրճատում մինչև 2030 թվականը:


Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ԱԵԿ-ում ներառված հիմնական ոլորտներում ջերմոցային գազերի արտանետումները՝ ինչպես ելակետային 2023, այնպես

Էլ թիրախային տարվա համար՝ արտացոլելով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվող փոփոխությունները:


Աղյուսակ 30. ՋԳ արտանետումները 2023թ. և 2030թ.՝ ըստ թիրախային բնագավառների

	Ջերմոցային գազերի արտանետումները, տ CO2/տարի				
	Համայնքային հաստատություններ	Բնակելի սեկտոր	Տրանսպորտ	Լուսավորություն	Թափոնների կառավարում և կանաչապատում
ԱԵԿ՝ 2023թ.	637.11	18,267.8	26,746.9	21.396	
Կրճատումներ միջոցառումների արդյունքում	588.06	9,024.31	12,918.8	21.396	873.51
Արտանետումներ Թիրախային տարում՝ 2030թ.	49.05	9,243.52	13,828.19	0	-873.51
Կրճատում (%)	92.3	49.4	48.3	100	

Գծապատկերներ 8 և 9-ում ցուցադրված են ԱԵԿ-ում հաշվարկված ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր ծավալում հիմնական բնագավառների բաժինները, ինչպես նաև յուրաքանչյուր բնագավառի ներդրումը այդ արտանետումների կրճատման գործում:




Գծապատկեր 7. Հիմնական բնագավառների մասնաբաժինը ԱԵԿ-ում՝ 2023թ.




Գծապատկեր 8. Հիմնական բնագավառների մասնաբաժինը ՋԳ կրճատումում՝ 2030թ

Ելակետային և թիրախային ն տարիներին ՋԳ արտանետումների համեմատությունը ըստ ոլորտների և էներգակիրների ներկայացված է Գծապատկեր 10 և 11-ում:



Գծապատկեր 9. Ելակետային և թիրախային տարիներին հիմնական բնագավառներում էներգասպառման համեմատությունը (ՄՎտժ/տարի)



Գծապատկեր 10. Ելակետային և թիրախային արտանետումների համեմատությունը (տCO2/տ)

Առաջարկվող միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման բաշխվածությունն ըստ հիմնական բնագավառների ներկայացված է ստորև:

Աղյուսակ 31. Մեղման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումները և ՋԳ արտանետումների տեսակարար արժեքները

Ոլորտ	Ներդրումներ		1 տ CO ₂ -ի նվազեցման տեսակարար արժեքը 1,000 հազ. ՀՀ դրամ/ տ CO ₂
	հազ ՀՀ դրամ	%	
Համայնքային շենքեր	257.504	7.16	648.4
Էներգիայի տեղական արտադրություն	100.000	2.78	523.7
Բնակելի սեկտոր	1,533.760	42.64	169.9
Տրանսպորտ	1,650.000	45.88	127.7
Լուսավորություն	18.320	0.51	856.2
Կոշտ կենցաղային թափոնների կառավարում	16.000	0.44	18.46
Անտառապատում	21.000	0.58	4259.6
Ընդամենը	3,596.5	100 %	6,604

Ըստ աղյուսակի, պահանջվում է 3,596.5 մլրդ. ՀՀ դրամ ներդրումներ ԿԷԿԳԾ-ի իրագործման արդյունքում 17,095 տ CO₂ արտանետումների նվազեցումն ապահովելու համար: Ըստ աղյուսակի՝ 1 կգ CO₂-ի նվազեցման արժեքը միջին հաշվով կազմում է 6,604 հազ. ՀՀ դրամ:

Թափն համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Մեղմման միջոցառումների ամենաբարձր տեսակարար ծախսերը գրանցվում են անտառապատման ոլորտում՝ կազմելով մոտ 127.7 հազ. ՀՀ դրամ/կգ CO₂: Այն դեպքերում, երբ նշված միջոցառումների ֆինանսավորման ծավալները կարող են գերազանցել համայնքապետարանի ֆինանսական հնարավորությունները, նպատակահարմար է դիտարկել ներդրումային սցենարների վերանայում, այդ թվում՝ ավելի ծախսաարդյունավետ այլընտրանքների կիրառում, օրինակ՝ օգտագործված կամ փոքր հզորության էլեկտրական տրանսպորտային միջոցների ձեռքբերում, ինչպես նաև փուլային իրականացում:

Ընդհանուր առմամբ, մեղմման միջոցառումների բարձր տեսակարար ծախսերը պայմանավորված են նրանով, որ նման միջամտությունները հաճախ հետապնդում են ոչ միայն ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նպատակ (որը որոշ դեպքերում կարող է ունենալ երկրորդական նշանակություն), այլև ուղղված են քաղաքային շարժունակության բարելավմանը, օդի որակի բարելավմանը և սոցիալ-տնտեսական զարգացման այլ առաջնահերթություններին:

Այս համատեքստում առաջարկվում է միջոցառումների իրականացումը հերթականացնել ռազմավարական տրամաբանությամբ՝ նախ առաջնահերթ իրականացնելով էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, այնուհետև անցնելով վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառմանը, որպեսզի հնարավոր լինի ամբողջությամբ կամ մասամբ բավարարել արդեն իսկ կրճատված էներգապահանջարկը:

Կայուն էներգիայի և կլիմայի գործողությունների ծրագրով նախատեսվող միջոցառումների ամփոփիչ աղյուսակը ներկայացված է Աղյուսակ 32-ում: Աղյուսակում ներառված են նաև միջոցառումների նախնական իրականացման ժամկետները, որոնք վերջնականապես կսահմանվեն համայնքապետարանի կողմից՝ հաշվի առնելով ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը, ներդրումային առաջնահերթությունները և այլ օբյեկտիվ գործոններ:

Աղյուսակ 32. Արագածոտնի մարզի Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ով նախատեսվող ծախսատար միջոցառումների ամփոփիչ աղյուսակ

No	Միջոցառման հակիրճ նկարագիրը	Ֆինանսավորման ծավալը, հազ դրամ	Էներգակիրների խնայողություն/արտադրություն ՄՎտժ/տարի						ՋԳ արտանետումների կրճատումը, տ CO2/տարի						Ներդրման տարեթիվ
			ԷԷ	Բնական գազ	Բենզին	Դիզել	ՀՆԳ	Σ	ԷԷ	Բնական գազ	Բենզին	Դիզել	ՀՆԳ	Σ	
Բյուջետային հաստատություններ և համայնքային տնտեսություն															
1.1.1	Թալին համայնքի թվով 24 բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի և նրանց հետ միասին էլեկտրական էներգիա սպառող համայնքապատկան այլ կազմակերպությունների համար ՖՎ համակարգերի տեղադրում	37,500.0	303.0	0	0	0	0	303.0	71.508	0	0	0	0	71.508	2026-2030
1.1.2	Թալին համայնքի թվով 11 համայնքապատկան մշակութային և մարզական կառույցների համար ՖՎ համակարգերի տեղադրում	46,680.0	377.8	0	0	0	0	377.8	89.161	0	0	0	0	89.161	2024-2030
1.1.3	Արտենի, Գետավի և Արագածավան բնակավայրերի խորքային հորերի էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարելու համար ՖՎ համակարգի տեղադրում	70,200.0	568.20	0	0	0	0	568.203	134.095	0	0	0	0	134.095	2024-2030
1.1.4	Թալին համայնքի թվով 5 մանկապարտեզների համար ՖՎ համակարգերի տեղադրում	53,160.0	430.3	0	0	0	0	430.3	101.55	0	0	0	0	101.55	2022-2030
1.1.5	Արագածավան, Կաթնաղբյուր,	50,000.0	3.48	0	0	0	0	3.48	0.823	0	0	0	0	0.823	2026-2030

	Ներքին Բազմաբերո, Ոսկեթաս և Սուսեր բնակավայրերի մշակույթի տների էներգաարդյունավետության բարձրացում														
Ընդամենը		257,504.0	1,682.78	0	0	0	0	1,682.78	397.137	0	0	0	0	397.13	
Էլեկտրական էներգիայի տեղական արտադրություն															
2.1.1	Համայնքային առևտրային ՖՎ էլեկտրակայանի կառուցում	100,000.0	809.0	0	0	0	0	809.0	190.924	0	0	0	0	190.924	2026-2030
Ընդամենը		100,000.0	809.0	0	0	0	0	809.0	190.924	0	0	0	0	190.92	
Բնակելի սեկտոր															
3.1.1	Սեփականատերերի կողմից առանձնատներում ՖՎ համակարգերի տեղադրում	533,760.0	4,320.5	0	0	0	0	4,320.5	629.83	0	0	0	0	629.83	2026-2030
3.1.2	Թալին համայնքի առանձնատների էներգաարդյունավետության բարձրացում	1000,000.0	1,996.4	19,808.32				21,804.47	471.150	7,923.32				8,394.47	2026-2030
Ընդամենը		1533,760.0	6,316.9	19,808.32	0	0	0	26,124.97	1,100.98	7,923.32	0	0	0	9,024.30	
Տրանսպորտ															
4.1.1	Համայնքային մարդատար և բեռնատար մեքենաների փոխարինում էլեկտրական մեքենաներով	650,000.0	0	800.7	64.4	300.0	0	1,165.1	0	161.7	16.03	80.1	0	257.8	2026-2030
4.1.2	Մասնավոր և առևտրային մարդատար տրանսպորտի 40% մեքենաների փոխարինում էլեկտրական մարդատար մեքենաներով	1 00,000.0	0	97,842.70	15,480.28	20,804.700	10,920.800	145,048.690	0	3,952.845	770.918	1,110.971	495.804	6,330.539	2026-2030
Ընդամենը		1 650,000.0	0	98,643.4	15,544.68	21,104.7	10,920.800	146,213.79	0	4,114.545	786.948	1,191.071	495.804	6,588.33	

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Լուսավորություն

5.1.1	Համայնքի թվով 5 բնակավայրերի լուսավորության համար ՖՎ համակարգերի տեղադրում	18,320.0	90.660	0	0	0	0	90.660	21.396	0	0	0	0	21.396	2026-2030
Ընդամենը		18,320.0	90.660	0	0	0	0	90.660	21.396	0	0	0	0	21.396	
<u>Կոշտ կենցաղային թափոնների կառավարում</u>															
6.1	ԿԿԹ տեսակավորման համակարգի ներդրում	16,000.0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	866.6	2026-2030
Ընդամենը		16,000.0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	866.6	
<u>Անտառային տարածքների ավելացում</u>															
7.1	Անտառապատում	21,000.0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	4.93	2026-2030
Ընդամենը		21,000.0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	4.93	
Ընդամենը		3 596,584.0	8,899.34	118,451.72	15,544.68	21,104.7	10,920.80	174,921.00	1,710.43	12,037.87	786.949	1,191.07	495.805	17,095.61	

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Գլուխ 14. Թալին համայնքի խոցելիության գնահատումը կլիմայի փոփոխության նկատմամբ և հարմարվողականության միջոցառումները

14.1. Կլիմայի փոփոխությունը և Դաշնագիրը

ԵՍ «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնության շրջանակներում կլիմայի փոփոխության հարմարվողականությունը հանդիսանում է Կայուն էներգիայի և կլիմայի գործողությունների ծրագրերի (ԿԷԿԳԾ) առանցքային բաղադրիչներից մեկը: Այն ենթադրում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները ոչ միայն պետք է իրականացնեն ջերմոցային գազերի արտանետումների կրճատման միջոցառումներ, այլ նաև լինեն պատրաստ կլիմայական ազդեցություններին դիմակայելուն և դրանց հետևանքները նվազեցնելուն:

Դաշնագրին միանալով՝ Թալինը և այլ համայնքները ստանձնում են պարտավորություն համակարգված կերպով գնահատել կլիմայական ռիսկերը, բացահայտել խոցելի ոլորտներն ու խմբերը և իրականացնել հարմարվողականության նպատակային միջոցառումներ՝ որպես ԿԷԿԳԾ-ի անբաժանելի մաս:

Գործնականում սա նշանակում է, որ մեղմման գործողություններին զուգահեռ համայնքները պետք է իրականացնեն Ռիսկերի և խոցելիության գնահատում (ՌԽԳ) և մշակեն տեղական հարմարվողականության ծրագիր, որը ուղղված կլինի կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունների կանխարգելմանը կամ նվազեցմանը:

Հարմարվողականության այս պարտավորությունը համահունչ է Եվրոպական միության դիմադրողականության բարձրացման ավելի լայն քաղաքականությանը (օրինակ՝ ԵՍ Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության առաքելությանը) և ընդգծում է, որ մինչև 2030 թվականը կլիմայական դիմադրողականության ամրապնդումը հանդիսանում է ԵՍ գործընկեր համայնքների ընդհանուր և ռազմավարական նպատակներից մեկը:

14.2. Հայաստանի քաղաքականությունը կլիմայի փոփոխության բնագավառում

Թալինում հարմարվողականության պլանավորումը համապատասխանում է նաև Հայաստանի ազգային կլիմայական քաղաքականության նպատակներին: Հայաստանի կառավարությունը 2021 թվականի մայիսին հաստատել է համապարփակ հարմարվողականության իր առաջին ազգային ծրագիրը (ՀԱԾ) (2021–2025 թվականների միջոցառումների ցանկով), որով սահմանվում են միջնաժամկետ հարմարվողականության նպատակներն ու առաջնահերթությունները: ՀԱԾ-ն բացահայտում է երկրի ամենակարևոր կլիմայական վտանգները, ուրվագծում է ռիսկերը նվազեցնելու և կառավարման տարբեր մակարդակներում ու ոլորտներում դիմադրողականությունը ամրապնդելու միջոցառումները: Հատկանշական է, որ այն շեշտը դնում է համայնքների և տեղական իշխանությունների լիազորությունների վրա՝ հետապնդելով հարմարվողականությունը տեղական զարգացման ծրագրերում ինտեգրելու նպատակ:

Թալին համայնքի համար խնդրո առարկա ազգային ռազմավարությունը խիստ արդիական է, քանի որ ՀԱԾ-ի շատ առաջնահերթ ոլորտներ՝ գյուղատնտեսություն, ջրային ռեսուրսներ, առողջապահություն, ենթակառուցվածքներ, աղետների ռիսկի կառավարում, համընկնում են Թալին համայնքի տեղական կարիքների հետ: Համայնքի հարմարվողականության ջանքերը հիմնված են ՀԱԾ շրջանակի վրա, ինչը թույլ է տալիս ազգային առաջնահերթությունները վերածել տեղական գործողությունների: Վերջինս

ապահովում է, որ Թալին համայնքի ԿԷԿԳԾ-ը համապատասխանի Հայաստանի կլիմայական պարտավորություններին (հարմարվողականության վերաբերյալ Փարիզի համաձայնագրի 7-րդ հոդվածի համաձայն) և հնարավորություն տա համայնքին հասանելիություն ունենալ հարմարվողականության միջոցառումների համար հնարավոր աջակցությանը (պետական ծրագրեր, Կանաչ կլիմայի հիմնադրամ և այլն): Այսպիսով, Թալին համայնքի կլիմայական հարմարվողականության պլանավորումը հիմնված է թե՛ Քաղաքապետերի դաշնագրի մեթոդաբանության, թե՛ Հայաստանի ՀԱԾ-ի վրա՝ տեղական և ազգային մակարդակներում ապահովելով նպատակներին համահունչ շարունակականություն:

Կլիմայական ռիսկերի և խոցելիության գնահատումն իրականացվել է երեք հիմնական փուլով՝

1. **Կլիմայական ռիսկերի բացահայտում.** Բացահայտվել են այն հիմնական կլիմայական ռիսկերը, որոնք պայմանավորված են կլիմայական փոփոխություններով և գնահատվել է դրանց ազդեցությունը Թալին համայնքի վրա:
2. **Խոցելիության գնահատում.** Վերլուծվել է, թե որքանով են տարբեր ոլորտները զգայուն և խոցելի բացահայտված ռիսկերի և կլիմայական փոփոխությունների նկատմամբ և ինչ աստիճանի հարմարվողականություն ունեն:
3. **Առաջնահերթ հարմարվողականության միջոցառումների մշակում.** Առաջարկվել են դիմակայունության բարձրացմանն ուղղված իրական և նպատակային միջոցառումներ, իրականացվել է այդ միջոցառումների ֆինանսական և ինստիտուցիոնալ պահանջների նախնական գնահատում:

Վերլուծության համար տեսական և վիճակագրական հիմք են ծառայել տարբեր աղբյուրներից ստացված տվյալները և ապացույցները, այդ թվում՝ ՀՀ Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, Համաշխարհային բանկի, Թալին համայնքի տվյալների բազաները, ինչպես նաև ԿԷԿԳԾ-ի մշակման շրջանակում իրականացված շահակիցների հետ խորհրդակցությունները:

Խոցելիության միավորները ձևավորվել են համադրելով ռիսկի մեծությունը ոլորտային ազդեցության և հարմարվողական կարողության հետ՝ հիմնվելով ինչպես քանակական ցուցանիշների, այնպես էլ որակական փորձագիտական գնահատականների վրա:

JRC (2024) ուղեցույցի համաձայն կիրառվել է համակցված գնահատման համակարգ: Ազդեցությունը, խոցելիությունը և հարմարվողական կարողությունը գնահատվել են 1-3 սանդղակով, որտեղ 1 = ցածր, 2 = միջին և 3 = բարձր: Քանակական ցուցանիշները (օրինակ՝ խոցելի բնակչության տեսակարար կշիռը) օգտագործվել են տվյալների հասանելիության պարագայում, մինչդեռ որակական գնահատականները ստացվել են շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքում: Վերջնական խոցելիության միավորները հաշվարկվել են այս չափանիշների ինտեգրման մեթոդով՝ ամենաբարձր ռիսկի ենթարկվող ոլորտները բացահայտելու համար:

14.3. Թալին համայնքի կլիմայական պայմանները

Սշխարհագրական և կլիմայական պայմանները. Թալին համայնքը գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում Արագած լեռնազանգվածի հարավային փեշերին, Արտենի լեռան մոտ: Այն ծովի մակարդակից ունի 1585 մ բարձրություն և բնութագրվում է

մայրցամաքային լեռնային կլիմայով՝ արտահայտված կիսաչոր առանձնահատկություններով: Ամառները հիմնականում շոգ և արևոտ են, իսկ ձմեռները՝ ցուրտ, ընդ որում տափաստանային գոտիներին բնորոշ են օրական ջերմաստիճանի զգալի տատանումներ: Համայնքի բարձրադիր դիրքը որոշ չափով մեղմում է ծայրահեղ շոգը՝ համեմատած ցածրադիր հովիտների հետ, սակայն ամռան ամիսներին օդի ջերմաստիճանը հաճախ գերազանցում է 30°C-ը, իսկ ձմռանը գիշերային ժամերին հաճախ իջնում է 0°C-ից զգալիորեն ցածր:

Ջերմաստիճանը. Թալին համայնքում ձմեռները ցուրտ են, հաստատուն ձնածածկույթով, իսկ ամառները բավականին շոգ են: Հուլիսին միջին ջերմաստիճանը տատանվում է 23-25°C-ի սահմաններում, հունվարին՝ -4-ից -5°C-ի սահմաններում: Տարեկան տեղումների քանակը միջինից ցածր է և անհավասար բաշխված՝ սովորաբար կազմելով մոտ 300-400 մմ (որոշ աղբյուրների համաձայն՝ տեղային միջինները կարող են լինել նաև ավելի ցածր): Տեղումների առավել բարձր ցուցանիշները դիտվում են գարնան վերջից մինչև ամառվա առաջին կեսը: Արևմտյան ուղղությունից գերակշռող քամիները սարահարթում հաճախ կարող են լինել բավական ուժեղ, իսկ ծառագուրկ տափաստանային լանդշաֆտը նպաստում է հողի էրոզիայի և փոշու տարածման ռիսկերի աճին:


Ընդհանուր առմամբ, Թալինի հիմնական կլիմայական ֆոնը բնութագրվում է ջրային սակավությամբ և ջերմաստիճանի ծայրահեղություններով, որոնք էականորեն պայմանավորում են համայնքի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ:

Աղյուսակ 33. Թալինի եղանակն ըստ ամիսների (°C)¹⁸

Ամիս	Ռեկորդային բարձր	Միջին բարձր	Օրական միջին	Միջին ցածր	Ռեկորդային ցածր
I	10.98	3.72	0.03	-5.69	-18.96
II	13.97	5.44	1.71	-4.4	-18.96
III	24.95	10.48	6.81	-0.48	-12.57
IV	27.94	17.02	11.87	4.23	-2.99
V	31.93	23.7	17.81	9.68	2.69
VI	38.92	29.25	22.89	14.2	7.98
VII	40.91	31.63	24.94	17.81	8.98
VIII	39.92	29.83	23.16	16.04	9.96
IX	36.92	26.17	20.25	12.79	5.99
X	28.94	19.61	13.17	7.13	-1.79
XI	24.95	12.61	6.47	1.73	-7.98
XII	18.96	6.46	2.38	-2.38	-18.96
Տարի	40.91	16.54	10.45	4.24	-18.96

¹⁸ https://weatherandclimate.com/armenia/aragatsotn/talin?utm_source=chatgpt.com#google_vignette

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր



Գծապատկեր 11. Ամսական միջին ջերմաստիճանը և տեղումները Թալինում¹⁹

Գծակատկեր 12-ը ներկայացնում է Թալին համայնքի սեզոնային կլիմայական առանձնահատկությունները, որոնք բնութագրվում են տաք և երկարատև ամառներով, ցուրտ ձմեռներով և արտահայտված տարեկան ջերմաստիճանային տատանումներով: Տվյալները վկայում են, որ համայնքը գտնվում է մայրցամաքային լեռնային կլիմայի ազդեցության ներքո՝ ջերմաստիճանի բարձր տատանումներով և սեզոնային կտրուկ անցումներով:


Տաք շրջանը տևում է մոտ 4 ամիս՝ հիմնականում հունիսից մինչև սեպտեմբեր, երբ օրական միջին ջերմաստիճանը կայուն կերպով գերազանցում է 18°C-ը: Ամենատաք ամիսը հուլիսն է. օրական միջին ջերմաստիճանը կազմում է շուրջ 24.9°C, իսկ միջին առավելագույնը հասնում է 31.6°C-ի:

Մառը շրջանը ընդգրկում է մոտ 3-3.5 ամիս՝ դեկտեմբերից մինչև փետրվար, երբ օրական միջին ջերմաստիճանը մնում է 2-3°C-ի սահմաններում կամ ավելի ցածր: Ամենացուրտ ամիսը հունվարն է. օրական միջին ջերմաստիճանը կազմում է մոտ 0°C, միջին նվազագույնը՝ -5.7°C, իսկ ռեկորդային ցածր ջերմաստիճանը հասնում է -18.9°C-ի: Ձմռան ամիսներին բնորոշ են նաև գիշերային ուժեղ սառնամանիքները, որոնք կարևոր ազդեցություն ունեն էներգետիկ պահանջարկի և ենթակառուցվածքների կայունության վրա:

Գարնան և աշնան անցումային եղանակները համեմատաբար կարճ են, սակայն բնութագրվում են ջերմաստիճանի արագ փոփոխություններով: Գարնանը ջերմաստիճանը կտրուկ բարձրանում է՝ օրական միջինը 6.8°C-ից հասնելով մինչև 17.8°C, ինչը հաճախ ուղեկցվում է տեղումների առավելագույն քանակով: Աշնանը նկատվում է աստիճանական սառեցում՝ օրական միջին ջերմաստիճանը 20.3°C-ից նվազում է մինչև 6.5°C:

Ընդհանուր առմամբ, Թալինի կլիման բնութագրվում է ջերմաստիճանի զգալի սեզոնային և օրական տատանումներով, ինչպես նաև ծայրահեղ ջերմային երևույթների հաճախականությամբ, որոնք կլիմայի փոփոխության պայմաններում կարող են խորացնել համայնքի խոցելիությունը՝ հատկապես ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության և հանրային առողջության ոլորտներում:

¹⁹ https://weatherandclimate.com/armenia/aragatsotn/talin?utm_source=chatgpt.com#google_vignette



Փճապատկեր 12. Միջին ամսական ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները Թալինում²⁰

Փճապատկեր 13-ը արտացոլում է Թալին համայնքի սեզոնային ջերմաստիճանային ռեժիմը՝ ընդգծելով տաք և ցուրտ ժամանակաշրջանների հստակ տարանջատվածությունը: Տվյալները ցույց են տալիս, որ ամառային ամիսներին միջին առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների միջև տարբերությունը զգալի է, ինչը վկայում է օրական ջերմաստիճանների մեծ տատանումների մասին: Միևնույն ժամանակ, ձմեռային շրջանում դիտվում են կայուն ցածր ջերմաստիճաններ և հաճախակի սառնամանիքներ, որոնք պայմանավորում են բարձր ջերմային հակադրությունը տարվա ընթացքում:

Տեղումներ. Ամսական դիտարկումների համաձայն՝ Թալին համայնքում տեղումների տարեկան միջին մակարդակը համեմատաբար ցածր է, ինչն արտացոլվում է միջին ամսական տեղումների շուրջ **58.96 մմ** ցուցանիշով և բնորոշ է մայրցամաքային լեռնային կլիմային: Տեղումները տարվա ընթացքում բաշխված են անհավասար, և նկատվում է հստակ արտահայտված սեզոնայնություն՝ գարնան և ամառվա սկզբի առավելագույններով և աշնան վերջի ու ձմռան նվազագույններով:

Գարունը Թալինում տեղումների համեմատաբար ակտիվ ժամանակաշրջան է: Մարտին տեղումները միջինում կազմում են 39.7 մմ, ապրիլին աճում են մինչև 58.4 մմ, իսկ մայիսին հասնում են 83.7 մմ: Այս ամիսներին տեղումների օրերի քանակը նույնպես զգալի է՝ ապրիլին միջինում 15.5 օր, իսկ մայիսին՝ մոտ 22 օր, ինչը նպաստում է հողի խոնավության ժամանակավոր բարելավմանը:

Ամառային ամիսներին տեղումների քանակը մնում է հարաբերականորեն բարձր, սակայն ուղեկցվում է հարաբերական խոնավության նվազմամբ և արևային ժամերի ավելացմամբ: Հունիսին տեղումները կազմում են 114.5 մմ, հուլիսին՝ 93.9 մմ, իսկ օգոստոսին՝ 80.7 մմ: Միևնույն ժամանակ հարաբերական խոնավությունը նվազում է մինչև մոտ 46–50 %, իսկ արևային ժամերի միջին քանակը հասնում է առավելագույնի՝ շուրջ 14 ժամ, ինչի հետևանքով գոլորշիացման ինտենսիվությունը բարձրանում է, և հողի խոնավության պահպանման արդյունավետությունը սահմանափակվում է:

²⁰ Weather Spark, <https://weatherspark.com/y/102801/Average-Weather-in-Talin-Armenia-Year-Round>

Աղյուսակ 34. Թալին համայնքի ամսական կլիմայական ցուցանիշները²¹

Ամիս	Միջին տեղումներ (մմ)	Միջին տեղումների օրեր (≥1 մմ)	Միջին հարաբերական խոնավություն (%)	Միջին ամսական արևային ժամեր
I	26.13	6.99	72.92	8.98
II	25.17	6.81	71.4	10.22
III	39.73	9.71	62.34	11.14
IV	58.44	15.52	55.8	11.26
V	83.71	21.95	57.78	10.64
VI	114.51	18.69	49.77	14.38
VII	93.85	18.69	48.62	14.23
VIII	80.73	19.84	46.57	11.52
IX	64.35	14.33	48.2	11.49
X	49.51	10.16	55.06	10.93
XI	18.69	4.81	65.29	8.61
XII	23.84	4.81	56.86	8.22
Տարի	58.96	12.93	56.86	11.26


Աշնան ընթացքում դիտվում է տեղումների աստիճանական նվազման միտում: Սեպտեմբերին միջին տեղումները կազմում են 64.4 մմ, հոկտեմբերին նվազում են մինչև 49.5 մմ, իսկ նոյեմբերին կտրուկ նվազում են՝ հասնելով 18.7 մմ: Նոյեմբերին արձանագրվում է նաև տեղումների օրերի նվազագույն քանակը՝ միջինում մոտ 4.8 օր, ինչը վկայում է տարվա ամենաչոր ժամանակաշրջանի մասին:

Ձմռան ամիսներին տեղումները պահպանվում են համեմատաբար ցածր մակարդակում: Դեկտեմբերին տեղումները միջինում կազմում են 23.8 մմ, հունվարին՝ 26.1 մմ, իսկ փետրվարին՝ 25.2 մմ: Այս շրջանում հարաբերական խոնավությունը բարձր է, իսկ արևային ժամերի քանակը նվազագույն, ինչը պայմանավորում է ցածր գոլորշիացում և հիմնականում ձյան տեսքով տեղումների կուտակում:

Աղյուսակ 34-ի տվյալները ցույց են տալիս, որ Թալին համայնքը բնութագրվում է տեղումների համեմատաբար ցածր տարեկան մակարդակով, հստակ արտահայտված սեզոնայնությամբ և ամառային բարձր գոլորշիացմամբ: Այս առանձնահատկությունները կարևոր նշանակություն ունեն ջրային ռեսուրսների կառավարման, գյուղատնտեսական գործունեության և կլիմայական ռիսկերի գնահատման տեսանկյունից:


Քամի և խոնավություն. Թալինում քամու միջին ժամային արագությունը տարվա ընթացքում ցուցաբերում է մեղմ սեզոնային փոփոխականություն: Քամոտ ժամանակաշրջանը տևում է մոտ 3.4 ամիս՝ հունիսի 4-ից մինչև սեպտեմբերի 16-ը, երբ քամու միջին ժամային արագությունը գերազանցում է 2.8 մ/վրկ: Տարվա ամենաքամոտ ամիսը հուլիսն է, որի ընթացքում քամու միջին ժամային արագությունը կազմում է մոտ 3.3 մ/վրկ:

²¹ https://weatherandclimate.com/armenia/aragatsotn/talin?utm_source=chatgpt.com#google_vignette



Գծապատկեր 13. Քամու միջին արագությունը Թալինում²²

Ավելի հանդարտ ժամանակաշրջանը տևում է շուրջ 8.6 ամիս՝ սեպտեմբերի 16-ից մինչև հունիսի 4-ը: Տարվա ամենահանդարտ ամիսը դեկտեմբերն է, երբ քամու միջին ժամային արագությունը միջինում կազմում է մոտ 2.3 մ/վրկ:



Գծապատկեր 14. Քամու ուղղությունը Թալինում²³

Խոնավության տվյալները հաստատում են Թալին համայնքի արտահայտված մայրցամաքային, կիսաչոր կլիմայական բնույթը: Ձմռան ամիսներին հարաբերական խոնավությունը պահպանվում է բարձր մակարդակի վրա (մոտ 80%), ինչը պայմանավորված է ցածր ջերմաստիճաններով և գոլորշիացման սահմանափակ ինտենսիվությամբ: Գարնանից սկսած խոնավությունը աստիճանաբար նվազում է և ամառվա կեսին՝ հուլիս-օգոստոս ամիսներին, հասնում է նվազագույն արժեքների՝ մոտ 50%:

Այս սեզոնային չորությունը, զուգակցված ամառային բարձր ջերմաստիճանների և ուժեղ քամիների հետ, նպաստում է հողի խոնավության արագ կորստին և մեծացնում է երաշտների ու փոշու առաջացման ռիսկերը: Աշնան ամիսներին հարաբերական խոնավության աստիճանական աճը վկայում է ավելի զով և խոնավ պայմանների անցման մասին: Այս տատանումները ցույց են տալիս տեղագրության և սեզոնային օդային զանգվածների շրջանառության նշանակալի ազդեցությունը Թալինի տեղական կլիմայական ռեժիմի վրա և օգնում են բացատրել համայնքում գյուղատնտեսական և ջրային ռեսուրսների հետ կապված հիմնական ճնշումների ժամանակագրությունը:

²² Weather Spark, <https://weatherspark.com/y/102801/Average-Weather-in-Talin-Armenia-Year-Round>

²³ Weather Spark, <https://weatherspark.com/y/102801/Average-Weather-in-Talin-Armenia-Year-Round>


14.4. Կլիմայի փոփոխությունը Թալինում

14.4.1 Կլիմայի դիտարկվող փոփոխությունը Թալինում

Օդի ջերմաստիճան

Արագածոտնի մարզի օդերևութաբանական կայանների գրանցած երկարաժամկետ տվյալները ցույց են տալիս, որ 1950-ականներից սկսած միջին տարեկան օդի ջերմաստիճանը ցուցաբերում է կայուն աճող միտում՝ չնայած առանձին տարիներին նկատվող տատանումներին: Այսպես 1950-60թթ. միջինի համեմատ 2020-2024թթ. օդի ջերմաստիճանը միջինում աճել է 1.9°C-ով, ինչը վկայում է տարածաշրջանում ընդհանուր տաքացման գործընթացի մասին:

Այս միտումները կարևոր են Թալին համայնքի համար, քանի որ նման ջերմաստիճանային աճը կարող է հանգեցնել վեգետացիոն շրջանի փոփոխության, գոլորշիացման ինտենսիվության բարձրացման և ամառային ջերմային բեռնվածության ավելացման: Մարզային մակարդակում արձանագրված տաքացման միտումը, համադրվելով տեղական դիտարկումների հետ, հաստատվում է, որ Թալին համայնքը արդեն իսկ զգում է կլիմայի փոփոխության ազդեցությունները, որոնք հետագա տարիներին կարող են խորացնել ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության և հանրային առողջության ոլորտներում առկա խոցելիությունները:



Գծապատկեր 15. Տարեկան միջին օդի ջերմաստիճանը Արագածոտնի մարզում²⁴

Մթնոլորտային տեղումներ.

Թալին համայնքում տեղումների օրերի բաշխումը ցույց է տալիս հստակ արտահայտված սեզոնայնություն, որը բնորոշ է մայրցամաքային լեռնային կլիմային: Աղյուսակ 35-ի տվյալների համաձայն՝ տեղումների հիմնական մասը կենտրոնացած է զարնան երկրորդ կեսին և ամռան սկզբին, մինչդեռ ձմեռային ամիսներին տեղումները սահմանափակ են և հիմնականում տեղում են ձյան տեսքով:

Ձմեռային շրջանում տեղումների օրերի ընդհանուր թիվը համեմատաբար փոքր է՝ միջինում ամսական 2.5–3 օր: Այս ամիսներին տեղումները գերակշռում են ձյան տեսքով: Հունվարին և դեկտեմբերին ձյան օրերի թիվը կազմում է համապատասխանաբար 2.3 և 2.1 օր, ինչը վկայում է, որ ձնածածկույթը ձևավորվում է կարճատև և ոչ միշտ կայուն

²⁴ Համաշխարհային բանկ, <https://climateknowledgeportal.worldbank.org/country/armenia/trends-variability-historical>

Ժամանակահատվածներում: Խառը տեղումները (անձրև և ձյուն) ձմռանը սահմանափակ են, իսկ անձրևային օրերի քանակը գրեթե աննշան է: Այս պայմանները սահմանափակում են ձյան միջոցով ջրային ռեսուրսների կուտակման հնարավորությունը:

Գարնան ամիսներին դիտվում է տեղումների օրերի կտրուկ աճ: Մարտին տեղումների ընդհանուր օրերի թիվը հասնում է 3.7-ի, ապրիլին՝ 6.3-ի, իսկ մայիսին՝ 8.5 օրվա, որը տարվա առավելագույն ցուցանիշն է: Այս շրջանում տեղումները գրեթե ամբողջությամբ անձրևային բնույթ ունեն, ինչը նպաստում է հողի խոնավացմանը, սակայն միևնույն ժամանակ կարող է առաջացնել մակերեսային հոսքի և հողի էրոզիայի ռիսկեր, հատկապես հաշվի առնելով համայնքի տափաստանային և ծառագուրկ լանդշաֆտը:

Աղյուսակ 35. Թալինում ամսական տեղումների օրերի միջին քանակը²⁵

Ամիս	Անձրև (օր/մմ)	Խառը (օր)	Չյուն (օր/մմ)	Ցանկացած (օր)
Հունվար	0.2	0.3	2.3	2.8
Փետրվար	0.3	0.5	1.7	2.5
Մարտ	2.0	0.8	0.9	3.7
Ապրիլ	5.9	0.3	0.1	6.3
Մայիս	8.5	0.0	0.0	8.5
Հունիս	6.4	0.0	0.0	5.4
Հուլիս	4.6	0.0	0.0	4.6
Օգոստոս	3.2	0.0	0.0	3.2
Սեպտեմբեր	2.9	0.0	0.0	2.9
Հոկտեմբեր	4.0	0.2	0.1	4.3
Նոյեմբեր	1.9	0.7	0.7	3.2
Դեկտեմբեր	0.3	0.7	2.1	3.0

Ամռան ամիսներին տեղումների օրերի թիվը աստիճանաբար նվազում է: Հունիսին գրանցվում է մոտ 5.4 անձրևային օր, հուլիսին՝ 4.6, իսկ օգոստոսին՝ 3.2 օր: Թեև ամռանը տեղումները ամբողջությամբ անձրևային են, դրանց օրերի սահմանափակ թիվը, զուգակցված բարձր ջերմաստիճանների և ուժեղ քամիների հետ, նպաստում է հողի խոնավության արագ կորստին և կարող է ստեղծել կարճատև չոր շրջանների ռիսկեր:

Աշնան ամիսներին տեղումների օրերի թիվը մնում է համեմատաբար ցածր: Սեպտեմբերին և հոկտեմբերին տեղումների ընդհանուր օրերի թիվը կազմում է համապատասխանաբար 2.9 և 4.3 օր, իսկ նոյեմբերին՝ 3.2 օր: Այս շրջանում նկատվում է նաև խառը տեղումների և ձյան առաջին օրերի ի հայտ գալը, ինչը վկայում է սեզոնային անցման մասին:

Ընդհանուր առմամբ, Թալին համայնքում տեղումների օրերի բաշխումը ցույց է տալիս երկու հիմնական խոցելիություն. առաջինը՝ ձմռան շրջանում ձյան սահմանափակ և անկայուն կուտակումը, որը նվազեցնում է բնական ջրային պաշարների ձևավորման հնարավորությունը, և երկրորդը՝ տեղումների կենտրոնացումը գարնան վերջին և ամռան սկզբին, ինչը կարող է մեծացնել գարնանային մակերեսային հոսքի և ամառային ջրային սթրեսի ռիսկերը: Այս առանձնահատկությունները կարևոր են ջրային ռեսուրսների կառավարման և կլիմայական հարմարվողականության միջոցառումների նախագծման տեսանկյունից:

²⁵ https://weatherandclimate.com/armenia/aragatsotn/talin?utm_source=chatgpt.com#google_vignette

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Ծայրահեղ եղանակային իրադարձություններ.

Ծայրահեղ եղանակային երևույթների առումով Թալին համայնքում վերջին տասնամյակներին ռիսկերի կառուցվածքը կտրուկ փոփոխությունների չի ենթարկվել, սակայն մի շարք վտանգների ազդեցությունը դարձել է ավելի զգալի: Աղյուսակ 36-ի տվյալները ցույց են տալիս, որ երաշտները, ջերմային ալիքները, կարկուտը և ուժեղ քամիները շարունակում են կրել պարբերական բնույթ՝ պահպանելով հիմնականում կայուն հաճախականություն, սակայն ընդհանուր տաքացման և ջրային սակավության համատեքստում դրանց սոցիալ-տնտեսական ազդեցությունը խորանում է:

Աղյուսակ 36. Ծայրահեղ եղանակային իրադարձություններ հաճախականությունը Թալին համայնքում²⁶

Իրադարձությունը	Կրկնելիությունը (մինչև 2000թ.)	Ներկայիս վիճակը	Նշանակալի ազդեցություններ
Երաշտ	Ծայրահեղ երաշտները հիմնականում դիտվում էին բացառիկ չոր տարիներին և առավելապես բնորոշ էին ցածրադիր շրջաններին: Նախալեռնային գոտիներում երաշտը դիտվում էր մոտավորապես տարիների կեսում:	Վերջին տասնամյակներում երաշտային պայմանները դարձել են գրեթե ամենամյա ընդգրկելով նաև նախալեռնային և բարձրադիր տարածքները: Չոր օրերի քանակը տարվա ընթացքում զգալիորեն աճել է՝ համեմատած 1961–1990 թթ. հետ, իսկ երաշտի սեզոնը սկսվում է ավելի վաղ և տևում ավելի երկար:	Ջրի քրոնիկ պակաս և հողի չորացում: Որոշ գյուղերում չորացել են աղբյուրներն ու փոքր ջրամբարները, ինչի հետևանքով նվազել է ոռոգման ջրի հասանելիությունը: Նվազել է մշակաբույսերի բերքատվությունը, իսկ արտավայրերի դեգրադացիան որոշ համայնքներում հանգեցրել է անասնազլխաքանակի էական կրճատման:
Կարկուտ	Գարնան վերջում և ամռանը կարկտահարությունները եղել են կանոնավոր և պատմականորեն համարվել են ամենահաճախ հանդիպող վնասաբեր երևույթներից մեկը պարբերաբար վնասելով մշակաբույսերը:	Վերջին տասնամյակներում կարկտահարությունների ինտենսիվությունն ու վնասաբեր ազդեցությունը մեծացել են, և որոշ տարածքներում դրանք գրանցվում են գրեթե ամեն տարի: Կարկտի սեզոնայնությունը հիմնականում պահպանվել է՝ կենտրոնանալով գարուն–ամառ ամիսների վրա:	Կրկնվող վնասներ պտղատու այգիներին և դաշտային մշակաբույսերին: Թալինում գյուղատնտեսները նշում են պտղի (ծիրան, հատապտուղներ) և հացահատիկի հաճախակի կորուստներ, ինչը բացասաբար է անդրադառնում եկամուտների վրա և ստիպում է կիրառել հակակարկտային միջոցառումներ:
Չորդառատ անձրևներ և սելավներ	Անցյալում դիտվում էին հազվադեպ և հիմնականում բացառիկ ուժեղ փոթորիկների կամ արագ զարնանային	Վերջին 10–20 տարիներին նկատվում է հորդառատ տեղումների հաճախականության աճ, որոնք հանգեցնում են	Ջրհեղեղներն ու սելավները պարբերաբար հեղեղում են դաշտերն ու բնակավայրերը: Թալինում ուժեղ տեղումները կարող են լցվել

²⁶ Աղյուսակը կազմվել է ՀՀ Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի տվյալների և կլիմայական գնահատումներ հիման վրա (ներառյալ կենտրոնի զեկույցները և ԵՄ ուսումնասիրությունները և տեղական փորձագիտական վերլուծությունները):

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

	հալոցքների ժամանակ: Խոշոր հեղեղումները համարվում էին տասնամյակներում մեկ անգամ հանդիպող երևույթներ:	արագ հեղեղումների: Տաք ձմեռներն ու վաղ գարնանային հալոցքները նպաստում են ձյան արագ հալոցքին, իսկ կարճատև, բայց ինտենսիվ տեղումները մեծ քանակի ջուր են կենտրոնացնում մի քանի ժամվա ընթացքում:	չոր հուներով, առաջացնել հողի վերին շերտի էրոզիա և վնասել ենթակառուցվածքները՝ լվանալով գյուղական ճանապարհներ, կամուրջներ և բերրի հողատարածքներ:
Ցրտահարություն	Ցրտահարությունները պատմականորեն եղել են կանոնավոր երևույթ: Ուշ գարնանային և աշնանային սառնամանիքները համարվում էին կանխատեսելի ռիսկեր, որոնց ազդեցությանը գյուղատնտեսները հիմնականում պատրաստ էին:	Ընդհանուր առմամբ սառնամանիքների օրերի թիվը նվազել է՝ պայմանավորված ընդհանուր տաքացմամբ, սակայն վերջին տարիներին նկատվում են անսպասելի և սեզոնից դուրս սառնամանիքներ, որոնք հաճախ հաջորդում են տաք շրջաններին:	Անժամանակ սառնամանիքները վնասում են պտղատու այգիները և այլ մշակաբույսերը: Օրինակ՝ ապրիլյան հանկարծակի սառնամանիքը կարող է ոչնչացնել ծիրանի ծաղկաբույլերը, իսկ վաղ աշնանային սառնամանիքները վնասել ուշ մշակաբույսերը՝ նվազեցնելով բերքատվությունն ու գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտները:

Այս առումով Թալին համայնքի խոցելիությունը պայմանավորված է ոչ այնքան ծայրահեղ եղանակային իրադարձությունների հաճախականության աճով, որքան դրանց կուտակային ազդեցությամբ, ինչը կարևոր նախադրյալ է դարձնում հարմարվողականության միջոցառումների պլանավորումը:

Կլիմայի փոփոխության հետևանքային և աճող կլիմայական ռիսկերը.

Թալին համայնքի կլիմայական ռիսկերի կարճաժամկետ գնահատականները ցույց են տալիս, որ համայնքը գտնվում է համեմատաբար ցածր ռիսկային դիրքում, սակայն ժամանակի ընթացքում մի շարք կլիմայական վտանգներ դրսևորում են հստակ աճի միտում՝ վերջիններիս տեղի ունենալու բավականին բարձր հավանականությամբ և որն ուղեկցվելու խիստ բացասաբար հետևանքներով: Կարճաժամկետ հատվածում կլիմայական վտանգների մեծ մասը գնահատվում է որպես աննշան (ռիսկի մակարդակ), ինչը վկայում է այն մասին, որ ներկայումս Թալինի կլիմայական համակարգը դեռևս գտնվում է հարաբերական հավասարակշռության մեջ:

Կարճաժամկետ հատվածում (Աղյուսակ 37) հետևանքների առումով հավանական համարվող կարկուտը նշանակալի ազդեցություն կունենա Թալին համայնքի վրա՝ առավելապես գյուղաբնակ և ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսությունների վրա, մինչդեռ երաշտների ու ծայրահեղ շոգի պարագայում գնահատված ռիսկը եղել է միջին մակարդակի: Միևնույն ժամանակ, ջերմային ալիքների, ջրի սակավությանը, էրոզիայի և հրդեհները կարճաժամկետ հատվածում ռիսկի մակարդակը գնահատվում են որպես աննշան, ինչը պայմանավորված է դրանց դեռևս սահմանափակ ինտենսիվությամբ:

Աղյուսակ 37. Կլիմայական ռիսկի գնահատականը կարճաժամկետ հատվածում

Վտանգ	Ռիսկի մակարդակ
Ամպրոպ/կայծակ	Աննշան
Հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/Սելավներ	Աննշան
Հրդեհներ (անտառային, խոտածածկի)	Աննշան
Ուժեղ քամիներ/փոթորիկներ/տորնադո	Աննշան
Ցրտահարություն	Աննշան
Սաստիկ ձմեռ/սառնամանիքներ	Աննշան
Ջերմային ալիքներ	Աննշան
Էրոզիա	Աննշան
Ջրերի սակավություն	Աննշան
Արդյունաբերական փոշի	Աննշան
Շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատված (մի քանի օր, շաբաթ)	Փոքր
Ծայրահեղ շոգ	Միջին
Երաշտներ	Միջին
Կարկուտ	Նշանակալից

Միջնաժամկետ հատվածում կլիմայական ռիսկերի կառուցվածքը էականորեն փոխվում է: Աղյուսակ 38-ի տվյալները ցույց են տալիս, որ մի շարք վտանգներ դառնում են ավելի բարձր ռիսկային: Ջերմային ալիքները, հրդեհները և ցրտահարությունները գնահատվում են որպես միջին ռիսկային, իսկ շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատվածները, ծայրահեղ շոգը և կարկուտը՝ որպես նշանակալի ռիսկեր: Առավել մտահոգիչ է այն, որ երաշտները և ջրերի սակավությունը միջնաժամկետ հեռանկարում արդեն գնահատվում են որպես սաստիկ մակարդակի վրա գտնվող ռիսկեր, ինչը վկայում է ջրային ռեսուրսների կլիմայական վտանգների նկատմամբ դիմացկուն համակարգ ունենալու մասին:

Աղյուսակ 38. Կլիմայական ռիսկի գնահատականը միջնաժամկետ հատվածում

Վտանգ	Ռիսկի մակարդակ
Ամպրոպ/կայծակ	Աննշան
Հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/Սելավներ	Աննշան
Ուժեղ քամիներ/փոթորիկներ/տորնադո	Աննշան
Սաստիկ ձմեռ/սառնամանիքներ	Աննշան
Էրոզիա	Աննշան
Հողի աղակալում	Աննշան
Մթնոլորտում CO ₂ -ի կոնցենտրացիայի ազդեցությունը	Աննշան
Արդյունաբերական փոշի	Փոքր
Հրդեհներ (անտառային, խոտածածկի)	Միջին
Ջերմային ալիքներ	Միջին
Ցրտահարություն	Միջին
Ծայրահեղ շոգ	Նշանակալից
Կարկուտ	Նշանակալից
Շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատված (մի քանի օր, շաբաթ)	Նշանակալից
Ջրերի սակավություն	Սաստիկ
Երաշտներ	Սաստիկ

Երկարաժամկետ հատվածում Թալին համայնքի կլիմայական ռիսկերի կառուցվածքը դառնում է առավել բարդ և բազմաշերտ: Աղյուսակ 39-ի համաձայն՝ ծայրահեղ շոգը, ջերմային ալիքները, շատ բարձր ջերմաստիճանի երկարատև ժամանակահատվածները, երաշտները, ջրի սակավությունը, կարկուտը և հրդեհները գնահատվում են որպես ռիսկեր, որոնց մակարդակը սաստիկ է: Սա նշանակում է, որ Թալինը ապագայում կարող է բախվել ոչ միայն ջերմային և ջրային սթրեսի խորացման, այլև գյուղատնտեսական արտադրության, էկոհամակարգերի կայունության և բնակչության առողջության վրա զգալի ճնշումների:

Միաժամանակ, որոշ վտանգներ, ինչպիսիք են հորդառատ անձրևների հետևանքով հեղեղումները և սելավները, ինչպես նաև հողի աղակալումը և ստորերկրյա ջրերի կորուստը, երկարաժամկետ հեռանկարում շարունակում են գնահատվել որպես աննշան: Սա վկայում է այն մասին, որ Թալինի աշխարհագրական դիրքն ու բնական պայմանները որոշակիորեն մեղմում են ջրով պայմանավորված ծայրահեղ վտանգները:

Աղյուսակ 39. Կլիմայական ռիսկի գնահատականը երկարաժամկետ հատվածում

Վտանգ	Ռիսկի մակարդակ
Հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/Սելավներ	Աննշան
Հողի աղակալում	Աննշան
Ստորգետնյա ջրերի կորուստ	Աննշան
Կենսաբանական բնույթի վտանգներ (միջատների համաճարակ, օդակիր, ջրակիր և վեկտորով փոխանցվող հիվանդություններ)	Աննշան
Ուժեղ քամիներ/փոթորիկներ/տորնաղո	Փոքր
Ամպրոպ/կայծակ	Միջին
Ցրտահարություն	Միջին
Սաստիկ ձմեռ/սառնամանիքներ	Միջին
Էրոզիա	Միջին
Մթնոլորտում CO ₂ -ի կոնցենտրացիայի ազդեցությունը	Միջին
Արդյունաբերական փոշի	Նշանակալից
Ծայրահեղ շոգ	Սաստիկ
Երաշտներ	Սաստիկ
Կարկուտ	Սաստիկ
Շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատված (մի քանի օր, շաբաթ)	Սաստիկ
Հրդեհներ (անտառային, խոտածածկի)	Սաստիկ
Ջերմային ալիքներ	Սաստիկ
Ջրերի սակավություն	Սաստիկ
Ցրտահարություն	Սաստիկ

Ընդհանուր առմամբ, Թալին համայնքի կլիմայական ռիսկերի զարգացումը բնութագրվում է հստակ անցումով՝ դեպի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում ջերմային, ջրային և հողային ռիսկերի առվ: Այս միտումները ընդգծում են հարմարվողականության միջոցառումների վաղ փուլում պլանավորման անհրաժեշտությունը՝ հատկապես ջրային ռեսուրսների կառավարման, գյուղատնտեսության կայունացման, հողի պահպանության և ջերմային ռիսկերի նվազեցման ուղղություններով:

14.4.2 Թալին համայնքի հիմնական կլիմայական վտանգները և ռիսկի գնահատումը

ԿԷԿԳԾ մշակման շրջանակներում իրականացվել է կլիմայական ռիսկերի մանրամասն գնահատում, որի նպատակն էր բացահայտել Թալին համայնքի համար առավել կարևոր

կլիմայական վտանգները և գնահատել դրանց առաջացման հավանականությունն ու հնարավոր ազդեցությունները: Գնահատումը իրականացվել է հաշվի առնելով ինչպես ներկայիս ազդեցությունները, այնպես էլ կարճաժամկետ (0–5 տարի), միջին (6–14 տարի) և երկարաժամկետ (15+ տարի) ժամանակահատվածներում հնարավոր զարգացումները: ներկայացվել է յուրաքանչյուր վտանգի հաճախականությունը, ինտենսիվությունը և բնակչության, տնտեսության ու էկոհամակարգերի վրա դրանց ազդեցությունը՝ Քաղաքապետերի դաշնագրի և ՀԱԾ համապատասխան:

Ինչպես ներկայացված է Աղյուսակ 40-ում, երաշտները, ծայրահեղ շոգն ու ջերմային ալիքները, ցրտահարությունը, կարկուտը, հրդեհները, ուժեղ քամիները և հողի էրոզիան առանձնանում են որպես Թալին համայնքի հիմնական կլիմայական վտանգներ: Դրանցից որոշները ներկայումս գնահատվում են որպես միջին ռիսկային՝ համայնքի համար նշանակալի, բայց դեռևս կառավարելի ազդեցություններով: Մինևս ժամանակ, հողի էրոզիայի խորացումը գնահատվում է որպես բարձր ռիսկային վտանգ, ինչը պայմանավորված է դրա արագացող ազդեցությամբ բնական միջավայրի և գյուղատնտեսական հողերի վրա:

Աղյուսակ 40. Ներկայումս համայնքի համար կլիմայական վտանգները²⁷

	Ինչպես է փոփոխվել/խորացել խնդիրը (օր. էրոզիայի դեպքում և այլն) տվյալ վտանգի հաճախականությունը 2010թ.-ից սկսված	Ինչպես է փոփոխվել տվյալ աղետի ինտենսիվությունը 2010թ.-ից սկսված	Տեղի ունենալու ներկա ռիսկը		Այագագ վտանգներ						
			Տեղի ունենալու հավանականությունը	Անվնդվող հետևանքները	Ինտենսիվության աննկատվող փոփոխությունը 0-5 տարիներին	Ինտենսիվության աննկատվող փոփոխությունը 6-14 տարիներին	Ինտենսիվության աննկատվող փոփոխությունը 15 և ավել տարիներին	Հաճախականության աննկատվող փոփոխությունը 0-5 տարիներին	Հաճախականության աննկատվող փոփոխությունը 6-14 տարիներին	Հաճախականության աննկատվող փոփոխությունը 15 և ավել տարիներին	
Ծայրահեղ շոգ	մնացել է անփոփոխ	մնացել է անփոփոխ	միջին, հավանական	միջին	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Երաշտներ	մնացել է անփոփոխ	մնացել է անփոփոխ	միջին, հավանական	միջին	կնվազի	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Ամպրոպ/կայծակ	նվազել է	նվազել է	ցածր, քիչ հավանական	ցածր	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի
Հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/ Սելավներ	նվազել է	նվազել է	ցածր, քիչ հավանական	ցածր	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի
Կարկուտ	մնացել է անփոփոխ	մնացել է անփոփոխ	միջին, հավանական	միջին	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատված	նվազել է	նվազել է	ցածր, քիչ հավանական	ցածր	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի	կնվազի

²⁷ Նշում՝ հետևանքների դեպքում Ցածր մակարդակը կարող է կապված լինել այնպիսի հետևանքների հետ, որոնք հանգեցնում են առօրյա կյանքում ավելի քիչ նշանակալի/աննշան փոփոխությունների: Միջին մակարդակը կարող է կապված լինել անբարենպաստ հետևանքների հետ, որոնք հանգեցնում են առօրյա կյանքի զգալի խաթարման՝ սահմանափակ շրջալսական ազդեցություններով: Բարձր մակարդակը կարող է կապված լինել ծանր հետևանքների հետ, որոնք հանգեցնում են առօրյա կյանքի զգալի խաթարման, անդառնալի փոփոխությունների և շրջալսական ազդեցությունների:

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Հրդեհներ (անտառային, խոտածածկի)	մնացել է անփոփոխ	մնացել է անփոփոխ	միանգամայն հավանական	միջին	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Ուժեղ քամիներ/ փոթորիկներ/ տորնադո	մնացել է անփոփոխ	մնացել է անփոփոխ	միջին, հավանական	միջին	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Ցրտահարություն	մնացել է անփոփոխ	մնացել է անփոփոխ	միանգամայն հավանական	միջին	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Ջերմային ալիքներ	մնացել է անփոփոխ	մնացել է անփոփոխ	միջին, հավանական	միջին	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Էրոզիա	աճել է	աճել է	միջին, հավանական	բարձր	կաճի	կաճի	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ
Ջրերի սակավություն	աճել է	աճել է	միանգամայն հավանական	բարձր	կաճի	կաճի	կմնա անփոփոխ	կաճի	կաճի	կաճի
Հանքի/արդյունաբերական գործարանի փոշի	մնացել է անփոփոխ	աճել է	միջին, հավանական	միջին	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ	կմնա անփոփոխ

Այսպիսով՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում առավել նշանակալի վտանգ է դառնում ջրի սակավությունը: Միննույն ժամանակ, հողի էրոզիան դիտարկվում է որպես աճող ռիսկ, որը սպառնում է համայնքի բնական ռեսուրսների հիմքին և գյուղատնտեսության արտադրողականությանը: Այս հեռանկարը ընդգծում է նպատակային և ժամանակին հարմարվողականության միջոցառումների անհրաժեշտությունը, որոնք պետք է ուղղված լինեն ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը, կլիմայական պայմաններին դիմակայող գյուղատնտեսության խթանմանը և համայնքի պատրաստվածության բարձրացմանը:

14.5. Թալին կլիմայական ռիսկերի տեղական ընկալումները

Թալինի կլիմայական խոցելիության գնահատման ընթացքում կարևորվել է տեղական ներկայացուցիչների ներգրավումը հարցմանը: Սա հնարավորություն է տվել, հասակնալու, թե որ կլիմայական վտանգներն են առավել տեսանելի և խաթարող առօրյա կյանքում: Անցկացված հարցումները արժեքավոր ներդրում են կլիմայական ռիսկերի գնահատման համար, թեպետ մեր կողմից առաջարկվող հարմարվողականության միջոցառումները մշակվել են՝ հաշվի առնելով նաև այլ փաստաթղթեր (համայնքի զարգացման ծրագիր, համայնքին վերաբերող զեկույց, համայնքի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը և այլն) ավելի համապարփակ միջոցառումների ցանկ առաջարկելու համար: Կլիմայական ռիսկերի վերաբերյալ ընկալումները (ռիսկի գնահատական) համարվում են որակական գնահատական, որը կարող է որոշակիորեն տարբերվել ռիսկի քանակական գնահատականից: Այսպես, Թալին համայնքի տեսանկյունից, ծայրահեղ շոգը, երաշտներ, դիտարկվել են, որպես միջին մակարդակի ռիսկայնություն ունեցող կլիմայական վտանգներ, մինչդեռ կարկուտի դեպքում հատկապես գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսությունների համար հետևանքները կլինեն նշանակալից վերջինիս տեղի ուենալու դեպքում:

Միջնաժամկետում արձանագրվում է կլիմայական վտանգների վերաբերյալ մտավախությունների ցանկի ընդլայնում, ինչպես նաև ռիսկերի գնահատականների բարձրացում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք կլիմայական վտանգների դեպքում՝ դրանց առաջացման բարձր հավանականության պայմաններում, հնարավոր հետևանքների ծանրության պատճառով ռիսկի մակարդակը գնահատվում է որպես միջին և դրանից բարձր:

Միևնույն ժամանակ, սաստիկ ռիսկի գնահատականը միջնաժամկետ հատվածում վերաբերում է հիմնականում ջրերի սակավությանը և երաշտներին: Այսպիսով, միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է, որ գլոբալ տաքացման պայմաններում, կաճի երաշտների առաջացման հավանականությունը: Երաշտները գնահատվում են որպես շատ բարձր հավանականությամբ տեղի ունեցող երևույթներ, որոնք կարող են խիստ բացասաբար անդրադառնալ Թալին համայնքի հատկապես գյուղաբնակ բնակչության վրա: Գյուղացիական տնային տնտեսությունները սահմանափակ կարողություններ ունեն հաղթահարելու երաշտների հետևանքները, հատկապես ջրերի սակավության խորացող ռիսկի պայմաններում: Այդ պատճառով միջնաժամկետ հատվածում երաշտների և ջրերի սակավության դեպքում ռիսկի մակարդակը գնահատվում է որպես ամենաբարձր: Հետևաբար, վերջիններիս տեղի ունենալու դեպքում դրանց հետևանքները խիստ բացասական են լինելու: Իսկ սա շեշտադրում է ջրային համակարգին վերաբերող արդյունավետ հարմարվողականության միջոցառումների մշակման անհրաժեշտությունը, ինչպես նաև այլընտրանքային եկամտի աղբյուր ունենալու անհրաժեշտությունը:

Գլոբալ տաքացման պայմաններում Թալին համայնքում երկարաժամկետ հատվածում շատ բարձր հավանականությամբ ակնկալվում են երաշտներ, որոնք կուղեկցվեն ջերմային ալիքներով, ջրերի սակավությամբ և հրդեհների հաճախացմամբ: Այս պայմաններում կլիմայական ազդեցությունները հատկապես ծանր կլինեն գյուղաբնակ բնակչության համար: Դեգրադացվող հողերի պայմաններում բերքատվության կորուստները կարող են կրել սաստիկ բնույթ, իսկ կարկտահարությունների և գարնանային ցրտահարությունների համակցված ազդեցությունը կարող է հանգեցնել բերքի համատարած կորստի:

Չնայած ընդհանուր սպառնալիքները մեծ մասամբ ընկալելի են, պատրաստվածության կոնկրետ միջոցառումների վերաբերյալ գիտելիքները կարող են տարբեր լինել, որի պարագայում առաջնային պետք է լինեն Թալին համայնքի հարմարվողականության միջոցառումների ծրագրում նպատակային իրազեկման և թիրախային կարողությունների զարգացման անհրաժեշտությունը:

Այսպիսով, Թալին համայնքում ընկալումները համահունչ են, կլիմայական փոփոխությունների հետևանքով ակնկալվող ռիսկերի հետ, որոնք այլ զարգացած երկրներում գնահատվում/հաշվարկվում են քանակական գնահատման եղանակով:

14.6. Խոցելիության ոլորտային վերլուծությունը

Բացահայտված կլիմայական վտանգների հիման վրա իրականացվել է Թալին համայնքի հիմնական ոլորտների խոցելիության, զգայունության և հարմարվողական կարողությունների գնահատում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ կլիմայի փոփոխության ազդեցությունները տարբեր կերպ են արտահայտվում առանձին ոլորտներում՝ կախված ռեսուրսների առկայությունից, ենթակառուցվածքների վիճակից և կառավարման կարողություններից (Աղյուսակ 41): Ընդհանուր առմամբ, ամենախոցելի ոլորտն է համարվել գյուղատնտեսությունը և անտառտնտեսությունը, որին հաջորդել է էներգետիկ համակարգը՝ հաշվի առնելով վեջիններիս խոցելիությունը մի շարք կլիմայական վտանգներից, ինչպես նաև շրջակա միջավայրը և կենսաբազմազանությունը: Գյուղատնտեսությունից կախումը խոցելի է դառնալու հատկապես գյուղաբնակ տնային տնտեսություններին, որոնք համայնքի բնակչության մեծ մասն են կազմում:

Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն: Գյուղատնտեսությունը Թալին համայնքում ամենաբարձր խոցելիություն ունեցող ոլորտն է, ինչը պայմանավորված է կլիմայական պայմաններից՝ վերջիններիցս ուղղակի կախվածությամբ: Երաշտը և ջրերի սակավությունը խաթարում են ոռոգման հնարավորությունը գյուղացիական տնային տնտեսությունների համար, նվազեցնում բերքատվությունը և սահմանափակում անասնապահությամբ զբաղվելու համար ջրամատակարարումը: Ջերմային ալիքները և ծայրահեղ բարձր ջերմաստիճանները առաջացնում են ջերմային սթրես, արագացնում հողի խոնավության կորուստը և նվազեցնում արտադրողականությունը: Կարկտահարությունն ու ցրտահարությունը կարող են արագորեն ոչնչացնել ամբողջ բերքը՝ հատկապես պտղատու այգիներում և վաղ բերք տվող մշակաբույսերի դեպքում:

Բացի այդ, հողի էրոզիան և դեգրադացիան, որոնք պայմանավորված են թե՛ առատ տեղումներով, թե՛ հողօգտագործման խնդիրներով, աստիճանաբար վատթարացնում են հողերի որակը: Գյուղատնտեսական ոլորտի զգայունությունը բարձր է, իսկ հարմարվողական կարողությունները՝ սահմանափակ՝ հնացած ոռոգման համակարգերի, սահմանափակ ֆինանսական միջոցների և ռիսկերի կառավարման մեխանիզմների (օր. ապահովագրություն) բացակայության պատճառով: Առանց նպատակային հարմարվողական միջոցառումների այս ոլորտը շարունակում է մնալ Թալինի ամենախոցելի ոլորտներից մեկը՝ վտանգելով տեղական եկամուտները և պարենային անվտանգությունը:

Ջրային ռեսուրսներ (ջրամատակարարում և կառավարում): Թալինի ջրային համակարգը խիստ խոցելի է երաշտների և ջերմաստիճանի բարձրացման նկատմամբ: Երաշտը և ջրերի սակավությունը նվազեցնում են կլիմայական վտանգերին դիմակայելու կարողությունները, իսկ ջերմային ալիքները մեծացնում են ջրի պահանջարկը՝ միաժամանակ բարձրացնելով կորուստները ցանցում, ինչպես նաև խաթարվում է կանոնավոր ջրի մատակարարումը, որի վրա ազդում է այն հանգամանքը, որ ոռոգումը կարող է իրականացվել խմելու ջրով՝ Վերջին տարիներին արձանագրվել են ստորերկրյա ջրերի մակարդակի նվազման միտում, ինչը մեծացնում է ջրի սակավության ռիսկը:

Ջրամատակարարման ենթակառուցվածքները մասամբ հնացած են, ինչի պատճառով ջրի մի մասը կորսվում է մինչև վերջնական սպառողին հասնելը: Բարձր ջերմաստիճանները մեծացնում են գոլորշիացումը, ինչի հետևանքով նույն քանակի տեղումները տալիս են ավելի քիչ արդյունավետ ջրային ռեսուրս: Ջրային ոլորտի զգայունությունն ակնհայտ է. նույնիսկ մեկ չոր տարին կարող է հանգեցնել ոռոգման սահմանափակումների և սոցիալական լարվածության: Հարմարվողական կարողությունները ներկայումս բավականին ցածր են՝ պայմանավորված պահեստավորման, արդյունավետ ջրօգտագործման և այլընտրանքային աղբյուրների բացակայությամբ: Այդ պատճառով ջրի սակավությունը դիտվում է որպես Թալինի համար առաջնահերթ ռազմավարական խնդիր:

Առողջապահություն: Առողջապահական ոլորտը Թալինում միջին մակարդակի խոցելիություն ունի, սակայն կլիմայական սթրեսների աճի պայմաններում ռիսկերը խորանում են՝ ջերմային ալիքների, ծայրահեղ շոգի և արդյունաբերական փոշու պայմաններում ուժեղ քամիների պարագայում: Ծայրահեղ շոգն ու ջերմային ալիքները անմիջական վտանգ են ներկայացնում բնակչության առողջության համար՝ հատկապես տարեցների, երեխաների և քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց շրջանում: Շատ շոգ օրերին կարող են ավելանալ, սրտանոթային և շնչառական, երիկամային հիվանդությունների

սրացման ռիսկը, իսկ բուժհաստատությունների/ամբուլատորիաների սահմանափակ կարողությունը կարող է բավարար չլինել սպասարկելու գանգատներով դիմած բնակչիներին: Ջրի սակավությունը կարող է նաև բացասաբար անդրադառնալ հիգիենայի և սանիտարական պայմանների վրա: Թեև համայնքում գործում են առաջնային բուժօգնության ծառայություններ, դրանց հարմարվողական կարողությունները սահմանափակ են:

Շենքեր և շինություններ: Թեպետ այս ոլորտը գնահատվում է որպես միջին խոցելիության մակարդակը չգերազանցող ոլորտ, սակայն որոշ վտանգների համադրման դեպքում խոցելիությունը կարող է զգալի լինել: Ուժեղ քամիները, փոթորիկները և կարկտահարությունը կարող են վնասել տանիքները և շենքերի արտաքին տեսքը (կոտրված պատուհաններ), իսկ ջերմային ալիքները վատ ջերմամեկուսացված տներում կարող են առաջացնել որոշակի խնդիրներ: Շենքերի մի մասը կառուցված է առանց ժամանակակից կլիմայական վտանգները, ինչն էլ ոլորտի խոցելիության պատճառով՝ վերջիններիս սպասարկման սահմանափակ լինելու հանգամանքով, էներգաարդյունավետ տեխնոլոգիաների գրեթե բացակայության պայմաններում:

Էներգետիկ համակարգ: Համակարգը խոցելի է ուժեղ քամիների, կարկուտի, ամպրոպի/կայծակի, շատ բարձր ջերմաստիճանի նկատմամբ, ինչի հետևանքով գրանցվել են էլեկտրաէներգիայի խափանումներ: Ոլորտի խոցելիության մակարդակը կլիմայական վտանգների նկատմամբ ընդհանուր առմամբ համարվում է միջին, միջինից բարձր, քանի որ այդ վտանգների հետևանքով կարող են նվազեցնել էներգակայանների և տրանսֆորմատորների արդյունավետությունը, մեծացնել գերբեռնվածության և տեխնիկական խափանումների հավանականությունը, վնասել օդային գծերը և հանգեցնել էլեկտրամատակարարման ընդհատումների, ինչ էլ իր հերթին բացասաբաշ կանդրադառնա այլ ոլորտների վրա՝ խաթարելով ջրամատակարարումը, ՏՀՏ համակարգերի աշխատանքը և այլն: Իսկ խոցելիության աղբյուրներն են օդային գծերի գերակշռումը, էներգակայանների սահմանափակ պաշտպանվածությունը կլիմայական ազդեցություններից և այլն:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ): ՏՀՏ ոլորտի խոցելիությունը կարող է, ընդհանուր առմամբ, գնահատվել որպես միջին, սակայն որոշ կլիմայական վտանգների դեպքում այն դառնում է ռազմավարական: Հրդեհները, շատ բարձր ջերմաստիճանը, ուժեղ քամիները և այլ կլիմայական վտանգները կարող են վնասել մալուխները, ալեհավաքները և օպտիկական ուղիները՝ առաջացնելով կապի խափանումներ: Խոցելիության պատճառներն են օդային մալուխների և բաց էներգատուցվածքների ֆիզիկական խոցելիությունը, այլընտրանքային ուղիների սահմանափակ լինելը և այլն:

Զբոսաշրջություն: Զբոսաշրջության ոլորն ունի ցածր խոցելիություն: Ջրերի սակավությունը և հրդեհները կարող են նվազեցնել Թալին համայնքի զբոսաշրջային գրավչությունը, իսկ էկոհամակարգերի դեգրադացիան երկարաժամկետ հատվածում կսկսի բացասաբար ազդել է այցելությունների քանակի վրա: Սրա բացատրություններից մեկը նա է որ համայնքում միջուցե կարևոր դեր են խաղում արդյունաբերական ձերնակությունները՝ հանքերը և համայնի կողմից ստեղծված ավելացված արժեքի կառուցվածքում վերջինս տեսակարա կշիռը ցածր է: Զբոսաշրջության զարգացումը հատկապես գյուղաբնակ վայրերում և/կամ դրա մոտակայքում կարող է նվազենել գյուղաբնակ տնային տնտեսությունների խոցելիությունը մի շարք կլիմայական վտանգների հանդեպ և կարող է դիտվել, որպես այլընտրանքային եկամտի աղբյուր գյուղատնտեսության համեմատ:

Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն: Շրջակա միջավայրի և կենսաբազմազանության ոլորտը խոցելի է մի շարք կլիմայական վտանգների նկատմամբ: Երաշտը նվազեցնում է բուսածածկի կենսունակությունը, հրդեհները ոչնչացնում են անտառային և խոտածածկ տարածքները, իսկ էրոզիան և արդյունաբերական փոշին արագացնում են հողերի դեգրադացիան: Խոցելիության պատճառները պայմանավորված են էկոհամակարգերի սահմանափակ վերականգնողական կարողություններով և և դրանից բխող խնդիրներով, որոնք երկարաժամկետ հատվածում կարող են խաթարել լանդշաֆտային կայունությունը և մեծացնել այլ ոլորտների խոցելիությունը:

Ընդհանուր առմամբ, ոլորտների խոցելիությունը Թալին համայնքում պայմանավորված է կլիմայական վտանգների ինտենսիվությամբ և հաճախականությամբ, սակայն առավելապես՝ ենթակառուցվածքների վիճակով, բնական ռեսուրսներից կախվածությամբ և հարմարվողական կարողությունների սահմանափակությամբ: Սա ընդգծում է համակարգային, միջոլորտային և երկարաժամկետ հատվածի համար հարմարվողական մոտեցման անհրաժեշտությունը համայնքին մակարդակում: Հետևաբար, Թալինի հարմարվողականության ծրագրերի պլանավորումը պետք է լինի համալիր և բազմաոլորտային՝ միաժամանակ ուղղված ջրային և պարենային անվտանգության ամրապնդմանը, հանրային առողջության պաշտպանությանը և ենթակառուցվածքների զարգացմանը՝ նվազեցնելով համայնքի ընդհանուր խոցելիությունը:

Աղյուսակ 41. Համեմատական խոցելիության աղյուսակ

Կլիմայական վտանգ / Ոլորտ	Գյուղատնտեսություն / Գյուղատնտեսության ճյուղեր	Գյուղատնտեսության ճյուղեր	Բնակավայրերի կառուցվածք	Առողջապահություն	Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն	Շենքեր շինություններ	ՏՀՏ	Զբոսաշրջություն	Հողօգտագործման փոփոխություն	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն
Երաշտներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ջերմային ալիքներ/ Ծայրահեղ շոգ շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ջրերի սակավություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Էրոզիա	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Կարկուտ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ցրտահարություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հրդեհներ (խոտածածկի, անտառային)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ուժեղ քամիներ / փոթորիկներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ամրոպ/կայծակ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/Մելավներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արդյունաբերական փոշի	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

Նշում. 0 = Կանաչ, 1 = Ղեղին, 2 = Նարնջագույն, 3 = Կարմիր

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

14.7. Բնակչության խոցելի խմբեր

Կլիմայական վտանգների ազդեցությունները Թալին համայնքի բնակիչների վրա հավասարաչափ չեն դրսևորվում. համայնքում կան սոցիալապես անապահով և գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսությունները, որոնք ավելի խոցելի են՝ իրենց առողջական վիճակի, եկամտի աղբյուրների, զբաղվածության բնույթի և բնակչության վայրի առանձնահատկությունների պատճառով: Խոցելիության հիմնական գործոնները կապվում են ջրի սակավության, երաշտների, կարկտահարության, ջերմային ալիքների/շատ բարձր ձյանատիճանի ժամանակահատվածի հետ, ուժեղ քամիների, հրդեհների և արդյունաբերական փոշու ազդեցությունների հետ, որոնք միաժամանակ ազդում են թե՛ կենսապահովման, թե՛ առողջության վրա:

Գյուղաբնակ և գյուղատնտեսությունից կախված տնային տնտեսությունները, հատկապես ցածր եկամուտ ունեցողները, դիտարկվում են որպես ամենախոցելի խմբերից մեկը: Ջրի սակավությունը և երաշտը հանգեցնում են ոռոգման ջրի մատչելիության սահմանափակման, ոռոգման գրաֆիկի խափանման և բերքատվության նվազման, ինչը բնակչության այս խմբերի համար առաջացնում է ուղիղ ֆինանսական կորուստներ: Բացի դրանից, առկա են պարենային ապահովության հետ կապված խնդիրների և գյուղատնտեսական մթերումների կրճատման ռիսկեր, որոնք կարող են ազդել նաև համայնքում աշխատուժի պահանջարկի և եկամուտների վրա: Այս խմբի խոցելիությունն ավելի է մեծանում այն դեպքերում, երբ վնասները չեն փոխհատուցվում ապահովագրությամբ և կամ առկա չեն ֆինանսական պահուստներ՝ վերականգնման համար:

Կանայք և աղջիկները ևս առանձնացվում են որպես խոցելի խումբ՝ հատկապես կարկտահարության և ջերմային ալիքների համատեքստում: Դա պայմանավորված է նրանով, որ կլիմայական սթրեսի ժամանակ տնային տնտեսությունում ջրի օգտագործման, խնամքի և առողջության պահպանման հավելյալ բեռը հաճախ ընկնում է կանանց վրա, իսկ գյուղական բնակավայրերում կանայք ներգրավված են նաև գյուղատնտեսական աշխատանքներում: Հետևաբար, բերքի կորուստը կամ ջրի մատչելիության խաթարումը կարող է անմիջական ազդեցություն ունենալ ոչ միայն եկամուտների, այլ նաև տնային տնտեսության ընդհանուր կայունության վրա:

Տարեցները և քրոնիկ հիվանդություններ ունեցողներն առավել խոցելի խումբ են՝ ջերմային ալիքների, արդյունաբերական փոշու տարածման և ջրի սակավության պայմաններում: Առողջապահական ազդեցությունների շարքում կարելի է առանձնացնել սրտանոթային և շնչառական բարդությունների, ինչպես նաև այլ քրոնիկ խնդիրների սրացման ռիսկերը, հատկապես շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատվածներում: Նույն ժամանակ, փոշու տարածումը և օդի որակի վատթարացումը դիտվում են որպես առողջական երկարաժամկետ խնդիրների հավանական գործոն, որոնք բարձրացնում են առողջապահական ծախսերը և նվազեցնում են աշխատունակությունը:

Հաջորդ խոցելի խումբը երեխաներն են: Վերջիններս հատկապես խոցելի են ջերմային ալիքների և ուլտրամանուշակագույն ճառագայթման ազդեցության պայմաններում: Բարձր ջերմաստիճանների ժամանակ երեխաներն ավելի արագ են ջրազրկվում և դժվար են տանում շոգը, իսկ եթե ջրամատակարարումն անկանոն է դառնում, ապա առողջապահական ռիսկերը կարող են ավելի արագ աճել: Բացի դրանից, ուժեղ քամիների/փոթորիկների դեպքում կրթական հաստատությունների տանիքների վնասման ռիսկը կարող է խաթարել

ուսումնական գործընթացի կանոնավոր ընթացքը՝ անուղղակիորեն ազդելով երեխաների վրա:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ և ոչ բարվոք բնակարանային պայմաններում ապրող բնակիչները նույնպես առանձնանում են որպես խոցելի խումբ: Կարկտահարության և ուժեղ քամիների դեպքում տների տանիքների ու պատուհանների վնասումը կարող է առաջացնել զգալի ֆինանսական բեռ, հատկապես այն դեպքում, երբ գույքը ապահովագրված չէ: Այս խմբերի համար խնդիրը հաճախ ոչ միայն վնասի չափն է, այլ նաև արագ վերականգնման սահմանափակ հնարավորությունը:

Բացօթյա պայմաններում աշխատող անձինք (գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնողներ, հովիվներ, շինարարական կամ այլ նմանատիպ զբաղվածություն ունեցողներ) խոցելի են ջրի սակավության և ջերմային ալիքների համատեքստում: Շոգի և չորության համադրությունը մեծացնում է ջերմային սթրեսի, ջրազրկման և աշխատունակության նվազման ռիսկերը, իսկ սեզոնային ջրի պակասը կարող է լրացուցիչ խնդիրներ ստեղծել աշխատանքի կազմակերպման և արտադրողականության համար:

Այսպիսով, Թալին համայնքում կլիմայական խոցելիությունը ձևավորվում է երեք հիմնական փոխկապակցված ուղղություններով՝

1. գյուղատնտեսական արտադրության խաթարման հետևանքով առաջացող ֆինանսական (եկամտի աղբյուր) և պարենային ռիսկեր,
2. ծայրահեղ շոգի և օդի որակի վատթարացման պայմաններում բնակչության առողջական խոցելիության աճ,
3. ենթակառուցվածքների վնասման և դրանց վերականգնման սահմանափակ կարողությունների հետ կապված ռիսկեր, հատկապես ցածր եկամուտ ունեցող և սոցիալապես անապահով տնային տնտեսությունների համար:

Հետևաբար, հարմարվողականության միջոցառումների պլանավորման ընթացքում կարևոր է կիրառել ներառական մոտեցում՝ ապահովելով իրազեկման և վաղ նախազգուշացման հասանելիությունը, ինչպես նաև ուժեղացնելով սոցիալական աջակցության և տնտեսական դիմադրողականության մեխանիզմները կլիմայական սթրեսի ժամանակահատվածներում:

14.8. Թալինի հարմարվողականության ծրագիրն և միջոցառումները

Վերը նշված ռիսկի և խոցելիության գնահատման հիման վրա՝ մշակվել է համապարփակ հարմարվողականության ծրագիր Թալին համայնքի կլիմայական ռիսկերը նվազեցնելու և դիմադրողականությունը ամրապնդելու համար: Նախատեսված միջոցառումները վերաբերում են բացահայտված առաջնահերթ վտանգներին և ոլորտներին (հատկապես՝ միջին կամ բարձր ռիսկային գնահատվածներին) և մշակվել են Քաղաքապետերի դաշնագրի ուղեցույցներին, JRC (2024) «Ռիսկի և խոցելիության գնահատման» ուղեցույցի սկզբունքներին և ՀԱԾ նպատակներին համապատասխան՝ շեշտը դնելով ինտեգրման, ծախսարդյունավետության և կարողությունների աստիճանական հզորացման վրա: Հարմարվողականության գործողությունները մշակվել են ոլորտային տրամաբանությամբ և նախատեսում են իրականացման երեք հորիզոն՝ կարճաժամկետ (0–5 տարի)՝ անհետաձգելի և համակարգը կայունացնող ներդրումների համար, միջնաժամկետ (6–14 տարի)՝ ծածկույթի ընդլայնման և արդյունավետության ամրապնդման համար, և երկարաժամկետ (15+ տարի)՝ համակարգային փոփոխությունների և բարձր

դիմադրողականության ապահովման համար: Գործողությունների իրականացումն առաջարկվում է համայնքապետարանի, պետական պատասխանատու մարմինների և մասնավոր հատվածի համագործակցությամբ՝ հնարավոր ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացմամբ (Հավելված 3):

Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն. Թալինում հարմարվողականության առանցքային միջոցառումներն ուղղված են ջրի կառավարման և գյուղատնտեսության դիմադրողականության բարձրացման խնդիրներին: Միջոցառումների տրամաբանությունն ընդգծում է, որ երաշտի, ջերմային ալիքների, կարկտահարության և ցրտահարության, ջրի սակավության և այլ աղետների պայմաններում առաջնային է իրականացնել հարմարվողականության միջոցառումներ: Միջոցառումները համատեղում են ենթակառուցվածքային, տեխնոլոգիական, էկոհամակարգային և կազմակերպչական լուծումներ՝ ապահովելով գյուղատնտեսական արտադրության և գյուղական կենսաապահովման համակարգերի երկարաժամկետ դիմակայունություն, որոնք առաջարկվել են հետևյալ ուղղություններով՝

- Ջրային ռեսուրսների կառավարում և ոռոգում ջրի կորստի նվազեցման և ոռոգման ծածկույթի ընդլայնման նպատակով,
- Կլիմայական վտանգներից պաշտպանություն, ֆինանսական կորուստների կրճատման նպատակով,
- Հողի պաշտպանություն և ագրոէկոլոգիական կայունություն,
- Թվային լուծումների և վաղաժամ ազդարարման համակարգի ներդրում,
- Ագրոարտադրության տեխնոլոգիական արդիականացում,
- Տնտեսական պաշտպանություն և ֆինանսական դիմակայունություն՝ ֆինանսական ռիսկերի նվազեցում,
- Մերմնային և կենսաբազմազանության հարմարվողականություն և այլն:

Կարճաժամկետ հատվածում առաջնային ուղղություններից է ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ինչը նախատեսվում է վերականգնել և վերանորոգել ոռոգման ջրանցքներ, կառուցել անձրևաջրերի կուտակման ավազաններ և խթանել կաթիլային ոռոգման համակարգերի կիրառումը: Միաժամանակ միջոցառումները ուղղված են գյուղատնտեսական արտադրության ֆիզիկական պաշտպանությանը կլիմայական ծայրահեղ երևույթներից: Այդ նպատակով նախատեսվում է տեղադրել էկո-կայուն հակակարկտային կայաններ, տրամադրել կարկտապաշտպան, արևապաշտպան, սառցադիմացկուն և քամուց պաշտպանող ծածկեր գյուղացիական տնտեսություններին: Նաև ներառվում են միջոցառումներ, որոնք իրենցից ներկայացնում են ցանքաշրջանառության և ցանքածածկի կիրառման խթանում, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծում, բազմամյա տնկարկների վերականգնում և արոտավայրերի կայուն կառավարման համակարգի ներդրում, ինչը կնպաստի հողի խոնավության պահպանմանը, էրոզիայի նվազեցմանը և ընդհանուր էկոհամակարգային կայունության բարձրացմանը: Ագրոտեխնոլոգիական և թվային լուծումները ուղղված կլինեն արտադրության արդիականացմանն ու ռիսկերի կանխարգելմանը: Խելացի անասնագույների և ջերմոցների կառուցումը, ինչպես նաև համայնքային թվային հավելվածի ստեղծումը վաղաժամ ազդարարման համար հնարավորություն կտան բարձրացնել արտադրողականությունը, նվազեցնել կլիմայական ռիսկերի ազդեցությունը և ժամանակին տեղեկացնել գյուղացիական տնտեսություններին սպասվող վտանգների մասին: Գյուղացիական տնային

տնտեսությունների դիմակայունության բարձրացման նպատակով առաջարկվում է աջակցել գյուղատնտեսական ապահովագրության կիրառմանը և իրազեկման միջոցառումներին, ինչը կօգնի մեղմել կլիմայական աղետների հետևանքով ֆինանսական կորուստները:

Ընդհանուր առմամբ, առաջարկվող միջոցառումները ձևավորում են փուլային հարմարվողական ռազմավարություն, որը կարճաժամկետ հատվածում կկրճատի ջրի և բերքի կորուստները, միջնաժամկետում կբարձրացնի գյուղատնտեսական համակարգերի արդյունավետությունն ու ապահովագրական ծածկույթը, իսկ երկարաժամկետ հեռանկարում կհանգեցնի խելացի, էկո-կայուն և բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսության ձևավորմանը՝ էականորեն բարձրացնելով Թալին համայնքի դիմակայունությունը կլիմայական փոփոխությունների նկատմամբ:

Կարճաժամկետ հատվածում ակնկալվում է ջրի կորուստների կրճատում շուրջ 20%-ով, բերքի կորուստների նվազում՝ 15%-ով, ապահովագրական ծածկույթի աճ՝ 15%-ով, ինչպես նաև բնակչության շուրջ 90%-ի իրազեկում կլիմայական ռիսկերի վերաբերյալ:

Միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում է ընդլայնել ռոռզման և հակակարկտային համակարգերի ծածկույթը մինչև 40%, ինչը հնարավորություն կտա ջրի կորուստները և բերքի կորուստները կրճատել մոտ 40%-ով, իսկ ապահովագրական ծածկույթը բարձրացնել մինչև 35%: Միննույն ժամանակ կաճի խելացի անասնազույգերի և ջերմոցների տեսակարար կշիռը՝ հասնելով շուրջ 40%-ի: Երկարաժամկետ փուլում ծրագիրը նպատակ ունի ապահովել ամբողջական անցում խելացի ռոռզման ցանցին և էկո-կայուն հակակարկտային համակարգերին: Արդյունքում նախատեսվում է ջրի և բերքի կորուստների կրճատում մինչև 90%, ապահովագրական ծածկույթի աճ մինչև 90%, ինչպես նաև խելացի անասնազույգերի և ջերմոցների լայն տարածում համայնքում՝ համապատասխանաբար շուրջ 80% և 70% տեսակարար կշռով:

Էներգետիկա. Էներգետիկ ոլորտը Թալին համայնքում խոցելի է ջերմային ալիքների/ շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատվածի, կայծակի, արդյունաբերական փոշու (հատկապես ուժեղ քամիների ժամանակ արևային էներգետիկայի տեսանկյունից), ուժեղ քամիների և փոթորիկների, կայծակի և ամպրոպի, հրդեհների ու կարկտահարության նկատմամբ, որոնք կարող են առաջացնել գերբեռնվածություն, ենթակայանների խափանումներ և էլեկտրամատակարարման ընդհատումներ, հատկապես գյուղական բնակավայրերում: Հարմարվողականության միջոցառումները ուղղված են էլեկտրական ենթակառուցվածքների դիմադրողականության և մատակարարման հուսալիության բարձրացմանը:

Կարճաժամկետ հատվածում առաջարկվում է կառուցել կամ կլիմայական ազդեցություններից պաշտպանել 2 և ջրամեկուսացնել 5 ենթակայան և 10 տրանսֆորմատորային խցիկ, ինչպես նաև ցածր լարման գծերը փոխարինել մեկուսացված մալուխներով: Զուգահեռաբար առաջարկվում է իրականացնել գերլարման սահմանափակիչների տեղադրում և հողանցման բարելավում 5 գյուղական բնակավայրերում, ինչպես նաև բնակելի տարածքները սնուցող օդային գծերի փոխարինում և ամրապնդել հենարանները: Այս փուլում ակնկալվում է գերբեռնվածության և անջատումների քանակի կրճատում և գյուղաբնակ տարածքներում էլեկտրամատակարարման հուսալիության աճ:

Միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում է կլիմայական ազդեցություններից պաշտպանված ենթակայանների քանակի ավելացում մոտ 25%-ով և մեկուսացված մալուխների ծածկույթի ընդլայնում, ինչը թույլ կտա անջատումների կրճատել մոտ 40%-ով,

իսկ հուսալիությունը բարձրացնել՝ շուրջ 70%-ով: Արդյունքում ակնկալվում է գերբեռնվածության և անջատումների կրճատում մինչև 80% և գյուղաբնակ տարածքներում էլեկտրամատակարարման հուսալիության աճ մինչև 90%, քանի որ Թալին համայնքում կձևավորվի ավելի անվտանգ, հուսալի և կլիմայական ռիսկերին դիմակայուն էներգետիկ համակարգ:

Տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաներ. ՏՀՏ ենթակառուցվածքները Թալին համայնքում խոցելի են հրդեհների, ջերմային ալիքների/շատ բարձր ջերմաստիճանների, կայծակի, կարկուտի, ուժեղ քամիների և փոթորիկների հանդեպ, որոնք կարող են հանգեցնել մալուխների վնասմանը, կապի խափանմանը և ինտերնետ ծածկույթի ժամանակավոր կորստի: Քանի որ ՏՀՏ համակարգերը կարևոր դեր ունեն ինչպես արտակարգ իրավիճակների կառավարման, այնպես էլ հանրային ծառայությունների անխափանության ապահովման համար, դրանց կլիմայի հանդեպ դիմադրողականության բարձրացումը դիտվում է որպես առաջնահերթ ուղղություն:

Կարճաժամկետ փուլում առաջարկվում է փոխարինել շուրջ 20 կմ մալուխներ՝ չհրկիզվող մալուխային պատյաններով և տեղադրել ջերմաստիճանի ու ծխի սենսորներ՝ հրդեհների և գերտաքացման վաղ հայտնաբերման նպատակով: Առաջարկվում է նաև առնվազն 20–25 ալեհավաքային բումերներ ավելացնել, ինչպես նաև ներդնել պահուստային օպտիկական ուղիներ երկու երթուղու վրա՝ ավտոմատ վերուղեգրման համակարգով: Այս միջոցառումները հնարավորություն կտան կրճատել կապի խափանումները և բարձրացնել ՏՀՏ համակարգերի անվտանգությունը բարձր ռիսկային գոտիներում:

Միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում է համայնքում անհրաժեշտ մալուխների շուրջ 40%-ի աստիճանական փոխարինում, ինչը կապահովի ինտերնետ ծածկույթի խափանումների կրճատում մինչև մոտ 60%: Երկարաժամկետ փուլում ծրագիրը նպատակ ունի իրականացնել ՏՀՏ մալուխների ամբողջական փոխարինում չհրկիզվող և դիմացկուն համակարգերով, ինչի արդյունքում ակնկալվում է կապի և ինտերնետ ծառայությունների խափանումների կրճատում մինչև 90% և համայնքի թվային դիմադրողականության զգալի ամրապնդում:

Շենքեր և շինություններ. Թալին համայնքի շենքային ֆոնդը խոցելի է հորդառատ անձրևների հետևանքով առաջացող ջրհեղեղների, ուժեղ քամիների ու փոթորիկների, կարկուտահարության, ինչպես նաև ջերմային ալիքների և ծայրահեղ շոգի նկատմամբ: Հատկապես ռիսկային են հին բնակելի շենքերն ու տները, որտեղ կլիմայական ծայրահեղ իրադարձությունները կարող են հանգեցնել զգալի նյութական վնասների: Այստեղ առաջարկվող միջոցառումները կիրականացվեն պիլոտային ծրագրերի միջոցով՝ կենտրոնանալով համայնքի կողմից որպես առավել խոցելի համարվող բնակելի շենքերի և տների վրա:

Կարճաժամկետ փուլում ծրագիրն առաջարկում է իրականացնել 20 բնակելի շենքերի և/կամ տների տանիքների ամրացում հողմակայուն խարիսխային համակարգերով, ինչպես նաև ջրհեղեղից պաշտպանություն 20 շենքերի/տների համար: Բացի այդ, նախատեսվում է 10 շենքերի տանիքների փոխարինում կարկուտադիմացկուն սալիկներով և 20 բազմաբնակարան շենքերի/տների համար «cool-roof» ծածկույթի և պատերի ջերմամեկուսացման իրականացում՝ շոգի ազդեցությունը նվազեցնելու համար և այլն: Այս միջոցառումների արդյունքում ակնկալվում է տանիքների վնասման դեպքերի նվազում և ջրհեղեղներից առաջացած վնասների կրճատում:

Միջնաժամկետ հեռանկարում փորձնական լուծումների մասշտաբավորումը թույլ կտա բարձրացնել տանիքների հուսալիությունը մոտ 50%-ով, ավելացնել ջրհեղեղից պաշտպանված բնակելի շենքերի/տների քանակը շուրջ 30%-ով, ինչպես նաև ջերմապաշտպան տանիքներով և ջերմամեկուսացված պատերով շենքերի/տների թվի աճ մոտ 35 տոկոսով: Երկարաժամկետ փուլում ծրագիրը նպատակ ունի ապահովել շենքային ֆոնդի կլիմայական դիմադրողականության բարձրացումը մինչև 90%, ջրհեղեղից պաշտպանված բնակելի շենքերի/տների ընդգրկվածությամբ մինչև 80%: Արդյունքում ակնկալվում է կլիմայական վտանգներից առաջացած շենքային վնասների զգալի նվազում և բնակչության բնակարանային անվտանգության էական բարձրացում:

Ջրի համակարգ. Թալին համայնքի ջրամատակարարման համակարգը խոցելի է ինչպես երաշտների և ջերմային ալիքների/ շատ բարձր ջերմաստիճանի ժամանակահատվածի, ջրերի սակավության և այլն կլիմայական վտանգների նկատմամբ:

Կարճաժամկետ փուլում ծրագիրը առաջարկում է տեղադրել երեք շարժական պոմպային միավոր, 3000 մ³ ծավալով խմելու ջրի բաք և խելացի ճնշման հաշվիչներ երկու բարձր ճնշման գոտիներում՝ ջրի կորուստները նվազեցնելու և երաշտի կամ արտակարգ իրավիճակների դեպքում առնվազն 48 ժամ շարունակական ջրամատակարարում ապահովելու համար, մաքրել և վերակառուցել սելավատարներ, որպեսզի ջրահեռացման աշխատանքները կատարվեն պարբերաբար և արդյունավետ: Այս փուլում ակնկալվում է ջրերի հեռացման արագության աճ առնվազն 20%-ով, ինչպես նաև անխափան ջրամատակարարման աճ 48 ժամով 20-30%:

Միջնաժամկետ հեռանկարում իրականացվող միջոցառումները թույլ կտան բարձրացնել ջրահեռացման արդյունավետությունը և ջրի հասանելիությունը մոտ 50%-ով, իսկ երկարաժամկետ փուլում 90%-ով: Արդյունքում համայնք կարող է ունենալ ավելի կլիմայական վտանգներին և փոփոխություններին արագ արձագանքող, արդյունավետ և դիմակայուն ջրի համակարգ, որը կբարձրացնի ինչպես բնակչության ջրային անվտանգությունը, այնպես էլ արտակարգ իրավիճակների կառավարման ընդհանուր կարողությունները Թալին համայնքում:

Տրանսպորտ. Թալին համայնքում առաջարկվում է իրականացնել համապարփակ միջոցառումներ, որոնք ուղղված են հեղեղումների, սելավների, պայմանների և ճանապարհների դեգրադացիայի հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցմանը:

Կարճաժամկետ փուլում առաջարկվում է վերակառուցել Թալինի առավել խոցելի առնվազն հեղեղումների ենթակա ճանապարհներ/ճանապարհահատվածներ՝ տեղադրելով կողային դրենաժային խրամատներ, ջրատարներ և ջրհեղեղների հեռացման սարքեր: Այս միջոցառումները թույլ կտան կրճատել հեղեղումների հետևանքով ճանապարհների փակման դեպքերը շուրջ 30-40%-ով և կլիմայական աղետների ժամանակ բարձրացնել անցանելի ճանապարհների բաժինը: Միջնաժամկետ հատվածում առաջարկվում է այլընտրանքային երթուղիների ընդլայնումը, ջրահեռացման լուծումների մասշտաբավորում, բարձր դիմացկունությամբ և երկար տարիների շահագործման նպատակով ասֆալտապատում ամենախոցելի հատվածներում, ինչը հնարավորություն կտա կլիմայական վտանգներին ենթակա անանցանելի ճանապարհահատվածի կրճատում:

Երկարաժամկետ փուլում տրանսպորտային ենթակառուցվածքի փուլային բարելավումը նպատակ ունի նվազեցնել կլիմայական վտանգներին ենթակա անանցանելի ճանապարհահատվածը շուրջ 90%-ով: Արդյունքում, էականորեն կբարելավվի համայնքի

կապակցվածության աստիճանը, արտակարգ իրավիճակներին արձագանքելու կարողությունը և բնակչության կենսական ծառայությունների հասանելիությունը:

Առողջապահություն. Թալին համայնքի առողջապահական համակարգը զգայուն է շատ բարձր ջերմաստիճանների, ծայրահեղ շոգի և հարակից կլիմայական վտանգների նկատմամբ, որոնք հատկապես մեծ ռիսկեր են ստեղծում տարեցների, երեխաների և քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց համար՝ մասնավորաբար արդյունաբերական փոշին քամիների ուժգնացման պարագայում: Այս պատճառով, կարճաժամկետ փուլում ծրագիրը առաջնահերթ է համարում հեռավար բժշկության ներդրումը Թալինի բժշկական կենտրոնի և գյուղական ամբուլատորիաների միջև, ինչը հնարավորություն կտա կլիմայական վտանգների հետևանքով դիմած քաղաքացիներին արագ և նպատակային բժշկական խորհրդատվություն և բուժօգնություն տրամադրել: Միաժամանակ նախատեսվում է համայնքում ստեղծել երեք հովացման կենտրոն՝ տեղական մշակութային կենտրոնների հիման վրա, որպես ժամանակավոր ապաստարաններ շոգի նկատմամբ խոցելի խմբերի համար: Առաջարկվում է նաև պիլոտային ձևաչափով հիմնել երեք «կանաչ կենտրոն»՝ հովացման և ջերմային սթրեսի նվազեցման նպատակով: Այս միջոցառումները թույլ կտան կլիմայական աղետների դեպքում ամբուլատորիա դիմած անձանց ցուցաբերվող բուժօգնության արդյունավետությունը բարձրացնել շուրջ 40%-ով, իսկ հովացման հնարավորությունները՝ մոտ 30%-ով:

Միջնաժամկետ հեռանկարում հեռավար բժշկության և համայնքային հովացման ենթակառուցվածքների ընդլայնումը հնարավորություն կտա ապահովել գյուղական բնակավայրերում բուժօգնության հասանելիության լիարժեք ընդգրկում (մինչև 100%): Ակնկալվում է, որ շոգ եղանակով պայմանավորված քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց մոտ առողջական բարդությունները հաղթահարելու կարողությունը կբարձրանա մոտ 50%-ով, իսկ կլիմայական ծայրահեղ պայմանների դեպքում առողջապահական արձագանքման արդյունավետությունը կհասնի 100%-ի:

Երկարաժամկետ փուլում միջոցառումները նպատակ ունեն ձևավորել կայուն առողջապահական համակարգ, որտեղ շոգ եղանակով պայմանավորված առողջական ռիսկերը կկառավարվեն կանխարգելիչ և համակարգված ձևով:

Ջրոսաշրջություն. Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի զարգացման նպատակով առաջարկվում է Թալին համայնքում ստեղծել 3–5 զբոսաշրջային ուղի՝ ընդգրկելով 3–5 գյուղացիական բնակավայր: Այս ուղիները միտված են ոչ միայն զբոսաշրջիկներին բնական և պատմամշակութային ռեսուրսների ներկայացմանը, այլև գյուղաբնակ վայրերում ստեղծվող տեղական բարիքների և դրա հիման վրա վերամշակվող գուղապրանքների սպառման խթանմանը՝ նպաստելով համայնքի տնտեսական ակտիվության աճին և գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտների աճին: Միաժամանակ նախատեսվում է բնապահպանական կրթական արահետների և էկո-ուղեցույցների ստեղծում, որոնք կուղղվեն հատկապես Երևանից ժամանող աշակերտների, ուսանողների և արշավախմբերի ներգրավմանը՝ դպրոցների, ուսումնական հաստատությունների և տուրօպերատորների հետ համագործակցությամբ:

Կարճաժամկետ հատվածում, կստեղծվեն Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի համար նախատեսված առաջին 3–5 ուղիները՝ ձևավորելով զբոսաշրջային հիմնական ենթակառուցվածքը համայնքում: Միջնաժամկետ հատվածում, նախատեսվում է այդ ուղիների և արահետների քանակի աճ, ներառելով նաև արկածային տուրիզմի տարրեր և նոր

բնակավայրերի ընդգրկում զբոսաշրջային պրոյեկտներում: Երկարաժամկետ հատվածում, ակնկալվում է էկոտուրիզմի և ագրոտուրիզմի ուղիների և արահետների քանակի մինչև 80% աճ՝ այլ տեսակի տուրիզմի տարրերի ներդրմամբ և համայնքի ավելի լայն տարածքային ընդգրկմամբ:

Շրջակա միջավայրի և կենսաբազմազանություն. Թալին համայնքում առաջարկվում է իրականացնել համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են լինելու էրոզիայի, արդյունաբերական փոշու և այլ կլիմայական վտանգների բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով: Կարևորություն է տրվում կարճաժամկետ հատվածում կանաչ ենթակառուցվածքների ընդլայնմանը. նախատեսվում է տնկել առնվազն 1200–1500 ծառ և ստեղծել կանաչ միջանցքներ և պաշտպանիչ շերտեր, որոնք կնպաստեն միկրոկլիմայի բարելավմանը, փոշու նվազեցմանը և լանդշաֆտային կայունության բարձրացմանը: Հողի էրոզիայի դեմ պայքարի նպատակով առաջարկվում է իրականացնել ավելի քան էրոզիայի ենթակա հողերի վերականգնում, ինչպես նաև գյուղատնտեսական հողերում հողամշակման տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն հողի խոնավության պահպանմանը և բերրիության նվազման կանխմանը: Բացի այդ, առաջարկվում է մշակել և ներդրվել է ջրային կենսամիջավայրերի պաշտպանության հատուկ ծրագիր՝ ուղղված ջրային էկոհամակարգերի կայունության պահպանմանը: ՀՀ կառավարության և Արագածոտնի մարզպետարանի հետ համատեղ առաջարկվում է մշակել օրենսդրական նախագիծ, որը կսահմանի պետական հատվածի արդյունաբերական ընկերությունների համագործակցության շրջանակը՝ հանքավայրերի և դրանց ազդեցության գոտիների մոտակայքում պարտադիր տարեկան կանաչապատման աշխատանքների իրականացման համար: Այս նախաձեռնությունը նպատակ ունի նվազեցնել արդյունաբերական գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, մասնավորապես՝ փոշու տարածումը, ինչպես նաև հողի դեգրադացիան և կենսաբազմազանության կորուստը, ինչպես նաև ապահովել լանդշաֆտների աստիճանական վերականգնումը և համայնքների էկոլոգիական կայունության բարձրացումը: Միջնաժամկետ հատվածում, ակնկալվում է կանաչ ենթակառուցվածքների և ընդլայնում, ինչպես նաև դեգրադացված հողատարածքների տոկոս կրճատում: Երկարաժամկետ հատվածում նախատեսվում է ապահովել համայնքի էկոհամակարգերի բարձր դիմակայունություն և բնական ռեսուրսների կայուն կառավարում:

Եզրակացություններ

Հետազոտական տվյալները վկայում են, որ ջերմոցային գազերի արտանետումների զգալի բաժինը պայմանավորված է քաղաքային և համայնքային տարածքներում իրականացվող բազմաբնույթ գործունեություններով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակչության, արդյունաբերական և ծառայությունների ոլորտի կառույցների, տրանսպորտային միջոցների և այլ էներգասպառողների զգալի մասը կենտրոնացած է համայնքներում: Միևնույն ժամանակ, կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում համայնքները կարող են առանձնապես խոցելի լինել ծայրահեղ բնակլիմայական երևույթների և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքների նկատմամբ:

Այս համատեքստում տեղական ինքնակառավարման մարմինները, ունենալով համապատասխան քաղաքական կամք, փորձագիտական ներուժ և ֆինանսական կարողություններ, կարող են էական դերակատարում ունենալ սահմանափակ էներգառեսուրսների արդյունավետ օգտագործման, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության խնդիրների լուծման գործում՝ ոչ միայն տեղական, այլև ազգային մակարդակում:

Այդ նպատակով առաջնահերթ է մշակել ռազմավարական փաստաթուղթ, որը ներառում է՝

- ✓ ընտրված ելակետային տարում համայնքի տարածքում տարբեր ոլորտներում էներգակիրների սպառման արդյունքում ձևավորված ջերմոցային գազերի արտանետումների տարեկան ծավալների գնահատում,
- ✓ համայնքին բնորոշ կլիմայական ռիսկերի և առավել խոցելի ոլորտների բացահայտում,
- ✓ արտանետումների կրճատմանն ուղղված մեղմման միջոցառումներ, ինչպես նաև կլիմայական հարմարվողականության գործողություններ, որոնց հետևողական իրականացումը կապահովի համայնքի դիմադրողականության բարձրացում:

Ռազմավարությունը տեսք է նախատեսի էներգախնայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում, էներգետիկ կառավարման համակարգերի ներդրում, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների լայն կիրառություն, ինչպես նաև համայնքային բնակչության և շահառուների ակտիվ ներգրավում ծրագրի իրականացման գործընթացում:

Գիտակցելով կայուն զարգացման կարևորությունը՝ Թալին համայնքի ավագանին որոշում է կայացրել միանալ ԵՀ «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը: Այս նախաձեռնությունը նպատակ ունի աջակցել համայնքներին կայուն էներգետիկ և կլիմայական քաղաքականությունների մշակման և իրականացման գործում՝ նվազեցնելով հանածո վառելիքներից կախվածությունը, նպաստելով էներգետիկ աղբատության հաղթահարմանը, մեղմելով ծայրահեղ բնակլիմայական երևույթների ազդեցությունը և բարելավելով բնակչության կյանքի որակը:

Միանալով նախաձեռնությանը՝ Թալին համայնքը կամավոր պարտավորություն է ստանձնել մինչև 2030 թվականը նվազեցնել համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումները առնվազն 35%-ով և բարձրացնել համայնքի դիմադրողականությունը կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ:

Սույն Կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիրը հանդիսանում է համայնքի էներգետիկ և կլիմայական զարգացման ռազմավարական փաստաթուղթ: Այն ենթակա է պարբերական վերանայման և լրամշակման՝ տնտեսական և տեխնիկական տեսանկյունից հիմնավորված նոր միջոցառումների ներառմամբ: Վերանայման հիմք կարող են հանդիսանալ նաև մշտադիտարկման գործընթացի արդյունքները:

Կլիմայի փոփոխության մեղմում

Ծրագրի մշակման շրջանակում իրականացվել է էներգասպառման և ջերմոցային գազերի արտանետումների ծավալների համակողմանի գնահատում՝ ընտրված ելակետային տարվա համար: Վերլուծությունն ընդգրկել է համայնքային ենթակայության և բնակելի շենքերը, ավտոմոբիլային տրանսպորտը, ինչպես նաև փողոցային լուսավորության համակարգը:

Ելակետային կադաստրի հաշվարկների համաձայն՝ թիրախային ոլորտներում արձանագրվել է տարեկան 47,361.479 տոննա CO₂ արտանետում, որը հանդիսանում է ծրագրի թիրախային պարտավորությունների հաշվարկման հիմքը:

Արտանետումների բաշխումը ըստ ոլորտների հետևյալն է.

- Բյուջետային հաստատություններ՝ 799.310 տ CO₂/տարի
- Բնակելի սեկտոր՝ 12,935.719 տ CO₂/տարի
- Ավտոմոբիլային տրանսպորտ՝ 31,798.326 տ CO₂/տարի
- Փողոցային լուսավորություն՝ 94.924 տ CO₂/տարի

Ծրագրի շրջանակում գնահատվել է նաև կենցաղային թափոնների ոլորտի ազդեցությունը համայնքի ընդհանուր արտանետումների հաշվեկշռի վրա՝ հաշվի առնելով մեթանի արտանետումների առաջացման պոտենցիալը: Վերլուծությունը ցույց է տվել, որ տվյալ ենթաոլորտը կարող է հանդիսանալ մեթանի աղբյուր և ներառվել է արտանետումների հաշվարկներում:

Մինչև 2030 թվականը համայնքի ստանձնած պարտավորությունը նախատեսում է արտանետումների կրճատում ելակետային մակարդակի առնվազն 35%-ով, ինչը կազմում է շուրջ 16576,5 տոննա CO₂/տարի: Նպատակին հասնելու համար ծրագրում ներառված են ինչպես ցածր ծախսատար, այնպես էլ ներդրումային միջոցառումներ, որոնց համակցված իրականացումը հնարավորություն կտա ապահովել սահմանված թիրախի իրագործումը:

Ծրագրում առաջնահերթ ուշադրություն է դարձվել էներգաարդյունավետության բարձրացմանը, էներգախնայողության խթանմանը և վերականգնվող էներգիայի տեղական արտադրության զարգացմանը: Վերականգնվող էներգիայի կիրառումը կարող է ապահովել արտանետումների կրճատման զգալի բաժինը թիրախային տարում:

Որպես առաջնահերթ վերականգնվող աղբյուր դիտարկվում է արևային էներգիան՝ հաշվի առնելով համայնքի բնակլիմայական պայմանները և տեխնիկական իրագործելիությունը: Միաժամանակ հնարավոր է ուսումնասիրել նաև այլ վերականգնվող աղբյուրների կիրառման հեռանկարները՝ համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորման առկայության դեպքում:

Ընդհանուր առմամբ, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումային միջոցների ծավալը գնահատվում է շուրջ 3.596 մլրդ ՀՀ դրամ:

Կլիմայի փոփոխության հարմարվողականություն

Կլիմայի փոփոխության երկարաժամկետ ազդեցությունները գիտակցելով, և կայուն զարգացման ռազմավարական մոտեցումները կարևորելով, Թալին համայնքը միացել է Եվրոպական Միության «Քաղաքապետերի՝ հանուն կլիմայի և էներգիայի դաշնագիր» նախաձեռնությանը՝ նպատակ ունենալով մշակել և իրականացնել համատեղ էներգետիկ և կլիմայական քաղաքականություն, որը կնպաստի կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականության բարձրացմանը:

Սույն ԿԷԿԳԾ-ն ներկայացնում է Թալին համայնքի էներգետիկ և կլիմայական զարգացման միջինաժամկետ ռազմավարությունը՝ սահմանելով միջոցառումներ, որոնք միաժամանակ ուղղված են արտանետումների կրճատմանը և հարմարվողականության ամրապնդմանը: Ծրագիրը նախատեսվում է պարբերաբար վերանայել և արդիականացնել՝ նոր տեխնոլոգիաների, ֆինանսավորման աղբյուրների և տեղական կարիքների փոփոխությանը համապատասխան:

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Թալին համայնքում կլիմայական հիմնական վտանգներն են երաշտները, ջրի սակավությունը, ծայրահեղ շոգն ու ջերմային ալիքները, կարկուտը, ուշ գարնանային ցրտահարությունները, հրդեհները, հողի էրոզիան և ուժեղ քամիները: Այս վտանգները արդեն իսկ զգալի ազդեցություն են ունենում համայնքի գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների, առողջապահության և ենթակառուցվածքների վրա՝ ձևավորելով միջինից բարձր ռիսկային միջավայր: Միննույն ժամանակ, լայնածավալ ջրհեղեղների և խոշոր փոթորիկների ռիսկը համայնքում գնահատվում է որպես համեմատաբար ցածր:

Վերլուծության արդյունքում գնահատվել է համայնքի խոցելիությունը, ռիսկերը դասակարգվել են ըստ ազդեցության մակարդակի: Այս հիմքով առաջարկվել է հարմարվողականության 51 միջոցառում, այդ թվում՝

- ✓ Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն-20
- ✓ Էներգետիկ համակարգ-5
- ✓ SՏՏ-3
- ✓ Շենքեր և շինություններ-5
- ✓ Ջրի համակարգ-4
- ✓ Տրանսպորտ-4
- ✓ Առողջապահություն-3
- ✓ Զբոսաշրջություն-2
- ✓ Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն-6

Միջոցառումների առաջնահերթությունը և ներդրումային ծավալները պետք է պարզաբանվեն համայնքի կողմից՝ հիմնվելով տեխնիկական և ֆինանսական վերլուծության վրա, ինչպես նաև բնակչության և շահառու խմբերի մասնակցությամբ:

Հավելված 2. Թալին համայնքում հիմնական ոլորտների հնարավոր խոցելիությունը՝ ընտրված կլիմայական վտանգներից, և խոցելի խմբերը

Ջրերի սակավություն					
Խոցելիության ոլորտ	Այո/ Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (Որտեղ՝ 1-թույլ, 2- միջին, 3- բարձր)	Խոցելի խումբ	Այո/ Ոչ
Գյուղատնտեսություն / անատնտեսություն	Այո	Բերքատվության անկում՝ ռոռզման գրաֆիկի անկանոն լինելու փաստով, որը ֆինանսական կորուստներ կարող է առաջացնել	2	Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք	Այո
	Այո	Ստորերկրյա ջրերի պաշարների որոշակի կրճատման հետևանքով մակերեսային ջրերի կրճատում, որը ազդում է ռոռզման ջրի հասանելիության վրա		Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո
	Այո	Պարենային ապահովության խնդիր համայնքում		Բացօթյա պայմաններում աշխատող անձինք	Այո
	Այո	Կանոնավոր ռոռզման ջրի մատակարարման խափանում		Գյուղաբնակ տնային տնտեսություններ	Այո
	Այո	Մենդի վերամշակման արդյունաբերության մթերումների կրճատում			
Ջրի համակարգ	Այո	Բնակչության ջրի մատակարարման անկանոն գրաֆիկի առաջացման վտանգ	2		
	Այո	Հովվացման նպատակով ջրի անբավարար քանակություն, որը հանգեցնում է արդյունաբերական փոշու տարածմանը			
Արդյունաբերություն	Այո	Արդյունաբերական փոշու տարածում, որը բացասաբար է ազդում բնակչության առողջության վրա, ինչը կարող է հետագայում լուրջ խնդիրներ առաջացնել	1		
Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն	Այո	Արդյունաբերական փոշու տարածում համայնքի տարբեր բնակավայրերով մեկ, որը աղտոտում է օդը և ջուրը, ինչպես նաև նստում է հողի, բույսերի, ծառերի վրա:	2		
	Այո	Հողի էրոզիայի խորացման վտանգ, որը հետագայում կազդի շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, ինչպես նաև գյուղատնտեսության վրա			
Զբոսաշրջություն	Այո	Պատշաճ կերպով զբոսաշրջային ծառայությունների մատուցման վտանգ, որի հետևանքով համայնքը կորցնում է իր գրվաչությունը որպես զբոսաշրջային վայր և կարող է հանգեցնել թվաքանակի կրճատում	1		
Հողօգտագործման սլանավորում	Այո	Կանաչ/կանաչապատված տարածքների պահպանման խնդիր	2		

Կարկուտ							
Խոցելիության ոլորտ	Այո/ Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ		
Գյուղատնտեսություն/ անտառտնտեսություն	Այո	Բերքի կորուստ, որը ֆինանսական կորուստներ է առաջացնում հատկապես, եթե բերքը ապահովվագրված չէ և հակակարկտային համակարգի արդյունավետությունը ցածր մակարդակի վրա է գտնվում	2	Կանայք և աղջիկներ	Այո		
	Այո	Ծառերի և թփերի վնասում, որը ազդում է գյուղաբնակ տնային տնտեսությունների հետագա եկամտի մակարդակի վրա, եթե վերջիններս զանազան հիվանդություններ են ձեռքբերում վնասվածքի պատճառով					
	Այո	Մննդի վերամշակման արդյունաբերության մթերումների կրճատում, որը հանգեցնում է գների աճին					
	Այո	Բերքատվության անկում					
	Այո	Ջերմոցների վնասում					
	Այո	Աշխատուժի նկատմամբ պահանջարկի կրճատում համայնքում					
Էներգետիկայի համակարգ	Այո	Էլեկտրահաղորդման գծերի/լարերի վնասում, կայանների/ենթակայանների աշխատանքի խափանում	1	Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո		
	Այո	Էլեկտրաէներգիայի կանոնավոր մատակարարման խափանում					
Շենքերի և շինությունների	Այո	Բնակելի շենքերի, տների տանիքների, պատուհանների վնասում, որը բերում է ֆինանսական վնասների, եթե գույքը ապահովագրված չէ	1			Ոչ բարվոք բնակարանային պայմաններ ունեցող անձինք	Այո
	Այո	Մասնավոր հատվածին պատկանող շենքերի, շինությունների կտուրներինների, և պատուհանների վնասում					
	Այո	Պետական հատվածի ենթակայության տակ գտնվող շենքերի և շինությունների տանիքների և պատուհանների վնասում					
ՏՀՏ	Այո	Կայանների շարքից դուրս գալը	2				
	Այո	Մալուխների վնասում, որի հետևանքով խափանվում է կապը և ինտերնետի ծածկույթը					
Արդյունաբերական փոշի							
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ		

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Առողջապահություն	Այո	Շնչառական, մաշկային հիվանդությունների աճ և աչքի հետ կապված խնդիրներ, որը կարող է հետագայում առողջական լուրջ խնդիրների հանգեցնել	1	Կանայք և աղջիկներ	Այո
	Այո	Տնային տնտեսությունների կողմից առողջության պահպանման վրա ուղղվող ծախսերի աճ ժամանակի ընացքում		Երեխաներ	Այո
	Այո	Մարդու աշխատելու ունակության աստիճանական նվազում		Տարեցներ	Այո
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Բերքի որակի վատացում և անվտանգության խնդիր	1	Հաշմանդամություն ունեցող մարդիկ	Այո
Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն	Այո	Արդյունաբերական փոշու տարածում համայնքի տարբեր բնակավայրերով մեկ, որը աղտոտում է օդը և ջուրը, ինչպես նաև նստում է հողի, բույսերի և ծառերի վրա:	1	Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք	Այո
Էներգետիկայի համակարգ	Այո	Փոշի կարող է նստել արևային պանելների վրա, որի արդյունքում կնվազի էներգաարտադրությունը	1	Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո
Էրոզիա					
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ
Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն	Այո	Ավելի շատ պարարտանյութերի օգտագործումը հանգեցնում է նրան, որ վերջիններս հաճախ հայտնվում են ջրային ուղիներում՝ վնասելով շրջակա միջավայրը	1	Հաշմանդամություն ունեցող մարդիկ	Այո
	Այո	Հողի բերրիության կորուստ, որը կարող է հետագայում անապատացման պատճառ դառնալ		Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք	Այո
	Այո	Կենսամիջավայրի խաթարում, քանի որ բույսերը, կենդանիները և միկրոօրգանիզմները, որոնք սնվում են առողջ հողով, չեն կարող ապահովված լինել համապատասխան սնուցմամբ		Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Բերքատվության անկում, ինչը հանգեցնում է ավելի քիչ բերքի և ֆինանսական կորուստեր	1		
	Այո	Ավելի շատ պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը կարող է առաջացնել սննդամթերքի անվտանգության խնդիր			
	Այո	Սննդի վերամշակման արդյունաբերության մթերումների կրճատում			
Ջերմային ալիքներ/ Շատ բարձր ջերմաստիճան/ծայրահեղ շոգ					
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Առողջապահություն	Այո	Հիվանդությունների աճ ներառյալ սրտանոթային և շնչառական բարդությունները, ինչպես նաև երիկամների հիվանդությունները	2	Կանայք և աղջիկներ	Այո
	Այո	Հատկապես քաղաքում ջերմային ալիքի ազդեցության ուժեղացում, քանի որ բիտումի նման պինդ մակերեսները կարող են պահել ջերմությունը և բարձրացնել ջերմաստիճանը՝ հանգեցնելով «ջերմային կղզու էֆեկտ», որը բացասաբար է ազդում առողջության վրա		Երեխաներ	Այո
	Այո	Ջերմաստիճանի բարձրացման և ուլտրամանուշակագույն ճառագայթման բացասական ազդեցություն		Տարեցներ	Այո
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Ցերեկային բարձր ջերմաստիճանը բացասաբար է անդրադառնում բույսերի աճի վրա	2	Հաշմանդամություն ունեցող մարդիկ	Այո
	Այո	Ջերմային ալիքի ժամանակահատվածը կարող է մեծացնել երաշտի ու հրդեհների վտանգը, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ գյուղատնտեսության վրա		Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք	Այո
Էներգետիկայի համակարգ	Այո	Էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի աճը, ինչը մինևույն ժամանակ կարող է նվազեցնել էլեկտրահաղորդման գծերի էլեկտրաէներգիա փոխանցելու ունակությունը՝ հանգեցնելով էլեկտրամատակարարման հուսալիության հետ կապված խնդիրների և մասնավորաբար անջատումների	1	Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո
Ջրի համակարգ	Այո	Բնակչությանը ջրի մատակարարման անկանոն գրաֆիկի վտանգ՝ պայմանավորված խմելու ջրի նկատմամբ պահանջարկի ավելացմամբ, նաև այն հանգամանքով պայմանավորված, որ ռոտզումն իրականացվում է խմելու ջրով	1		
Ցրտահարություն					
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Ծաղկած ծառերի և նոր ծիլերի վնաս, ինչպես նաև նոր բացված կոկոնների կորուստ, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասում կամ ոչնչացում, ինչը կարող է հանգեցնել եկամտի կորստի, եթե բերքը ապահովվագրված չէ	2	Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո
	Այո	Ջերմոցային տնտեսությունների վառելիքի ծախսի աճ			
	Այո	Արտավայրերում աճը հետաձգվում է, որի արդյունքում կենդանիների կերի խնդիր է առաջանում, որը կարող է անասնբուծության ծավալների անկման հանգեցնել			
	Այո	Պարենային ապահովության խնդիր համայնքում			
	Այո	Բերքատվության անկում			
	Այո	Մնդի վերամշակման արդյունաբերության մթերումների կրճատում			

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

	Այո	Եթե սկսվել է հողի էրոզիա, ապա դա կարող է խորանալ հողի սառեցման և հալեցման արդյունքում			
Հրդեհներ (խտածածկի, անտառային)					
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ
Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն	Այո	Հրդեհների հետևանքով մթնոլորտ են արտանետում ջերմոցային գազեր և պինդ մասնիկներ (զգալի քանակությամբ)	1		
	Այո	Բուսականության ոչնչացում կենսաբազմազանության կորստի վտանգ			
	Այո	Նստվածքների ավելացում ջրային մարմինների/ոռոտների մեջ և ջրի որակի վատթարացում ջրի աղբյուրներում աղտոտիչների պատճառով			
	Այո	Հողի pH-ն փոխվում է՝ ազդելով դրա քիմիական և կենսաբանական հատկությունների վրա:			
	Այո	Հրդեհները կարող են հանգեցնել հողի էրոզիայի խնդրի խորացմանը, ինչպես նաև արձանգրվում է սննդանյութերի (nutrient) պարունակության փոփոխություն			
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Հողի բերրիության նվազում, որը բացասաբար է ազդում նոր ցանքի վրա	1		
	Այո	Մեղվաբուծության ծավալների անկում			
	Այո	Այրված արոտավայրերի պատճառով անասնապահական կերի խնդիր			
	Այո	Բերքի կորուստ			
	Այո	Պարենային ապահովության խնդիր և գների բարձրացման վտանգ			
	Այո	Բերքատվության անկում			
	Այո	Անասանբուծության ծավալների անկում			
Էներգետիկայի համակարգ	Այո	Կարող են վնասվել էլեկտրահաղորդման գծեր, ենթակայանների աշխատանքի խափանում արձանագրվել	1		
	Այո	Կարող է համայնքում հոսանքազրկում լինել/անջատում			
SZS	Այո	Կայանների շարքից դուրս գալը	1		
	Այո	Մալուխների վնասում, որի հետևանքով խափանվում է կապը և ինտերնետի ծածկույթը			
Զբոսաշրջություն	Այո	Համայնքը կարող է կորցնել իր գրավչությունը որպես զբոսաշրջային վայր և կարող է հանգեցնել զբոսաշրջիկների թվաքանակի կրճատման	1		
Երաշտներ					

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Բերքի կորուստ և ծառերի չորացում՝ ոռոգման գրաֆիկի անկանոն լինելու փաստով, որը ֆինանսական կորուստներ է առաջացնում, որի արդյունքում կարող է պահանջվել ծառերի հատում և այլն	1	Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո
	Այո	Արոտավայրերի կորուստ, որը կարող է առաջացնել անասնաբուժության ծավալների անկում		Տեղահանված անձինք/ միգրանտներ	Այո
	Այո	Կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման խափանում		Գյուղաբնակ տնային տնտեսություններ	Այո
	Այո	Պարենային ապահովության խնդիր և գների բարձրացման վտանգ		Քաղաքաբնակ տնային տնտեսություններ	Այո
	Այո	Բերքատվության անկում			
	Այո	Անասնբուժության ծավալների անկում			
	Այո	Մենդի վերամշակման արդյունաբերության մթերումների կրճատում, որը հանգեցնում է գների աճին			
	Այո	Աշխատուժի նկատմամբ պահանջարկի կրճատում			
	Այո	Պարարտանյութերի նկատմամբ պահանջարկի փոփոխություն			
	Այո	Մակերեսային և ստորերկրյա ջրերի պաշարների կրճատում, ինչը ազդում է ոռոգման ջրի հասանելիության վրա			
	Այո	Երաշտը զուգորդված բարձր ջերմաստիճանի հետ, կարող է հանգեցնել վնասատուների և հիվանդությունների տարածման ավելացմանը, որոնք ազդում են մշակաբույսերի, կերերի և անասունների վրա			
	Այո	Երաշտը կարող է հանգեցնել հողերի դեգրադացիայի և անապատացման			
	Այո	Հրդեհների առաջացման վտանգ			
Այո	Մեղվաբուժության ծավալների անկում				
Ջրի համակարգ	Այո	Բնակչության ջրի մատակարարման անկանոն գրաֆիկ կարող է լինել աճող պահանջարկի պատճառով	1		
	Այո	Բնակչության ջրի մատակարարման անկանոն գրաֆիկ կարող է պայմանավորված լինել ոռոգումն խմելու ջրերով իրականացնելու նպատակով			
	Այո	Հովվացման նպատակով ջրի անբավարար քանակություն, որը հանգեցնում է արդյունաբերական փոշու տարածմանը			
	Այո	Պահանջարկի աճով պայմանավորված ոչ պատշաճ որակի ջրի մատակարարում և ջրահեռացման համակարգի վրա լարվածության աճ			

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն	Այո	Ավելի շատ ջրային պաշարների օգտագործում, որ կհանգեցնի ջրային ռեսուրսների սակավության,	1		
	Այո	Հողի բերրիության կորուստ, որը կարող է հետագայում անապատացման պատճառ դառնալ			
	Այո	Կենսամիջավայրի խաթարում, քանի որ բույսերը, կենդանիները և միկրոօրգանիզմները, որոնք սնվում են առողջ հողով, չեն կարող ապահովված լինել համապատասխան սնուցմամբ			
	Այո	Կլիմայական ցիկլերի խաթարում, լանդշաֆտների փոփոխություն			
	Այո	Վնասատուների բացասական ազդեցությունը բուսականության վրա			
Հողօգտագործման սլանավորում	Այո	Կանաչ/կանաչապատված տարածքների պահպանման վտանգ	2		
Ուժեղ քամիներ/ փոթորիկներ/տորնադո					
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Բերքի կորուստ, որը ֆինանսական կորուստներ է առաջացնում, հատկապես եթե բերքը ապահովագրված չէ	1		
	Այո	Ծիլերի վնաս, ծառերի կոտրվել, որը ֆինանսական ծախսեր է պահանջում դրանք նորից տնկելու, այգիները վերականգնելու համար, եթե բերքը ապահովագրված չէ և դա մի քանի տարի կարող է պահանջել			
	Այո	Անասնագույների և սննդամթերքի պահեստավորման կառույցների վնասում և ֆինանսական կորուստներ, եթե դրանք ապահովագրված չեն			
	Այո	Բերքատվության անկում			
Էներգետիկայի համակարգ	Այո	Էլեկտրահաղորդման գծերի/լարերի վնասում, կայանների/ենթակայանների աշխատանքի խափանում	3		
	Այո	Էլեկտրաէներգիայի կանոնավոր մատակարարման խափանում			
Շենքերի և շինությունների	Այո	Բնակելի շենքերի, տների տանիքների, պատուհանների վնասում և այլն, որը բերում է ֆինանսական վնասների եթե գույքը ապահովագրված չէ	2		
	Այո	Մասնավոր հատվածին պատկանող շենքերի, շինությունների կտուրներինների, և պատուհանների վնասում և այլն			
	Այո	Պետական հատվածի ենթակայության տակ գտնվող շենքերի և շինությունների տանիքների վնասում և այլն			

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Կրթություն	Այո	Նախակրթական, կրթական հաստատությունների տանիքների վնասում և այլն, ինչը կարող է խաթարել կանոնավոր դասավանդման պրոցեսը	1		
SZS	Այո	Կայանների շարքից դուրս գալը	2		
	Այո	Մալուխների վնասում, որի հետևանքով խափանվում է կապը և ինտերնետի ծածկույթը			
Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն	Այո	Արդյունաբերական փոշու տարածում համայնքի տարբեր բնակավայրերով մեկ, որը աղտոտում է օդը և ջուրը, ինչպես նաև նստում է հողի, բույսերի և ծառերի վրա:	1		
Հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/Սելավներ					
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ
Գյուղատնտեսություն / անտառտնտեսություն	Այո	Բերքի կորուստ, դաշտերի ողողման պատճառով որը ֆինանսական կորուստներ է առաջացնում հատկապես՝ եթե բերքը ապահովվագրված չէ	1	Ցածր եկամտի մակարդակ ունեցող տնային տնտեսություններ	Այո
	Այո	Արոքատավայրերին հասցված վնաս, որը կարող է հանգեցնել կենդանիների կերի խնդիր			
Շենքերի և շինությունների	Այո	Շենքերի/կառույցների հիմքերի խալիսման վտանգ, որը կպահանջի լրացուցիչ ծախսեր, եթե գույքը ապահովագրված չէ հատկապես տնային տնտեսությունների դեպքում	1		
	Այո	Բնակելի շենքերի, տների տանիքների վնասում, որը բերում է ֆինանսական վնասների, եթե գույքը ապահովագրված չէ			
	Այո	Մասնավոր հատվածին պատկանող շենքերի, շինությունների կտուրներին/տանիքինների վնասում			
Ամրույ/կայծակ					
Խոցելիության ոլորտ	Այո/Ոչ	Ազդեցություն	Ազդեցության մակարդակ (1-3)	Խոցելի խումբ	Այո/Ոչ
Էներգետիկայի համակարգ	Այո	Էլեկտրահաղորդման գծերի/լարերի վնասում, կայանների/էնթալպայանների աշխատանքի խափանում	3		
	Այո	Էլեկտրաէներգիայի կանոնավոր մատակարարման խափանում			
SZS	Այո	Կայանների շարքից դուրս գալը	3		
	Այո	Մալուխների վնասում, որի հետևանքով խափանվում է կապը և ինտերնետի ծածկույթը			

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

Հավելված 3. Թալին համայնքի հարամարվողականության միջոցառումները

Վտանգ	Հարմարվողականությանն ուղղված միջոցառում	Ժամանակահատված կարճաժամկետ միջնաժամկետ երկարաժամկետ	Պատասխանատու մարմիններ	Հնարավոր ֆինանսավորում	Ակնկալվող արդյունք
Գյուղատնտեսություն/անտառտնտեսություն					
<p>Երաշտ, կարկուտ, ցրտահարություն, ջերմային ալիքներ/շատ բարձր ջերմաստիճաններ, ջրերի սակավություն, արդյունաբերական փոշի, էրոզիա, հրդեհներ, ուժեղ քամիներ/փոթորիկներ, հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/Մելավներ</p>	<p>Վերականգնել/վերակառուցել/վերանորոգել 15-20 կմ ոռոգման կանալները Կառուցել 4 անձրևաջրերի կուտակման ավազաններ, Տեղադրել բարձր արդյունավետությամբ և ծածկույթով 3 էկո-կայուն հակակարկտային կայան Աջակցություն 250 կաթիլային համակարգերի տրամադրման նպատակով և վերապատրաստել 250 գյուղացիական տնտեսություն, Աջակցություն կարկտապաշտպան և արևապաշտպան համակարգերի տրամադրմանը 300 գյուղացիական տնտեսություններին Աջակցություն 250 գյուղացիական տնտեսության ապահովագրության ստացման գործում և իրագրեկման միջոցառումների կազմակերպում Աջակցություն երաշտադիմացկուն և ցրտադիմացկուն 5 մշակաբույսերի անցմանը սերմերի տրամադրման միջոցով, Աջակցություն 200 գյուղացիական տնային տնտեսություններին ցանքաշրջանառություն և ցանքածածկ (mulching) իրականացնելու համար՝ հողի խոնավությունը պահպանելու համար և վերապատրաստում Համայնքային հավելվածի ստեղծում վաղաժամ ազդարարելու համար իրագրեկելու տնային տնտեսություններին վտանգների մասին</p>	<p>• 0–5 տարի . վերականգնել 15-20 կմ կանալներ/ ջրանցքներ և 4 ավազան, 3 էկո-կայուն հակակարկտային կայան, համայնքային հավելված 3 խելացի անասնագու 3 խելացի ջերմոց արոտավայրերի կառավարման համակարգի ներդրում, ցրտահարությունից պաշտպանող սառցադիմացկուն 300 ծածկեր, քամուց պաշտպանող 300 ծածկեր, հակահրդեհային 2 գոտի, 10-15 կմ մաքրված հեղեղատար համակարգ 3 կարգավորիչ արգելապատնեշներ`</p> <p>• 6–14 տարի . ընդլայնել ոռոգման ծածկույթը մինչև 40 % ընդլայնել արյունավետ հակակարկտային համակարգի ծածկույթը 40%: դաշտապաշտպան անտառաշերտերի աճ 15-20 կմ (shelterbelts) ավելի քան 15-20 հա մակերեսով բազմամյա</p>	<p>Թալինի համայնքապետարան, ՀՀ ՏԿԷՆ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, գյուղացիական տնտեսություններ</p>	<p>Թալինի համայնքապետարան, ԵՄ Mission Adaptation (P2R), IFAD, WB/GEF, ՀՀ պետական բյուջե/ սուբվենցիոն ծրագրեր, GIZ/KfW, Ջրային կոմիտե, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>0-5 տարի Ջրի կորստի կրճատում 20%, բերքի կորստի կրճատում 15%. ապահովագրական ծածկույթի ավելացում 15%, Բնակչության իրագրեկում 90% Համայնքում անասնաբույսերի մեջ խելացի գոմերի տեսակարար կշիռ 10% Համայնքում գյուղատնտեսության մեջ խելացի ջերմոցների տեսակարար կշիռ 10% Բերքատվության աճ 15-20%-ով Արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացում 15-20%</p> <p>6-14 տարի Ջրի կորստի կրճատում 40%, բերքի կորստի կրճատում 40% ապահովագրական ծածկույթի ավելացում 35 %, Համայնքում անասնաբույսերի մեջ</p>

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

	<p>Աջակցել համայնքում նոր 3 խելացի անասնագոմերի կառուցմանը Աջակցել համայնքում նոր 3 խելացի ջերմոցների կառուցմանը Դաշտապաշտպան անտառաշերտերի աճ 15-20կմ (shelterbelts) Արոտավայրերի կառավարման համակարգի ներդրում և անցում անասունների այլընտրանքային արածեցման (rotational grazing) Ավելի քան 15-20 հա մակերեսով բազմամյա տնկարկների վերականգնում (perennial cover restoration) Աջակցություն ցրտահարությունից պաշտպանող սառցադիմացկուն 300 ծածկերի տրամադրմանը գյուղացիական տնտեսություններին Աջակցություն քամուց պաշտպանող 300 ծածկերի տրամադրմանը ամենախոցելի գյուղացիական տնտեսություններին Հակահրդեհային 2 գոտի խոցելի տարածքի կտրվածքով Ամեն տարի մաքրել առնվազն 10-15 կմ հեղեղատար համակարգ Կառուցել/տեղադրել սելավա-կարգավորիչ արգելապատնեշներ՝ առնվազն 3 և ավել</p>	<p>տնկարկների վերականգնում, • 15+ տարի. ամբողջովին անցում կատարել խելացի ոռոգման ցանցին: Ամբողջովին անցում կատարել էկո-կայուն հակակարկտային կայաններին</p>			<p>խելացի գոմերի տեսակարար կշիռ 40% Համայնքում գյուղատնտեսության մեջ խելացի ջերմոցների տեսակարար կշիռ 40% Բերքատվության աճ 35-40%-ով Արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացում 50% 15+ տարի Ջրի կորստի կրճատում 90 %, բերքի կորստի կրճատում 90%: ապահովագրական ծածկույթի ավելացում 90 % Համայնքում անասնաբուծության մեջ խելացի գոմերի տեսակարար կշիռ 80% Համայնքում գյուղատնտեսության մեջ խելացի ջերմոցների տեսակարար կշիռ 70% Բերքատվության աճ 60-80%-ով Արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացում 80%</p>
--	--	--	--	--	--

Էներգետիկա					
<p>Ջերմային ալիքներ/ Շատ բարձր ջերմաստիճան/ ծայրահեղ շոգ, արդյունաբերական փոշի, ուժեղ քամիներ/թուփոռիկներ,</p>	<p>2 կլիմայական ազդեցություններից պաշտպանված ենթակայաններ, որոնք ապահովում են էլեկտրաէներգիայի մատակարարումը բնակելի շենքերին, տներին դրանց միացումը</p>	<p>0-5 տարի 2 կլիմայական ազդեցություններից պաշտպանված ենթակայան Ջրամեկուսացված 5 ենթակայաններ և 10</p>	<p>Համայնքապետարան, ՀԷՑ, ԲԷՑ, ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ ՇՄՆ, ՀՄԿՀ</p>	<p>WB/GEF, ՀՀ պետական բուջե/սուբվենցիոն խրազիր, ADB, EIB</p>	<p>0-5 տարի գերբեռնվածության նվազում և անջատումների քանակի կրճատում 15% գյուղաբնակ վայրերում հուսալիության աճ 35%</p>

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

կայծակ/ամպրոպ, հրդեհներ, կարկուտ	5 ենթակայանների և 10 տրանսֆորմատորային խցիկների կառուցում/ ջրամեկուսացում 25 կմ ցածր լարման գծերը վերափոխել մեկուսացված մալուխների Գերլարման սահմանափակիչների տեղադրում տները սնուցող գծերի վրա, ինչպես նաև հողանցման բարելավում 5 գյուղական բնակավայրերի ենթակայաններում և տրանսֆորմատորային խցիկներում Բնակելի տարածքները սնուցող 25 կմ օդային գծերի փոխարինումը հակասառեցման լարերով, հենարանների ամպրապնդում և բնակելի շենքերի համար մեկուսացված էլեկտրահաղորդման գծերի անցկացում	տրանսֆորմատորային խցիկների կառուցում/ջրամեկուսացում Գերլարման սահմանափակիչներն հողանցման բարելավում 5 գյուղական բնակավայրերի ենթակայաններում և տրանսֆորմատորային խցիկներում 25 կմ հակասառեցման լարերով օդային գծեր և մեկուսացված էլեկտրահաղորդման գծերի անցկացում դեպի շենքեր, տներ 25 կմ ցածր լարման գծերի վերափոխում մեկուսացված մալուխների 6-14 տարի ազդեցություններից պաշտպանված ենթակայանների քանակի աճ 25% և մեկուսացված մալուխների` 20% 15+ տարի Ազդեցություններից պաշտպանված ենթակայանների քանակի աճ 70% և մեկուսացված մալուխների` 70%			6-14 տարի գերբեռնվածության նվազում և անջատումների քանակի կրճատում 40% գյուղաբնակ վայրերում հուսալիության աճ 70% 15+ տարի գերբեռնվածության նվազում և անջատումների քանակի կրճատում 80% գյուղաբնակ վայրերում հուսալիության աճ 90%
----------------------------------	---	--	--	--	---

S2S

Հրդեհներ (խոտածածկի, անտառային), ջերմային ալիքներ/ շատ բարձր ջերմաստիճան/ծայրահեղ շոգ, ջրհեղեղ, ամպրոպ/կայծակ, ուժեղ	20 կմ մալուխները փոխարինել չհրկիզվող մալուխային պատյաններով և տեղադրել ջերմաստիճանի և ծխի տվիչներ Ամրացնել ալեհավաքային բումերներ` առնվազն 20-25 հատ	• 0–5 տարի 20 կմ չհրկիզվող պատյաններով մալուխներ և տվիչներ առնվազն 20-25 հատ ալեհավաքային բումերներ	Թալինի համայնքապետարան, ՀՀ ԲՏՍ, ՀԾԿՀ, Տելեկոմ Արմենիա ԲԲԸ, Վիվա Արմենիա	Տելեկոմ Արմենիա ԲԲԸ, Վիվա Արմենիա ՓԲԸ, Սcom ՓԲԸ և այլ ընկերություններ	• 0–5 տարի ինտերնետ ծածկույթի խափանումների կրճատում 25% • 6–14 տարի
--	--	---	---	---	--

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

<p>քամիներ/ փոթորիկներ/տորնադո, կակուտ</p>	<p>Պահուստային օպտիկական ուղիներ ավելի քան 2 երթուղու վրա և հզորության ավտոմատ վերուղեգրում (auto failover)</p>	<p>2 երթուղու վրա պահուստային օպտիկական ուղիներ և հզորության ավտոմատ վերուղեգրում</p> <ul style="list-style-type: none"> • 6-14 տարի Համայնքում մինչ 40% անհրաժեշտ մալուխների փոխարինում և ծածկույթի հուսալիության աճ 40-50% • 15+ տարի Ամբողջովին փոխարինված մալուխներ ծածկույթի հուսալիության աճ 80-90% 	<p>ՓԲԸ, Ucom ՓԲԸ և այլ ընկերություններ</p>	<p>ՀՀ ԲՏԱ նախարարություն, ՀՀ բյուջե/ սուբվենցիոն ծրագրեր</p>	<p>ինտերնետ ծածկույթի խափանումների կրճատում 50%</p> <ul style="list-style-type: none"> • 15+ տարի ինտերնետ ծածկույթի խափանումների կրճատում 90%
--	---	---	--	--	---

Շենքեր շինություններ

<p>Հորդառատ անձրևի հետևանքով ջրհեղեղ/ սելավներ, ուժեղ քամիներ/ փոթորիկներ/ տորնադո, կարկուտ, ջերմային ալիքներ/ շատ բարձր ջերմաստիճան/ ծայրահեղ շոգ</p>	<p>Պիլոտային ծրագրի միջոցով տեղադրել հողմակայուն խարխիսային համակարգեր և փոթորիկների կապեր 20 բնակելի շենքերի և/կամ տների տանիքների վրա, որոնք համայնքապետարանի կողմից կհամարվեն ամենախոցելիև որպեսզի դիմակայեն քամու պոռթկումներին, որը կգերազանցի նույնիսկ 100 կմ/ժ արա- գությունը՝ նվազեցնելով տանիքի վնասվելու ռիսկը: Պիլոտային ծրագրի միջոցով իրականացնել ջրհեղեղից պաշտպա- նություն 20 բնակելի շենքերի/տների համար, որոնք համայնքապետարանի կողմից կհամարվեն ամենախոցելիև տեղադրելով ստուգիչ փականներ (backwater valves) և հիմքի անջրանցիկ ծածկույթ և այլն Պիլոտային ծրագրի միջոցով փոխարինել 10 բնակելի շենքերի/տների տանիքը կարկուտի հանդեպ դիմացկուն սալիկներով, որոնք համայնքապետա- րանի կողմից կհամարվեն ամենախոցելիև Պիլոտային ծրագրի միջոցով անցնել հատուկ ծածկույթի (cool-roof) և</p>	<p>0-5 տարի 20 բնակելի շենքերի/տների ամրացված տանիքներ Ջրհեղեղից պաշտպանված 20 բնակելի շենքեր/տներ Կարկուտի հանդեպ դիմացկուն սալիկներով 10 բնակելի շենքերի/տների տանիք 20 բնակելի շենքեր/ տներ ջերմամեկուսացված պատերով և ծածկույթով (cool-roof) 10 տների/ բազմաբնակարան շենքերի տանիքների ամրացում բեռներով և տաքացվող ջրատար համակարգերի տեղադրմամբ</p> <p>6-14 տարի Տանիքների հուսալիության աճ 50%-ով Ջրհեղեղից պաշտպանված բնակելի շենքեր/տների</p>	<p>Համանքապետարան , մասնավոր հատված</p>	<p>Համայնքապետարան , Համայնք-մասնավոր հատված համագործակցությու ն, EU Resilience Fund, ՀՀ պետական բյուջե/սուբվենցիոն ծրագրեր, ADB resilience bonds և այլն</p>	<p>0-5 տարի Տանիքների վնասվելու դեպքերի նվազում 15% Ջրհեղեղից հասցված վնասների դեպքերի կրճատում 20%</p> <p>6-14 տարի Տանիքների վնասվելու դեպքերի նվազում 50% Ջրհեղեղից հասցված վնասների դեպքերի կրճատում 60%</p> <p>15+ տարի Տանիքների վնասվելու դեպքերի նվազում 90% Ջրհեղեղից հասցված վնասների դեպքերի կրճատում 90%</p>
--	--	--	---	--	--

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

	<p>իրականացնել պատերի ջերմամեկուսացման 20 բազմաբնակարան շենքերի/ տների համար</p> <p>Ամրացնել 10 տների/բազմաբնակարան շենքերի տանիքները համապատասխան ծավալի բեռներով և ավելացնել տաքացվող ջրատար համակարգեր կոուրների նվաստ նվազեցնելու համար</p>	<p>քանակի աճ 30%-ով</p> <p>Ջերմապաշտպան տանիքներով և ջերմամեկուսացված պատերով շենքերի/տների քանակի աճ 35%</p> <p>15+ տարի</p> <p>Տանիքների հուսալիության աճ 90%-ով</p> <p>Ջրհեղեղից պաշտպանված բնակելի շենքեր/տների քանակի աճ 80%-ով</p> <p>Ջերմապաշտպան տանիքներով և ջերմամեկուսացված պատերով շենքերի/տների քանակի աճ 90%</p>			
Ջրի համակարգ					
<p>Երաշտ, ջերմային ալիքներ/ շատ բարձր ջերմաստիճան/ծայրահեղ շոգ, ջրերի սակավություն</p>	<p>Տեղադրել 3 շարժական պոմպային միավորներ (≥ 300 լ/վ յուրաքանչյուրը), որոնք նախապես կլինեն միացված արագ միացման դիտահորերով 3 առավելագույն ռիսկային հանգույցներում, սակայն այս դեպքում տազնապի ազդանշանից սկսած ժամանակը պետք է լինի ոչ ավելի, քան 60 րոպե:</p> <p>Տեղադրել 3000մ^3 խմելու ջրի առնվազն 2 բաք ամենախոցելի բնակավայրերում և խելացի ճնշման հաշվիչներ 2 բարձր ճնշման գոտիներում՝ ջրի ծախսը/կորուստը նվազեցնելու և 48 ժամյա վթարային/ արտակարգ իրավիճակով պայմանավորված ջրամատակարարում ապահովելու համար</p> <p>Վերանորոգել/կառուցել և հերմետիկացնել ջրամատակարարման հիմնական խողովակաշարերի առնվազն 15-20կմ և ավել</p>	<p>0-5 տարի</p> <p>պոմպերի 3 հավաքածու առնվազն 2 3000մ^3 խմելու ջրի բաք</p> <p>հերմետիկ վերնորոգված/կառուցված ջրամատակարարման հիմնական խողովակաշարերի առնվազն 15-20կմ</p> <p>Մաքրված/վերակառուցված/ սելավատարների առնվազն 10 կմ</p> <p>6-14 տարի</p> <p>Ջրահեռացման արդյունավետության աճ 50%</p> <p>Ջրի հասանելիության աճ 50%</p> <p>15+ տարի</p>	<p>Համայնքապետարան, ՀՀ ՏԳԵՆ</p>	<p>Համայնքապետարան, ՀՀ պետական բյուջե/ սուբվենցիոն ծրագրեր. WB, ADB, EIB</p>	<p>0-5 տարի</p> <p>Ջրերի հեռացման արագության աճ 20 և ավելի տոկոս</p> <p>Անխափան ջրամատակարարման աճ 48 ժամով 20-30%</p> <p>6-14 տարի</p> <p>Ջրերի հեռացման արագության աճ 50 և ավելի տոկոս</p> <p>Անխափան ջրամատակարարման աճ 48 ժամով 50%</p> <p>15+ տարի</p> <p>Ջրերի հեռացման արագության աճ 90 և ավելի տոկոս</p>

	Մաքրել/վերակառուցել առնվազն 10 կմ սելավատարների գծեր, որ պարբերաբար կարվի	Ջրահեռացման արդյունավետության աճ 90% Ջրի հասանելիության աճ 90%			Անխափան ջրամատակարարման աճ 48 ժամով 90%
Տրանսպարտ					
Ջրհեղեղ/ուժեղ անձրևներ, էրոզիա, հողի դեգրադացիա	Վերակառուցել Թալինի 5 կմ հեղեղումների ենթակա ճանապարհները՝ ավելացնելով կողային դրենաժային խրամատներ, ջրատարներ և ջրհեղեղների հեռացման սարքեր, ինչը թույլ կտա ավելի քան 30-40% - ով կրճատել հեղեղումների հետևանքով առաջացած ճանապարհների փակվելը 2 այլընտրանքային երթուղու կառուցում, որոնք կմիացնեն են Թալինի բուժ հաստատությունը 2 խոշոր բնակավայրերի հետ Առնվազն ձևամաքող 1 նոր մեքենայի ձեռքբերում PMB տեսակի ասֆալտի կիրառում ամենախոցելի հատված համարվող առնվազն 10-15 կմ	0-5 տարի Վերանորոգած 5 կմ հեղեղումների ենթակա ճանապարհներ 2 այլընտրանքային երթուղու կառուցում 1 նոր ձևամաքող մեքենա PMB տեսակի ասֆալտ ամենախոցելի հատվածում՝ առնվազն 10-15 կմ 6-14 տարի 2 այլընտրանքային երթուղու կառուցում Կլիմայական վտանգների ենթակա անացանելի ճանապարհների կրճատում 50 % Փոսերի կրկնության հավանականության կրճատում ավելի քան 40% - ով 15+ տարի Կլիմայական վտանգների ենթակա անացանելի ճանապարհների կրճատում 90 % Փոսերի կրկնության հավանականության կրճատում ավելի քան 90% - ով	Համայնքապետարան, ՀՀ ՏԿԵՆ	Համայնքապետարան , ՀՀ պետական բյուջե/սուբվենցիոն ծրագրեր ADB, WB/GCF, EIB	0-5 տարի Կլիմայական աղետի դեպքում անցանելի ճահապարհահատվածի աճ 30-40% 6-14 տարի Կլիմայական աղետի դեպքում անցանելի ճահապարհահատվածի աճ 60-70% 15+ տարի Կլիմայական աղետի դեպքում անցանելի ճահապարհահատվածի աճ 90%
Առողջապահություն					
Շատ բարձր ջերմաստիճան/ծայրահեղ	Հեռաբժշկության օգտագործում՝ Թալինի ԲԿ-ի և ամբուլատորիաների միջև վերջինիս դիմած անձնաց	0-5 տարի Հեռաբժշկության ներդրում Թալինի ԿԲ-ում	Համայնքապետարան	Համայնքապետարան , ՀՀ պետական	0-5 տարի Կլիմայական աղետի դեպքում ամբուլատորիա

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

<p>շոգ, արդյունաբերական փոշի</p>	<p>համապատասխան բուժումը տրամադրելու համար, որվքեր դիմել են որպես կլիմայական վտանգների հետքանք Համայնքային 3 հովացման կենտրոններ, այն է՝ տեղական մշակութային կենտրոնների առանձնացված տարածքներում կահավորել որպես ապաստարաններ նրանց համար, ովքեր զգայուն են կլիմայի հետ կապված առողջական խնդիրների նկատմամբ (ջերմային հարված և այլն): Պիլոտային եղանակով կանաչ 3-5 կենտրոնների ստեղծում շոգ եղանակին հովացման նպատակով</p>	<p>3 Հովացման կենտրոններ բնակավայրերի մշակութային կենտրոններում 3-5 կանաչ կենտրոններ 6-14 տարի Գյուղական բնակավայրերում բուժ հաստատությունների կողմից մատուցվող բուժօգնության ընդգրկվածության աճ 100% Շոգ եղանակով պայմանավորված քրոնիկ հիվանդություններ ունեցող անձնաց մոտ յադ հիվանդությունը հաղթահարելու ավելի բարձր կարողություն 50% 15+ տարի Շոգ եղանակով պայմանավորված քրոնիկ հիվանդություններ ունեցող անձնաց մոտ այդ հիվանդությունը հաղթահարելու ավելի բարձր կարողություն 80%</p>		<p>բյուջե/սուբվենցիոն ծրագրեր</p>	<p>դիմաձ մարդկանց համապատասխան ցուցաբերած բուժօգնության արդյունավետության աճ 40% Հովացման/պատասպարվելու և հնարավորությունների աճ 30% 6-14 տարի Կլիմայական աղետի դեպքում ամբուլատորիա դիմաձ մարդկանց համապատասխան ցուցաբերած բուժօգնության արդյունավետության աճ 100% Հովացման/պատասպարվելու և հնարավորությունների աճ 80% 15+ տարի Հովացման/պատասպարվելու և հնարավորությունների աճ 100%</p>
----------------------------------	---	--	--	-----------------------------------	---

Զբոսաշրջություն

<p>Հրդեհներ (խոտածածկի, անտառային), ջրերի սակավություն</p>	<p>Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի համար նախատեսված 3-5 ուղղու (trail) ստեղծում 3-5 գյուղացիական բնակավայրի կտրվածքով, որը ներառելու է գյուղաբնակ վայրերում ստեղծած բարիքների սպառում Բնապահպանական կրթական արահետների և էկո-ուղեցույցների ստեղծում, որը հիմնականում կներգրավի ինչպես Երևանի վաշակերտների, ուսանողների խմբեր, ինչպես նաև</p>	<p>• 0–5 տարի Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի համար նախատեսված 3-5 ուղղի • 6–14 տարի Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի համար նախատեսված ուղիների, արահետների քանակի աճ</p>	<p>Համայնքապետարան, ՀՀ ԷՆ, տուր-օպերատորներ/զբոսաշրջային ընկերություններ</p>	<p>Համայնքապետարան, ՀՀ ԷՆ, ՀՀ կառավարություն/սուբվենցիոն ծրագրեր, WB/ADB, KfW</p>	<p>• 0–5 տարի Զբոսաշրջիկների թվաքանակի աճ 15-20%, որի հիմնական այցելության նպատակն է Էկոտուրզմը և ագրոտուրիզմը, զուգահեռ Հատիս լեռան վրա տեղադրված արձանով պայմանավորված հոսքի ավելացմանը</p>
--	---	---	--	---	--

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

	արշավախմբեր Երևանի դպրոցների, ուսումնական հաստատությունների և տուր օպերատորների հետ համագործակցելով	40-60%, որը նաև կներառի արկածային տուրիզմի էլեմենտներ և այլն և կներառի մի շարք բնակավայրեր • 15+տարի Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի համար նախատեսված ուղիների և արահետների քանակի աճ 80%, որը նաև կներառի այլ տեսակի տուրիզմի էլեմենտներ և ևս կներառի մի շարք բնակավայրեր			• 6-14 տարի Զբոսաշրջիկների թվաքանակի աճ 40-60%, որի հիմնական այցելության նպատակն է էկոտուրզմը և ագրոտուրիզմը • 15+ տարի Զբոսաշրջիկների թվաքանակի աճ 80-90%, որի հիմնական այցելության նպատակն է էկոտուրզմը և ագրոտուրիզմը
--	---	---	--	--	---

Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն

Էրոզիա, շոգ, հրդեհներ, երաշտ, ջրերի սակավություն, արդյունաբերական փոշի, ուժեղ քամիներ/փոթորիկներ	Կանաչ ենթակառուցվածքների ընդլայնում՝ տնկելով առնվազն 1200-1500 ծառ և ստեղծելով 3-4 կմ միջանցքներ/պաշտպանիչ շերտեր՝ Վերականգնել հրդեհներից տուժած կամ կամ ռիսկային համարվող առնվազն 3 հա, ստեղծելով առնվազն 1 էկոլոգիական բուֆերային գոտի Հողի էրոզիայի դեմ պայքարի նպատակով ավելի քան 10-15 հա էրոզիայի ենթակա հողերի վերականգնում Գյուղատնտեսական հողերում հողամշակման տեխնոլոգիաների ներդրում (no-till, mulch) Զրային կենսամիջավայրերի պաշտպանություն ծրագրի մշակում և ներդրում ՀՀ կառավարության և մարզպետարանի հետ համատեղ օրենսդրական նախագծի մշակում պետական հատված-արդյունաբերական ընկերություններ համագործակցության շրջանակում պարտադիր տարեկան կանաչապատման աշխատանքների վերաբերյալ հանքավայրերի մոտակայքում	• 0-5 տարի 1200-1500 ծառ 3-4 կմ միջանցքներ/պաշտպանիչ շերտեր հրդեհներից տուժած 3 հա վերականգնում 1 էկոլոգիական բուֆերային գոտու ստեղծում ավելի քան 10-15 հա էրոզիայի ենթակա հողերի վերականգնում Հողամշակման տեխնոլոգիաների ներդրում Զրային կենսամիջավայրերի պաշտպանություն ծրագրի մշակում պետական հատված-արդյունաբերական ընկերություններ համագործակցության օրենսդրական նախագծի պարտաստում պարտադիր տարեկան կանաչապատման	Համայնքապետարան , ՀՀ ՇՄՆ, Արագածոտնի մարզպետարան, ՀՀ կառավարություն	Համայնքապետարան , ՀՀ ՇՄՆ, ՀՀ ԷՆ, ՀՀ կառավարություն/տուրվենցիոն ծրագրեր, FAO/IFAD, WB/ADB, KfW, Թալինի համայնքում գործող արդյունաբերական ծրագրեր	• 0-5 տարի Կանաչ ենթակառուցվածքների աճ 30-40% Էկոհամակարգի վերականգնում 30% • 6-14 տարի Կանաչ ենթակառուցվածքների աճ 60-70% Էկոհամակարգի վերականգնում 50-60% Հողի դեգրադացիայի նավագում 30% • 15+ տարի Կանաչ ենթակառուցվածքների աճ 80-85% Էկոհամակարգի վերականգնում 75-85%
--	--	---	---	---	--

Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիր

		<p>աշխատանքների վերաբերյալ հանքավայրերի մոտակայքում</p> <p>• 6-14 տարի Կանաչ ենթակառուցվածքների, բուֆերային գոտիների ընդլայնում և դեգրադացված հողատարացծի կրճատում 40-60%</p> <p>• 15+ տարի Կանաչ ենթակառուցվածքների, բուֆերային գոտիների ընդլայնում և դեգրադացված հողատարացծի կրճատում 80%</p>			
--	--	---	--	--	--



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գալի - 1, Հևո. 060-75-77-87
Էլ. փոստ malin@arm.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<31>> մարտի 2026 թվական N 42 -Ա

**ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Թալին համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 52-Ա որոշումը.

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիրը (ԿԷԿԳԾ)՝ համաձայն կից հավելվածի:
2. Թալին համայնքի ղեկավարին՝ ապահովել ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը և կազմակերպել ծրագրի իրականացման ընթացքի մշտադիտարկումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 22	Դեմ-0	Չեռնպահ-2
1. Տավրոս Մափեյան		1.Դավիթ Մանուկյան
2. Սերգե Մկրտչյան		2. Գագիկ Ավետիսյան
3. Բաբկեն Պողոսյան		
4. Արման Կարապետյան		
5. Սարգիս Գրիգորյան		
6. Արտակ Հովհաննիսյան		
7. Գեղամ Ղազարյան		
8. Ավետիս Մինասյան		
9. Հարություն Կարապետյան		
10. Արմեն Ծառուկյան		
11. Նելլի Մարգարյան		
12. Գեղամ Սարգսյան		
13. Արուսիկ Կարդանյան		
14. Նարեկ Գրիգորյան		

15. Միեր Մարգարյան
16. Արմեն Գրիգորյան
17. Հայկ Սահարյան
18. Մուցական Մուցականյան
19. Անի Միկոյան
20. Սարգիս Մուրադյան
21. Վահե Եղիազարյան
22. Կարեն Գրիգորյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆ